ородская
иблиотека

Ի ԳՐՈՑ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
Գ. Գ. Ալլամեանց.
Թ. 188, Գին 2 դ.

N 60

21 28

ՀԱՅԱՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՑ
ԿՐԻՍՏՈՍԱԿԵՐՏ
ԿԱՌՍ ԱԹՈՌՈՑ ՀԱՅՈՑ ։
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄՈՒՏՔԱՎՈՐ է 1961 թ.
281.6
Հ

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ ԿՐԻՍՏՈՍԱԿԵՐՏ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՀԱՅՈՑ

ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Տպագրեալ յաղագս համաշգային ծաղնութեանց։

Երկրորդ Տպագրութիւն

№ 799
№ 5000
Библиотека Вологодской области

1853 ՈՒՅՐ

Ի ՏՓԽԻՍ։

Ի Տպարանի Ներսիսեան Դպրոցի Հայոց ընծայեցելոյ յամենուական Աղայ Գէորգայ Աբծրատեւոյ։

ՑՈՒՆԴԱՄԻՆՏԻԼ

Երկեցարուք զԱնուն և պահպանեցէք զնա։
Սաղ՛ խէ։ 13։

A II/5730

ՆԱԽԱՔԱՂԵՑՈՒԹԻՒՆ։

Ի հասարակ ամենեցուն որոց բաւականք են ներ-
գործութիւնք մատաց՝ ախորժելի են ծանօթա-
թիւնք 'ի հասարակի, իսկ որոց զոյին նոքին յատկացեալ
սեպհական անձին առանձին՝ ոչ միայն ախորժական այլ-
այլ թէ ըղձալի են յաւէրժ. վասն զի են գաղար և հան-
գիստ ծփանաց մտաց. վասն զի են նախաղուշակք բարեաց և
չարեաց. վասն զի են հայելի ընտրութեանց և հանդիսաբեր
հանճարոյ. վասն զի են գործադիրք նեբբին և արտաքին կա-
րողութեանց, և նոխաշաւիղ կամ առաջնորդ ամենեցուն նոցա
առ ընտրելագոյնն և արժանաւորն։

Ապաքէն տեղի իմման Բանին Աստուծոյ և յատ-
կական պարծանաց ամենայն ազգի Հայոց՝ երիտասարդս հբ-
բայեցի Աթոռ մեծ Բահանայապետութեան արքայն Գրի-
գորի ուսաւորչի և զարդ հայրենեաց Հայաստանի՝ տիեզերահռ-
չակ Տաճար վառեաց Տեառն՝ ԿԱԹՈՂԻԿԷ ԻՍԿ ԷՋՄԻԱ-
ԾՆԻ գոլով պատկանեալ անդրանատպս եմ լրութեան
հասարակութեան միաբանելոց 'ի մի յօդ հարազատութեան
արեան՝ հղօրաց ամբարձելոց քաջադօսի դիմազրաւ վն հանա-
նախնւոյն մեր Հայկայ, և ուղղակիս Պարգապետութեան
հօրն հաւատոյ Պարթևաղեանն Աստուածազգեաց նահատակի՝
որք ընդ ոլորտս ծաղաց երկրի են տարածեալք, պարտուպատ-
շաճ դաշնակցութեամբ՝ յիւրաքանչիւր պատահմանս բարեաց
և չարեաց վերաբերելոց նմին՝ ըստ օրինակի համաձայնութեան
կարեկից անդամոց միանձնութեան՝ ամենեցուն և մեզ պարտ
է ձայնել, հռչակել, յայտնել ամենեցուն 'ի սիրեալ զաղ-
ցանկ մատակարարել, և նոցին իւրաքանչիւրոց լսել, հոգւով
աղգասիրութեան և հայրենասիրութեան յանձն իւր վերա-
ծել, առողջ ընտրութեամբ 'ի զննին լինել, և կենդանի կը-
ցիւք դատանել խնդակից և վշտակից ըստ Առաքելոյն։ ա.
Կորն". ԺԲ. 26։

Այլ զի 'ի սմին պատահման իբրև զերկեամ մի ոյժմ
յարաձգեցան լուութիւնք մինչ խոպառ, մնրթի է հաւատալ
իսկութեանցն՝ թէ ուժգնութիւնք հեռաւորացն յանկարծա-
դէպ անակնկալ ընդ առաջ ելելոյ՝ ելով հղօրեալք մի քան

զմիս, ոչ ինչ յանդգնութիւն ինձ համարիմ առ այնպիսիսն
աստուած ես յիմարումս մասին 'ի դատաստանի մտաց բարե-
պաշտ ատենակալաց հոգևորականաց և մարմնաւորականաց մեր-
ձաւորաց և հեռաւորաց՝ ընդ խնամօք Աստուածամայնեալ
պատգամացն հովանաւորութեանց զանձն իմ ապահովացու-
ցանել։ Մանաս. ե. 13։

Այսպէս եթէ իցեն այսմ ընդդէմ զբաղատաք սմանք ինձ՝
որք ըստ Աստուծոյ հայրենեացն ջատագովութեամբ յայտնեա-
ցին վաղեալ նախանձու յաջողաձեռն քարաձիգ, այսր Պողո-
սեանն կարեն քաջադիպութեամբ բաղմաւ ակնաւոր առաքե-
լական պատկաց. իսկ որք կամակիրեն որով և իցէ ազդեցու-
թեամբ կրից իւրեանց, անձանց իւրանց թշնամագիր լինին. առ-
պս ահեղալուր են բարբառք Աւետարանի Տեառն։

Այլ ես ըստ յաջողելոյ ժամանակին ահա զհամա-
ռաւորութիւն ծանօթութեանց երևելի երևելի հանգամանց ան-
ցելոց և ներկայից՝ որպէս զի հաւատարմագոյն ես յանդիման
արարիչ խնամատուն վերծանութեանց ամենից ժառանգաւորաց
Աստուածեղէն շնորհաց զահոյն արքութեան Աստ մեր լուսոյ
արդոյ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ, զառաջինն յայս
նաւադ 'ի դէպ վարիչ տալ տպել նպաստութեամբ զպատՀէն
բողոքանաց խնոց և խնդրանաց մատուցելոց ընտիր թարգմա-
նութեամբ 'ի լեզու Պարսից առ Աբբայական բարձրութիւն
ժառանգի տէրութեան Պարսից իշխան Աստրպատականի և
Աբարատեան աշխարհի յամի 1823. Նոյեմբերի 1. և զթարգ-
մանութիւն պատասխանական հրովարտակի նորին առ մեզ 'ի
20. Ռեմատիլ Լիվել լուսնոյ 1239. ամի իւրեանց. որ է ին-
ներբարգ օր յունվարի 1824. ամի Տեառն մերոյ։ Ընդ որս
և զգրենական ջրոց պատասխանագրութեանց իւրոյ Աստուա-
ծարեալ Օծութեան ամենասրբոյ մեծ Հայրապետի ա-
մենայն Հայոց և ծայրագոյն ծերութեամբ հոգևոր Տեառն մե-
ր՝ առ բարձրագոյն զերազանցեալն ազգասէրն Ար-
ևելեան 'ի 15. ապրիլի և 'ի 6. օգոստոսի. և առ հաստա-
կութիւն միաբանութեան կամ՝ զերապատիւ խորհրդական ան-
դամն կառավարիչ սուրբ Ժողովոյն Աթոռոյ 'ի 12. մայիսի
և 'ի 6. օգոստոսի 1824. ամի։ Ելոյն և ջրոց
պատասխանագրութեանց իւրոց 'ի 21. սեպտեմբերի 1823
և 'ի 15. ապրիլի 1824. ամի առ յիշեալ զգաշնն. և 'ի

6. օգոստոսի առ խորհրդականն և կառավարիչն Ա.Թոռոյն, և 'ի 13. սեպտեմբերի առ ընորհաշարդ Յոհաննես սրբազան Ա.ԲՔ Եպիսկոպոսն Կարբեցի՝ հանդերձ այլով օրինակաւ միով գրեցելով առ նա 'ի մէջ յամի 1818. մարտի 24. յորս իւրաքանչիւրն կարող է նշմարել մեծագիր ընթերցողն զհաւ-կադրող պատճառսն ելանելոյ կաթուղիկոսին Ա.Թոռոյն և գիմելոյ նորա 'ի սահմանս Ա.ցանկոս. ևս և՝ զպիտաւորութիւնս զրութեանցն իւրաքանչիւրոց նոցին առ որս եղեալ են պա-տասխանագրութիւնքն։ Եւ աւելի ևս քան զնոսին՝ որպէս վասն մեկուսանալոյ վշտամբեր մեծանձնութեան Սրբազնագոյն Ա-հաւառութեան Տեառն մերում, նոյնպէս և վասն զկոյ առն-լոյ նորին ասասն 'ի սուրբ նշանի վանսն Հաղբատայ՝ յետ այսորիկ 'ի դէպ ժամանակի յայտանեցին հաստատիւն սպա-ցուցութեամբ, որոց ոչ կարիցեն կալ հակառակ ամենայն հակառակորդք ճշմարտութեանց մերոց՝ վասն ամենայն սու-տակասպաս բանից իւրեանց և զրոց՝ անարժան արժանաւորուե իւրեանց հռչակեցելոց և հռչակելեաց զմէջ կամ զայլոց։

Ա.ՍԼ վասն Ա.Թոռոյն որպէս տեսանի 'ի հրամարտակի իւրոյ Ա.ԲՔայական բարձրութեան ժառանգի տէրութեանն Պար-սից՝ ըստ որում խոստանայ սրբայալայելուչ խնամակալուբ հովանաւորել Ա.Թոռոյն և Կաթուղիկոսին և միաբանութեանց նոցին՝ և ոչ թողուլ առանց քննութեան վասն ամենայն նե-ղութեանց և զրկանաց բողոքեցելոց, և վերջացուցանել Ա.Թո-ռոյն և աթոռայնոց զանարժան դորձողութիւնսն զայնպիսիս, ակնկալեալ սպասելոյ ժամանակին՝ յորում ձեռնհաս լի-նիլ ունիցի նորին բարձրութիւնն այց առնել ըստ այնպիսի յուսադրութեանց իւրոց և մտանել 'ի քննութիւն, յորժամ և պարտուցն վնաբք դիւրացին արդարադատութեամբ իւրոյ հասարակախնամ Ա.ռեղակնափայլութեանն։ Վանգի թէպէտ և մեք յառաջագոյն իսկ զամենայն դժուարութիւն յանձն ա-ռեալ ինքնակամ յոժարամտութբ յառաջ մատուցաք զանձինս 'ի վնարումն այնոցիկ որով և իցէ առ 'ի մէջ յուսացեալ կեր-պիւ, որպէս տեսանի յերկրորդ խնդրագրի մերում առ նորին Ա.ռեղակնափայլութեան. այլ զի ջնկալան զտեղի 'ի հաձելս կա-մաց նորին խնդիրքս իմ այնոքիկ՝ ծանրացուցիչք լինձ դիւ-րացուցիչք սրբոյ Ա.Թոռոյն և աթոռայնոց և այլոց, ոչինչ այ-նուհետև վասն ամենեցուն նոցա վնասակար դատեցաք մեք

զգուշանալ առ այն մերում անձին, և ուշի ուշով զգօրուն կարեաց 'ի նոյն ուղղել։ Այն զի օրէնք բանականութեան պարտաւորին զսահմանեսին որպէս աչաց՝ նոյնպէս և մտաց սրբիբ կարողութեանց ղհետ ընթացեալ լուսաւորութեանց, յառաջատես յամենեսին օգտակարացն և վայելչականացն 'ի խընդիր՝ դատնիլ յառաջադէմ։ Եւ բնութիւնն իսկ հաստատեալ ունի զաչսն յերեսն և ոչ 'ի թիկունսն, և զտեսութիւն աչաց յառեալ յառաջոյսն և ոչ 'ի յետոյսն։ Տինա՝ զի և բարբառք սուրբ Աւետարանութեան այնպէս բարձրացեալ լինին։ Ոչ ոք է որ արկանիցէ զձեռն զմանով, և հայեցի յետս թէ յաջողեալ իցէ։

Այնպէս ասեմն՝ տեսանելով թէ Տաճար լուսակերտեալը եկեղեցւոյ ամենայն Հայոց հարուստ էր՝ և աղքատացաւ. աղքատ էր՝ և անդր քան զկար դիւրահնար վճարմանց պարտաւորեցաւ. չարաղունիցն հետևեցելոց անտարակոյս են նախատեսութիւնք բանաւորութեանց. որոց եթէ ոչ համառօտեսցին պատճառքն հրապարակեցեալք 'ի թուղթսն տալեցեալս յաղագս համազգային ծանօթութեանց, անվերջնալի են մինչև յաւիտեան պարտք և ամենայն հոյլք չարեաց, և անակնկալ յոյս բարեաց և ցանկացեալ վայելչութեանց Աթոռոյն և Աթոռականաց։

Այլ զի բազմաց կարօտին հոգացողութեանց որպէս անցեալքն այնոքիկ՝ այնպէս և հետեւեալքն, և պատճառք երկարանչիւրոց նոցին՝ չարիք առնեցեալք, բազմացեալք և արմատացեալք 'ի մշանջենաւոր անհոգութեանց, նմին իրի ոչ յանդգնութեամբ իւիք և ոչ ախատացեալ իմն կրկնք հոգւոյ խմբ՝ այլ միայն ըստ սեպուհ պարտաւորութեանց 'ի հզօրանալ հարկի առանձնացելոյ մեզ բռնաբարողն արկանելոյ զձեռն զմանով պաշտօնատարութեանց Գերագահ Գլխոյն որոյ եկեղեցւոյ և եղբարց միաբանութեան մերում, զի մի ընդունայնաթոյ անցելոցն միայն եղեալ հետամուտ՝ ապագայիցն անհոգութեամբ զանձինս մեր 'ի տոյժս յիմարութեանց դատապարտ կացուցուք. նախընտիր համարեալ՝ փութացոյց հաւատարիմ հպատակութեանց վայելուչ յուսով վաղքաջ յաղագս ամենայնի այնոյիկ բողոքել, յայտնի առնել իւրոյ Աբրահամեան Ժառանգի Տէրութեան Պարսից՝ և զձեռնկալութիւն կարօտ և բարձր հովանաւորութեան նորին

մաղթել. և հետևաբար նմին զբոմանդակութիւն ամենայնի այնոցիկ յատկադոյն պարտաւորութեամբ իմով այսու հաստատապատում համառօտութեամբ հաստատանելով 'ի դիտութիւն ամենասատուելի հասարակութեան՝ և տիրապէս իսկ խորախորհուրդ ժողովրդապետաց և աղգապետաց մեծահանձար խորհրդականաց աղգասիրաց և հայրենասիրաց Հայկազանց՝ լուսածնունդ զաւակաց անսխտակիր ծնողութեան սրբոյ Աօրն լուսոյ Կաթուղիկէ Իջմիածնի։

Յամ Տեառն 1824.
Նոյեմբերի 10.

'Ի Տփխիս քաղաքի։

Ստոմ ամենապերդեռանդ հոգեոր և հապարքեալ վերապատուելիամբ այժմ և յաւիտեան իմոյ էնոպ սրբոյ եկեղեցոյ և հայրենի աղգին իմոյ

Ազնիանուէր ծառայ
Աբ. Եպիսկոպոս Հայոց Աբրահամ Ներսէս։



ԱՀ՝ ԺՈՒՈՒՆՔՆ ԱԼԷՔՍԱՆԴՐԻՈՅ ՊԱՐՈՒՆ ԱՐՔԵՊԻՇՈՊԱՅՍ ԱՀՊԱՊՈՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԱՀ ԷՐԻՍԱՐԷՆ ԵՂԼԻՆ ՈՒՐԱՊԱՊԱՏԻՆՆԷ ՅԱՂԱՓԱՌՔԻՆ ԹՈՒՓԱՌՈՒԹԻՒՆՆԷ ՀՈՎԱՆՈՒՐՈՒԹԻՒՆՆԷ ՈՒՆԱՅՏԷԼՈՒՆ՝ ԲԱՌՈՒՆԻԼՈՒԹԻՒՆՆԷ ԵՂԵՌՈՅՑ ԱՐԻՒՆՈՒՆ Ի ՎԵՐԱՅ ԳԵՂԵՑԻԿՀԱՅԻ ԱՀ ԼՈՒՍՈՅ ՍՏԵՆՈՅՆ ՀԱՅՈՅ ՈՐՔՈՅ ԱՅԼԵՒՈՐԻՆԷ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՆ ԱՅԼԵՒՈՐԻՆԷՆՆԵՐՆ ԵՒ ԲԱՅՄԱՐԵՑԻՆ ՀԱՅՈՅ ԱԶԳԱՅՆ ԱՅԼԵՒՈՐԻՆԷՆՆԵՐՆ ԵՒ ԱՀ ԼՈՒՍՈՒՆԼԻՆ ՆՈՅԼԷՆ ԳԵՂԵՑԿԱԿԻ ԸՆԴԵՀՈՒՐԴԻՆՆ ԱՅԼԵՒՈՐԻՆԷՆՈՎ՝ ԵՒ ԲԱՅՄԱՐԵՑԻՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՆ ԵՒ ԿԻՍԱՐԱՆՈՑ ՀԱՅՈՅ ՈՐՔՈՅ ՆՈՅԼԷՆ Ի՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԷԻՆ ՍՊԻՏ ԱՐՈՒԵՆԻՈՊՈՒՆ ՀԱՅՈՅՆ։

յամի 1823 նոյեմբերի 1։

Ալէքսանդր ըստ օրինի Պարսից։

Զանի հարիւր տարի է զի Ադոռն Իշխանութեան միածնի դոլով՝ ի նեղքոյ իշխանութեան պարսից տէրութեան ունէցեալ է միշտ ըստ յատկեղ խնամակալութիւնս Թագաւորաց իւրաքանչիւր ժամանակի, և պահպանեցեալ է ազատութեամբ, ապահովութեամբ և Հնխութեամբ այնպէս՝ որպէս հաշակեցեալ է՝ ի մէջ ամենայն ազգաց։

Մինչև յամի հիճրէթի 1212. մահմէտ խան երևանու զոլով անհնազանդ մեծազօր շահին և անտեղեակ արժանաւոր կատարմանց խանութեան և իշխանութեան իւրոյ՝ ոչ հայելով՝ ի հրովարտակս նախնի թագաւորացն պարսից վասն ազատութեանց և ապահովութեանց Ադոռոյն և քրիստոնեական օրինաց և կանոնաց հայոց. և ոչ յարժանաւորութիւն միլիոնաւոր բազմութեան ազգին հայոց տարածեցելոց՝ ի նեղքոյ հովանաւորութեանց բազմամ՝ տէրութեանց. յանկանալով հարստութեանց Ադոռոյն՝ ըռնացաւ՝ ի վերայ ամենայն հարեւանաց և հաւատոց հայոց, և ընտրութիւն Կաթուղիկոսի, որ պարտէր լինել հանձնմամբ ազգի հայոց եղելոյ ընդ ամենայն ահմանս իշխանութեանց պարսից՝ օսմանցւոց և ռուսաց, և հաստատութիւնն հրովարտակք Պարսեցոյ և թագաւորաց յիշեալ տէրութեանցն. նա ինքն մահմէտ խան դր-

ծաղրութեամբ պարսիկ զինուորաց կամելով զՀաճոյականն ինքեան Կաթուղիկոս կայուցանել, ստացաւ ըստ իւրումն ցանկութեան զՀարստութիւն Աթոռոյն. բայց զաթոռն հասոյց 'ի վերջին աստիճան տարաբախտութեան, մինչև թէ յոյս հովանաւորութեան Կայսերէ առաւել չէր եղեալ Հայոց հպատակաց իւրոց տէրութեան և ամենայն հասարակութեան աղքն նոցին՝ որք ընդ ամենայն սահմանս տէրութեան օսմանցւոց և այլոց. և չէր երագեալ հովանաւորութիւն մեծազօր ֆաթալի շահին և ժառանգի նորա ընդդէմ այնպիսի բռնաւորութեանց մահմետ խանի՝ մերձ էր փոխել զկաթուղիկոսարանն 'ի սահմանս հովանաւորութեան այլ տէրութեանց, այլ զն ողորմութեամբն Աստուծոյ բարձրացուցին մեծազօր Շահն և Շահզատայն զնշխանութիւն իւրեանց 'ի վերայ անհնազանդութեանց մահմետ խանի, և վերադարձուցեալ 'ի մարաղայու Հաստատեցին յաթոռ Էջմիածնի զընտրեալն յամենայն ազգէ Հայոց զԱնանիա Կաթուղիկոս. այն է զն սկսաւ վերանորոգիլ աթոռն. և օր ըստ օրէ յառաջանալ յիւր առաջին պայծառութիւն. բայց ոչ երիսարեալ աւելի քան զտարի մի՝ սկսաւ դարձեալ յառաջանալ 'ի վերայ Աթոռոյ Էջմիածնի կամք յաւիշտակութեան Լուսաւորչեան Լուսոյ. այլ մինչև ցայսօր ժամանակի զտանի այն ամենեին անծանօթ բաղում բարերարութեամբ հովանաւորեալն Աթոռոյն արեգակնափայլ Շահզատայնն.

Իսկ զն յայսմիկ միջոցի յաղագս տարաբախտութեան Աթոռոյն և Կաթուղիկոսին ամենայն Հայոց և բաղմութեան խմբոց եղբարց հոգևորականաց և Հայրենի ազգի՝ հարկադրեալ գտանիմ ես ինքն՝ որպէս 'ի նոցանց նոյնպէս և յիմոց յատուկ պարտաւորութեանց հոգալոյ յաղագս գտանելոյ զհնար ապահովացուցանելոյ զաթոռն յայնպիսի յաւիշտակութեանց և 'ի պարտաւորութեանց դիւրացելոց. այնու պատճառաւ զձեր արեգակնափայլութիւն ճանաչելով տէր Աթոռոյ և կարող հովանաւորելոյն նմա և ազատելոյն 'ի ծանրատոկոսի մեծազումար պարտաւորութեանց և յասպադայ յաւիշտակութեանց, առաքեցի 'ի սպաս արեգակնափայլութեան Ձեր զդերասպատիւ Մարտիրոս Աբք Արսիսկոպոսն զարարաղու տաթեւու վանայ՝ այսու ամենախոնարհաբար խնդրագրով խմով, որով զումանս երևելի երևելի յաւիշտակութեանց Աթոռոյն և նեղութեանց Կաթուղիկոսին և ամենայն հոգևորականաց նորա 'ի միջոցի

15. ամաց՝ Ծանուցանելով բարձրութեան Շահզատային յառաջմէ արժանի լինիլ ողջմութեանց նորա և թագաւորավայելուչ բարերար հոխանաւորութեանց։

Յամի հիճրէթի 1224. 'ի հնչել ձայնի դալստեան զօրաց ռուսաց յերևան. յորժամ Դանիէլ Կաթուղիկոսն կայր 'ի մահամերձ հիւանդութեան, էառ սարտարն յաթոռոյ ԼՋիմաձնի աւելի քան 2. հազար 500. թումանս և զբանի ժամացոյցս սեղանոյ և զայլ և այլ նիւթեղէնս. և յետ վախճանի Կաթուղիկոսի և վերադառնալոյ զօրացն ռուսաց՝ էառ դարձեալ ինքն Սարտարն աւելի քան հազար թումանս. և Հասան խան ևս կացուցեալ զբանի պարսիկ վերակացուս՝ պահանջէր տալ ինքեան զՀոգևորականն պաշտօնեայ՝ հանդուցեալ Կաթուղիկոսին. որոյ ազգատ ևս աւելի քան 5 հարիւր թումանս ծախս արարեալ՝ հազիւ ուրեմն կարելի եղև ազատել զայն Հոգևորականն։ Այլ և զամենայն ղյորեանն և զդարի տարեալ 'ի բերդն պայմանաւ դարձուցանելոյ յետ վերադարձի զօրաց ռուսաց՝ դարձուցին հազիւ ուրեմն զմինն 'ի հնգից, յորժամ մի լիներն ցաբենոյ գնելով 47. վարայով 'ի հեռաւոր տեղիս, այնպիսի նեղութ և վնասուք կարելի եղև կառավարել Աթոռն մինչև ցնորն։

Եւ յամի 1226. եղբայրն Նաղի խանի բարձրութեամբ իւրոյ զենուորելոյ յարձակեալ 'ի վերայ Հոգևորականաց Աթոռոյ ԼՋիմաձնի՝ պահանջելով 'ի նոցանէ զվառօթարկուսն 'ի տուն իւրեանց՝ արար զայնպիսի նեղութիւն, զոր և ոչ մին իւրաքանչիւր ժամանակի խանից երևանու չէր համարձակեալ առնել երբէք. և 'ի լինիլ բողբանաց առ Հասան խանն՝ ըստ որում էր յայնժամ Սարտարն 'ի Թէվրիզ, նա վիճանակ վրէժխնդիր լինելոյ եղբօր Նաղի խանին, ինքն ևս նոսա կրեալ զգլուխս վառօթարկուացն թագուցանէր զայնս. և ապա զաւուրս 16. արդելեալ զնս 'ի միում սենեկի պալատան իւրոյ սպառնայր դնել 'ի զօմպարայ. և զմի 'ի վարդապետաց և զերկուս 'ի ծառայից Աթոռոյն մատնեալ տանջանաց 'ի բանտի ինասապարտից. ոչ արձակեաց՝ մինչև ոչ էառ 400. թումանս ինքն և 50. թումանս այլ պաշտօնեայք իւր։

Բայց զի յայնոսիկ պատահմունսն դատանիւր Աթոռն առանց Կաթուղիկոսի՝ յոյս ամենայն հոգևորականաց անբեկանելի մնայր դարձեալ՝ թէ 'ի լինիլ Կաթուղիկոսի՝ լինին և առաւելապատիկ խնամակալութիւնք մեծաղօր շահին և ժառանգին

նը՝ ըստ նախնի թագաւորացն պարսից, յորժամ և վերջանան յա-
թոռոյ Աշիճանի ամենայն այնպիսի նեղութիւնք և յափշտակութիւնք։

Եւ ի ժամանել Կաթուղիկոսին ի սպասս արեգակնապայծ
շահղատային. անարժան համարեալ վասն այն ամենայն նե-
ղութեանց անցելոց յայսմանէ իւրոյ բարձրութեան. բաւական
համարիցեալ մեզ յոյսն մեր յետ այնորիկ վասն ապահովու-
թեան Աթոռոյն և անձանց մերոց. նա մնասանդ յորժամ
ինքն արեգակնապայծ շահղատայն իւրով թագաւորավայելուչ
անուամբ բարբառոյն յուսացուցեալ զԿաթուղիկոսն վասն մը-
շանջենաւորութեան բարերարի հոմանաւորութեանց իւրոց ի
վերայ Աթոռոյ Աշիճանի և ամենայն հոգևորականաց և
մարմնաւորականաց նորա, շնորհեաց և զհրովարտակ վասն ա-
զատութեանց զիւղերէն և այլ ամենայն կալուածոց Աթոռոյ
Աշիճանի յամենայն հարկաց թագաւորականաց. և առելի
ևս քան զայն՝ նշանակեաց վասն Կաթուղիկոսին ի զանձարանէ
իւրմէ զառատիկ տարեկան 400. թումանս և յանդիման Կա-
թուղիկոսին կոչեալ՝ զհիւսէին զուլի խան Սարտարն՝ յանձն
արար նմա զԿաթուղիկոսն և զաթոռն, պատուիրելով նմա
զդուշանալ արժանապէս. զի թագչունք չունէին թագչի ի վերայ
Աթոռոյ Աշիճանի, բայցարտաքս մնացեալ այնոքիւք զամենայն
անցեալ վասն Աթոռոյն և զնեղագործութեան մեր ամենեցուն։
Բայց վասն մեր ապաքաղաքութեանց յայնմ օրէ մինչև ցայսօր
ժամանակի՝ ոչ երբէք ոչ կարացին Աթոռն Աշիճանի կամ
ինքն Կաթուղիկոսն ամենայն հոյոց և ամենայն հոգևորականք
նոցին հաւասար միտմ ի մասնաւոր վանորէից հայոց կամ
հոգևորականաց նոցին եղելոց անմիջապէս ընդ պաշտպանու-
թեամբ ժառանգի տէրութեան պարսից ընդ այլ սահմանս
իշխանութեան նորա վայելել զենարհն խնամակալութեանց իւրոց
արեգակնապայծութեան համաձայն ցանկութեանց նորին և
մեծ սղոցմանէ։ Զի յետ այնպիսի զգալի յանձնարա-
բութեաց ժառանգի տէրութեան պարսից իւրումն Կուսակալն՝ Թեպկա
և վեզիրն ի Թագչնոյ երիվեր չեղին մնաս Աթոռոյ Աշիճանի.
այլ զի մնասցաս Շահղատային պատուիրել յայնժամ Սար-
տարին ըստ Թագչնոյ երիվեր՝ զդուշանալ, զի մի՛ առիւծք և
ինձք յարձակեալ ի ներքս յանթառն Աշիճանի խորտակեսցեն
գոգերն Կաթուղիկոսին և սղոցմանէ հոգևորականաց և մար-
մնաւորականաց նոցին, և սրատանեսցին զմեծ կարծանումն

Ա.Թոռոյն և զբեկումն սրտի միլեսնաւոր բաղմութեան աղգի Հայոց այնպէս՝ զի սԹոռն Լ.Ջիմածնի ոչ կարաց զատնիլ աղատ 'ի զբկանաց՝ 'ի յաւիշտակութեանց և յամենայն նեղութեանց մինչև ցայսօր ժամանակի, և զբկեալ եղև ոչ միայն յիւրոյն աղատութեանց և ապահովութեանց կամ ստացուածոց, այլ և յամենայն շնորհաց և աբքայավայելուչ ողբմութեանց ժառանգի տէրութեան պարսից։

Օ 'ի յամի 1227. ինքն շահզատայն համաձայն յուսադրութեանց իւրոց վասն մշտնջենաւոր խնամակալութեանց 'ի վերայ Ա.Թոռոյ Լ.Ջիմածնի. պատուելով զնեղիչ Կաթուղիկոսին բարձրահրաման հրովարտակաւ իւրով հրամայեաց վերադարձուցանել Ա.Թոռոյն զսեպհական կալուած նորա զգիւղն անուանեալ աշտարակ, զոր յաւիշտակեալ ունէր հայրն Մահմէտ խանի Հլուսէյին ալի խան. այլ ինքն սարտարն պահանջելով 'ի մահին այնորիկ պարգև ինքեան հաղար թումանս. մինչև ցայսօր ժամանակի ոչ Ա.Թոռն կարաց տալ նմա զայն գումար և ոչ ինքն Սարտարն կամեցաւ յանձնել Ա.Թոռոյն զայն գիւղ։ Եւ այս ահա 13. տարի Ա.Թոռն Լ.Ջիմածնի վայելէ միայն զպատուելագոյն հրովարտակ շահզատայնն։ և Սարտարն զբոլոր գիւղն և զամենայն արդիւնսն առ 'ի նմանէ։

Եւ յամի 1228. բնակեցուցեալ զժողովուրդս 'ի գիւղն անուանեալ եղուարդ. որոյ չորս և կէսն 'ի վերոյ է Ա.Թոռոյ Լ.Ջիմածնի, ունի և զայն ինքն մինչև ցայսօր ժամանակի առանց մասնակցութեան Ա.Թոռոյն։ Եւ 'ի նոյն ամի մուծեալ 'ի պալատ իւր զահարօն անուն աշակերտ վարժարանի Լ.Ջիմածնի. ետ թլփատել զնա բռնութեամբ։

Եւ ամի 1231. ընդունայնացուցեալ վասն Ա.Թոռոյ Լ.Ջիմածնի զբարձրահրաման հրովարտակ ժառանգի տէրութեան պարսից և զամենայն զշնորհս և զաբքայավայելուչ ողբմութիս նորին, զգիւղորայսն որ ինքն շահզատայն կացուցեալ էր աղատ յամենայն թագաւորական հարկաց՝ զայնոսիկ ընդ հաքիւաարարեալ Սարտարն՝ ընկալնու ամ՝ ըստ ամէ մաղթայ անուամբ յաԹոռոյն 400. թումանս, և 'ի բնակչաց գիւղորդիկցն ըզբէկեարայ անուանեալ զանազան ծառայութիւնս աւելի քան 400. թումանի։

Եւ յամի 1232. 'ի խնդրել Ա.Թոռայնոց վասն հեռացուցանելոյ 'ի դեռ Ա.Թոռոյն զմուղանլուսն և թողուլ

զգեստին ժողովրդեան Էջմիածնի, ոչ յօժարի Սարտարն մինչև ոչ ընկալնու յաթոռոյն զՀինդ հարիւր թումանս։

Եւ յամի 1234 սաստիկ հրամանաւ գնացեալ յաթոռն սարհանկ մահմէտ խան՝ կամի զվեց երևելի արք Եպիսկոպոսունս և զբանիս յառաջաւորաց ժողովրդեան դիւղին արկանել 'ի սենեակ մի և շարել զդրունսն. զի մեռցին անդէն, իբրու զի չեն նոքա հնազանդ Կաթուղիկոսին, և որչափ աղաղակեն ինքն Կաթուղիկոսն և այլք առ հասարակ. թէ այնպիսի շշունջ ոչ յումեքէ չէ լսելի եղեալ երբէք. ոչ յօժարի ընել և ոչ ներէ յիշեալ սարհանկն՝ մինչև ոչ ընկալնու յանուն իւր զմուրհակ հազար թումանի պայմանաւ հատուցանելոյ զայն գումար յետ մեռոյ ամսոյ. և պարգև ինքեան վասն այնպիսի վերակացութեան իւրոյ յաղագս տանջելոյ զեպիսկոպոսունսն իբրև հարիւր թումանս։ Եւ 'ի նոյն ամի կապեալ զերևելիսն 'ի ժողովրդոյ Աթոռոյն վասն վաճառելոյ նոցա զբամբակ իւրեանց սերմանեաց ծեծեն և ջարդեն, և ընկալեալ զտուգանս 200. թումանս՝ հազիւ ուրեմն արձակեն 'ի տանջանաց։

Եւ յամի 1236. 'ի գնալ Կաթուղիկոսին առ Սարտարն ունելով ըստ օրինի զկամալերսն նորին Կայսերական մեծութեան ամենայն ռուսաց՝ որոյ աղաղաւ 'ի ժամանակի պարգևեալ լինելոյն 'ի ծանուցանելն Սարտարի, ինքն ժառանգն տէրութեան պարսից յայտնելով զբաղում ուրախութիւն իւր, զրկ առ Կաթուղիկոսն և հրամայէ կրել ըստ օրինի։ Ա.յլ յետ քանի տարւոյ ինքն Սարտարն յայնմ ժամանակի ոչ զմտաւ ածելով՝ թէ կուսակալք Կայսեր ռուսաց՝ նոցին բարձր Գերազանցութիւնքն Նիկոլայ Ֆեոդորիչ Ալրսիշովն և Ա.լեքսէ Պետրովիչ Երմոլովն և այլ բազումք Պ ենեբալք և զանազան աստիճանաւորք Կայսերութեան ռուսաց, 'ի ներկայութեան իւրոյ Կայսերական մեծութեան կրեն ըստ օրինի զկամալերսն մեծապոր Ֆաթալի շահի պարսից. 'ի վերադառնալ Կաթուղիկոսին 'ի տեղն իւր՝ առաքէ Սարտարն առ նա զայսպիսի պատգամ. թէ 'ի դալ միւսանգամ առիս այդոքիւկ նշանաք՝ գիտասցես իսկապէս, զի լենթիւ դոցին ունիս խեղդիլ։

Եւ յամի 1237. 'ի լինիլ Կաթուղիկոսին 'ի Պ արաբաղ՝ վաղճանին յաթոռն երկու եպիսկոպոսունք արկեղսպահ Պրիգոր և նորոգ եկեալ յղմիւռնոյ ունելով զհամբաւ հարբսուութեան Փիլիսպոս, որոց սենեակքն ըստ բնական սովո-

բուԹեանց Ա.Թոռոյն՝ կնքեն կառավարիչ եպիսկոպոսունքն՝ մինչև զկնի սահմանեալ աւուրց բացեալ միաբանութեամբ նախապատիւ Եպիսկոպոսաց, տումար արարեալ զկայսն գբ-տանեցեալսն 'ի նոսին՝ պահպանեսցեն վասն Ա.Թոռոյն։

Ա.յլ 'ի լսելն Սարտարն՝ առաքէ զ.Ջ ափար խան և տայ կնքել զդրունս սենեկաց հանգուցելոցն կնքով նորին, և յետ քանի աւուրց ինքն Սարտարն եկեալ յաԹոռն՝ յելանելն անտի՝ հրամայէ Ջ.ափար խանին բանալ զդրունսն և տումար արարեալ զամենայն զկայսն հնդուցելոցն տանիլ առ ինքն զտումարն։

Եւ յաղաչէին կառավարչաց Ա.Թոռոյն. Թէ յոչ ինչ ժամանակի չէ եղեալ խաղնիլ իշխողաց յայնպիսի գործս Ա.Թոռոյն. և անտանելի լինի այն վասն ամենայն հոգևորականաց և բոլոր ազգին հայոց որոց ունկեցի հասանիլ լուրն այն, զրէ ինքն Ջ.ափար խանն վասն այնպիսի աղաչանաց նոցին, այլ Սարտարն ոչ ինչ հոգալով վասն օգտի և ՁԼասուց Ա.Թոռոյն և վեր բերկման յուսոյ միաբանից Ա.Թոռոյն և բոլոր ազգինհայոց՝ հրամայէ, զի կամ կառավարիչք Ա.Թոռոյն լինիցին յանձնառու 15. հաղար Թումանի 'ի մասին կայից երկուց հանդուցելոցն և ինքեանք բացցեն զդրունսն, և կամ Թէ ըստ հրամանի իւրոյ՝ ինքն Ջ.ափար խանն բացցէ զդրունս նոցին և տումար արասցէ. յորժամ բաղում ծառայիւք իւրովք դնացեալ Ջ.ափար խանն և բացեալ զդրունս երկուց հագուցելոցն. նախ զամենայն զոսկի և զարծաԹ հաւաքէ յերկուս փոքր արկեղս, և զմետանի և զժամացոյց և զայլ ընտիր նիւԹեղէնս յայլ արկղ՝ և 'ի մնացորդացն որոշեալ զընտիրսն զորս 'ի ծածուկ և զորս յայտնի ինքն և ծառայք իւր, ասլա հրամայէ վասն մնացելոցն դրել զտումար, մի պարսկերէն և մի հայերէն. և յաւարտելն զայնս՝ հրամայէ կառավարիչ Եպիսկոպոսացն զնալ յիւրաքանչիւր տեղիս իւրեանց, և ինքն առեալ զերիս արկեղսն առանց գրելոյ զեղեալսն 'ի նոսին դնայ յիւր իջևան. ուր նախ բացեալ ինքն միայն առնէ որպէս և ախորժէ, և ապա կոչեալ 'ի գիշերի զկառավարիչ Եպիսկոպոսունսն՝ որպէս Թէ նոր յայնժամ բանալով սաւաչէ նոցա զերիս արկեղսն՝ տայ գրել զեղեալսն 'ի նոսին, զոսկի զարծաԹ և զայլսն որպէս յոչխարէ զանկանչսն, և յերկրորդումն աւուր յանձնէ զայնս կառավարչաց։

Եւ յետ այնորիկ որպէս Թէ սակաւ ինչ է եղեալն 'ի սենեկաց հանդուցելոցն՝ բերեալ առ ինքն 'ի գիշերի զՍտե-

ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
A 5330

փան վարդապետ Ձեռնասուն հանդուցեալն և կելոյ յվանս ունելոյ, տայ զնեալ քար 'ի միջի ծնգայն նորա և ձգել չուանաւ մինչև ցմերձիլ բաժանման յոգուածոյ ծնգայն. և ապա տպկեալ զնա 'ի վերայ երեսաց ունելով այնպէս ցցեալ զոտն 'ի վերայ միջայն՝ տայ ծեծել յոյժ, յորժամ և հրաւիրեն ասել՝ թէ տուեալ իցէ նա կառավարչայ Ս. Թոռոյն զդուսմը գրանոյ վարդապետին իւրոյ. ապա հրամայէ հրոյցուցանել զշամիսս և խարել զմարմինն. այլ ընկալեալ 'ի նմանէ զգրամ 40. Թուման և զմուրհակ 60. Թումանի արձակէ զնա առանց գաղելոյ.

Յետ այնորիկ մտեալ յեկեղեցին հրամայէ քանալ ըզդուռն խորանին. ուր պահպանեալ լինին սուրբ Գեղարդն և սուրբ Ս. Ջ լուսաւորչին և ամենայն անօթք Եկեղեցւոյն և կամի մտանել ինքն և որոնել զեղեալսն 'ի նմա զաւանդս վարդապետացն առաքեցելոց յայլ և այլ տեղիս վասն գործոց Ս. Թոռոյն. այլ զի ըստ օրինաց հայոց՝ բաց 'ի լուսաբար Եպիսկոպոսէ ոչ ոք համարձակի մտանել յայն խորան, բազում աղաչանօք հազիւ կարողանան հաւանեցուցանել զ. Ջ. աֆարխանն չմտանել անդր. յորժամ ևս ոչ դադարեալ բոլորապէս յայն խորհրդոյ իւրոյ. յատկացուցեալէ փոխանակ իւր զմի յանարժան վարդապետաց զոր սիրէ ինքն. և զնա մուծեալ 'ի ներքս հանէ անտի զարկղ մի զոր բացեալ ինքն զտանէ 'ի նմա զժամացոյց մի զանգակաւոր, զոր առնու վասն իւր. և զայլ ինչ ոչ գտեալ արժանաւոր ինքեան՝ վերադառնայ 'ի տեղի իւր։

Եւ յամի 1238. զելհիՀԾԷի 7. միրզայ Ջաղպաղ հաւատարիմն Սարտարի գնացեալ յՍ. Թոռն այնու դիտաւորութեամբ, յետ վայելելոյն զամենայն զբարութիւնս գտանեցեալս անդէն՝ հրաման տայ ծառայից իւրոց սուր առնուլ և հարկանել զամենեսին, յորժամ և զերկուս եպիսկոպոսաց զմին յերկուս տեղիս և զմին յերիս՝ վերաւորեն սաստկապէս սրով. այլ և միոյ 'ի վարդապետաց հարեալ սրով 'ի գլուխն՝ կտրեն զվերայն, և աղատէ զգլուխն բամբակ վերային. և միոյ 'ի վարդապետաց հարեալ վայտիւ զբազուկն՝ փշրեն և մանր խորտակեն. և զմին 'ի վարդապետաց ծեծեալ մինչև ցսպառումն շնչոյն՝ կամին ասպ զենուլ, և 'ի տարածանելն յերկիր՝ հասեալ 'ի վերայ յանկարծակի մինն 'ի պաշտօնեից սարտարի աղատէ զնա. և մեռանի 'ի հարուածոց միայն մինն

'ի զոնապահաց։

Ինդ այսպիսի բռնաւորութեանց և երևելի յափշտակութեանց՝ ամենասաստիկ առանձին հնարքը կողոպտութեանց Ա. Թուռայն ևս՝ չին պակասեալ երբէք. զոր օրինակ 'ի մէջ փոքր քարուանսարայի Ա. Թուռայն 'ի քանի տարուց հետ 13. դուքան յատկացուցեալ. Ջաֆար խանն միայն վասն իւր գինեվաճառութեան, և արգելեալ Ժողովրդեան Ալիմիածնի զվաճառ գինւոյ այլեաց իւրեանց՝ հաւաքէ ինքն փոքր գնով զամենայն գինի հպատակաց իւրեանց, և տայ վաճառել անդէն կրկին և երեքկին գնովք, որով միայն ինքն հոգևորականաց կամ ժողովրդականաց Ա. Թուռայն 'ի տարին ոչ կարէ լինիլ նուազ քան գՀազար 500. Թուման. զի մեծ մասն վաճառեալ գինեաց կամ բոլոր իսկ՝ նոքա պարտին գնել։

Այս ահա վասն այսպիսի անողորմ կառավարութեանց՝ Ա. Թուռն Ալիմիածնի ըստ փոքր մասին 'ի միջոցի հինգ ամաց՝ և ըստ մեծի մասին 'ի միջոցի երկու և կէս ամաց մինչև ցելանելն Կաթուղիկոսի անտի՝ անկեալ է 'ի ներքոյ 33. հազար 684. Թուման 5. հազար 18. շահի պարտուց. և յայնքան ժամանակս վճարեալ է պարտատերացն 35. հազար 536. Թուման 3. հազար կէս շահի. և այժմ ևս գտանի դարձեալ պարտական. աւելի քան 32. հազար Թումանի. որոց մուրհակք վեց ամսոյ 'ի վեց ամիս փոփոխեցեալ են միշտ տասին երեք շահուք. Թող զայլ կերպակերպ խարդախութիւնսն մուծեալս 'ի հաշիւս բազմաց. որպէս յայտնի լինին 'ի մուրհակաց գտանեցելոց այժմ առիս։

Այս սարտարն ջատագովելով դարձեալ զկողմն պարտապահանջից՝ զմիաբանութիւնսն Ա. Թուռայն և զնս յատկապէս կամի ցուցանել ինչ ապարտ պարտատերացն համանգամայն և այսպիսի վատաբախտութեանց Ա. Թուռայն։

Այլ յայտնի է ամենայն մեծի և փոքու՝ զի Ա. Թուռն ամենայն հայոց միշտ արդեամբք կամաւոր նուիրեանց ազգի հայոց և մանաւանդ արդեամբք իւրոց սեպհական կալուածոց՝ յետ կառավարելոյն զնոր ամենայն զմշանջենական և զպատահական հարկաւորութիւնսն հաշտակաւոր կերպիւ, ունեցեալ է գարձեալ զբաւական հարստութիւն. այժմ այն ամենայն արդիւնք անբաւական լինելով միայն իւրումն կառավարութեանց՝ գտանի դարձեալ 'ի ներքոյ ծանրութեանց վերադրեալ զո-

մարայն պարտուց, և Կաթուղիկոսն այսպէս տարագիր և ա-
մենայն միաբանութիւնք նոցին տարակուսեալ։

Կաթուղիկոսն եկն այսր վասն գտանելոյ նախ զՀնար
աղատութեանց Ս.Թոռոյն 'ի Ծանրատոկոսի աւերածու մեծա-
գումար պարտուց. յետ որոյ ապա վերադառնալ յԱ.Թոռն,
և հոգալ վասն գտանելոյ զՀնար ապահովութեանց յայնպիսի
բռնաւորութեանց և յաւիշտակութեանց. բայց ընդ մտանելն
'ի սահմանս ղարաբաղու հասին իսկոյն զլեռն և տարածեցան
յականջս ամենայն հայոց և զանազան ազգաց համբաւք վաղ-
ճանի երկուց եպիսկոպոսացն. և 15. հազար թումանս պահան-
ջողութեանց սարտարի. և կնքել տալոյ ջաֆար խանին զսե-
նեակսն նոցա, և զրկելոյն զաթոռն 'ի մնացորդաց հանգուցելոցն։

Եւ 'ի վերայ այնորիկ և տանջելոյն զվարդապետսն և նե-
ղելոյն զբոլոր միաբանութիւնն, որով և յետս կացին յօդնա-
կանութենէ ամենայն լսօղք՝ որպէս հայք, նոյնպէս և այլ ա-
մենայն քրիստոնեայք. զչափ առնելով, զի 'ի ներքոյ այնպիսի
կառավարութեանց՝ ոչ այժմ և ոչ յաւիտեան Ս.Թոռն Ս.Ջ-
միածնի ոչ կարէ աղատիլ 'ի պարտուց՝ կամ գտանել զար-
ժանաւորութիւն իւր, զոր ունեցեալ է յառաջ քան զ 1212
ամն հիճրէթի։

Եւ մինչ հոգայր նա և մեք ամենեքեան գտանել զՀնար
համոզելոյ զդայթակղութիւն մտաց հասարակութեան 'ի մասին
այնորիկ՝ եկին հասին և համբաւք սրածութեանցն. յետ որոյ
ոչ էր մնաց յոյս՝ ոչ հոգևորականաց և մարմնաւորականաց
ազգի հայոց և ոչ կաթուղիկոսին և ոչ ընդ նմին եղեալ
միաբանութեանց Ս.Թոռոյ Ս.Ջմիածնի։

Եւ էս որ 'ի վերայ այն ամենայն անցեալ ջանայի դարձեալ
աւելի քան զկարողութիւն իմ, զի կարօղ եղէց գտանել օգնա-
կան Ս.Թոռոյ և Կաթուղիկոսի իմում. ահա յիմում մասին
էս մատուցանեմ ընդ այսմ զօրինակ առիս գրութեան բար-
ձրագահ ջաֆար խանին, որով կարելի է հատու լինելն մտաց
կամաց և գործոց իշխողաց Ս.Ջմիածնի 'ի գործ եդելոց մինչև
ցայսօր առ ինքն Կաթուղիկոսն և առ ամենայն հոգևորա-
կանսն և մարմնաւորականսն նորա, որպէս և ուրիս էս այժմ
յիմում այնքան հեռաւորութեան յինքեանց։

Եւ եթէ շնորհօքն Աստուծոյ հարստացեալ կամաց ա-
բեգակնափայլ շահզատային հաճոյ լիցի, զոր ինչ և արժան

համարիլ ունիցի հարցանել 'ի մասին Ս.Թոռոց Էջմիածնի Կաթուղիկոսին և ամենայն հոգևորականաց նոցա և իմ, ա-մենայն Հնմարտութեամբ կարէ լսել 'ի գերապատիւ Տարտիրոս Ս.քզ Եպիսկոպոսէն։

Եւ ես բաղում յուսով իմով վասն բարեբար հովանաւորութեանց շահղատային 'ի վերայ Ս.Թոռոց Էջմիածնի, և Ս.Թոռոց նորա վայելուչ հոգացողութեանցն վասն ամենայն ղրկանաց և յաւիշտակութեանց եղելոց մինչև ցայժմ և վասն հնարից ազատութեանցն 'ի պարտուց, եմ և մնամ յաւիտենական պարտաւորութեամբ իմով աղօթարար։

խոնարհ ծառայ Ա.ԶԷ Եղիշէպոս հայոց
Ղեր.։

1823 նոյեմբերի 1.

Ա. նորին արեգակնափայլութիւնն դարձեալ։

Վասն երդորդ։

Լոգ հնագոյն ոսկերաւանեանց պարսից՝ ղնի ղբաղաւոն 'ի գրեալ յանշ-ուանն լսել 'ի պանողէն գիրքն, ղայնոքնա հարքեր համարեցեալ յանշ-նեալ սրբալան Տարտիրոս արք եպիսկոպոսին գրով՝ 'ի լինել հրամանաց ծա-ռանգի պերուանեան պարսից չի-բուն ոսքենի վան խօսելոյ, ներկայացու-ցեալ էր ղգիրն յանշնեցեալ ենքեան վան խօսելցոյն քանիս. Խնորին հրամանա-նարգմանեալ 'ի լեզու պարսից ընանեցեալ էր ենքն Ա.բչայորդին։

Էջմիածնի Ս.Թոռոց տէրն և պահպանողն է ժառանգն տերութեան պատրկի՝ և թէ նա կամիցի ղշինութիւն նորա, լինելոց է շէն. իսկ թէ ոչ՝ ոչ Կաթուղիկոսն, և ոչ ամենայն հրգևորականքն նորա, և ոչ իսկ բոլոր ազգն հայոց սրբան և

առաւելապէս կամեցին, չեն կարող պահպանել զՀինու-
թիւն նոցա։

Շնորհակալ եմք բոլոր ազգաս զի աւելի քան զամենայն
նախնի Թագաւորաց պարսից կամք՝ և խնամք մեծազօր Շահին
և ժառանգին նորա վասն պահպանութեան Ս.Թոռայ Էջմիածնի,
և Կաթուղիկոսին և ամենայն հոգևորականաց և մարմնաւո-
րականաց նոցին՝ եղեալ է մինչև ցայսօր։ և լի եմք յուսով
թէ այսուհետև ևս լինելոց է նոյնպէս։

Ի վերայ սոյնպիսի յուսոյ՝ բազում ապաւինութեամբ
մատաղացայ յայտնել ամենախոնարհաբար խնդրագրով իմով
իւրոյ Ս.Լուսաւորչայնութեան զայն ամենայն, զոր ինչ մինչև
ցայժմ չեն կամեցեալ կամ չեն կարողացեալ յայտնել ոչ
Կաթուղիկոսն և ոչ այլ ոք։ և աւելի ևս քան զայնս՝ բանիւ
բերանոյ մատուցանողին զայն խնդիր իմ Մարտիրոս Ս.Լուսաւ
Էպիսկոպոսին տաթևու վանաց՝ այս են իմ խնդիրք։

Որ ինչ ողորմութիւն ունիցի ժառանգն տէրութեան պարս-
կից վասն Ս.Թոռայ Էջմիածնի և Կաթուղիկոսին ամենայն
հայոց և հոգևորականաց նոցին իւրով բարձրահրաման հրո-
մարտակաւ՝ ինքն ժառանգն տէրութեան պարսից ըստ վայ-
ելչութեան իւրումն Ս.Թոռայ, շնորհ ունիցի առնել զհոգա-
ցողութիւն այնպէս, որ բաց յինքենէ այլ ոք ՝ի ծառայից
իւրոց առանց յատուկ հրովարտակի նորին՝ ինքնագլուխ չը-
կարողասցի համարձակիլ զհրովարտակ ողորմութեան նորին դա-
դարեցուցանել և զրկել զՍ.Թոռն կամ զԿաթուղիկոսն և կամ
զհոգևորականսն և զմարմնաւորականսն նոցին յողորմութեանց
սնառն իւրեանց և Թագաւորի։ Այլ թէ ոչ՝ Ս.Թոռն Էջ-
միածնի ոչ երբէք ոչ կարողանայ վայելել զողորմութիւնս ո-
ղորմած Թագաւորի իւրոյ, և հրովարտակք ողորմութեանց
նորա ոչ ինչ յաւելեալ Ս.Թոռայն, պակասեցուցանեն ՝ի զուր՝
գանձարանի իւրումն ողորմած Թագաւորի։

Պակասեցուցանեն համանգամայն և զյոյս Թագաւո-
րական հովանաւորութեանց և ողորմութեանց ունողացն զայնս,
՝ի նկատելն զայնպիսի հրովարտակսն Թագաւորական՝ սակ-
բայելս առաջի ծառայից և գործակալաց նորին՝ և անբաւական
՝ի պաշտպանել զինքեանս համաձայն Թագաւորական կամաց
և հրամանաց բովանդակեցելոց ՝ի նոսին։

Այսն գէղացեալ պարտուց Ս.Թոռայն այնպիսի անողորմ

կառավարութեամբ պարտաւորեալն որ վեց ամսոյ 'ի վեց ամիս վերադարձելով զմուրհակն տասին երեք շահուք՝ ընկալեալ են զԱ.թոռն 'ի ներքոյ շահուց փոքրագումարաց տրեցելոց յինքեանց, և բաղումք ևս տուելի քան զշահն այնպիսի կերպիւ այլևայլ խարդախութեամբ կամ բռնութեամբ ևս մեծեալեն զգումարս աւելորդս 'ի մէջ հաշուոց իւրեանց և ընկալեալ դրամն կամ զմուրհակս, որովք յետ վճարելոյն Ա.թոռոյ պարտապահանջից իւրոց ըստ հաշուի մուրհակացն գտանեցելոց՝ 35 հազար 536. թուման, որ ըստ ուղիղ հաշուի մայր դրամոյն ստացելոց յա-թոռայնոց վասն Ա.թոռային հարկաւորութեանց՝ կարէ հա-շուիլ աւելի ևս քան 50. հազար թուման, գտանի դարձեալ պարտական այժմ ինքն Ա.թոռն աւելի քան 32. հիր թուման։

Որպէս և հաճոյ լեցի ժառանգի տէրութեան պարսից՝ իւրով արդարադատութեամբ առնել դայնպիսի անօրէնութիւն ինն, որ անողորմ տուրհատութեամբ պարտապահանջից Ա.թոռն Յոչմիածնի կամ հոգևորականք նորին չունկնցին յա-ռաջանալ 'ի քան զայս աւելի ապարախտութիւն, կամք իւր բարձութեանն է։

Բայց եթէ հաճելի լինիցի և իրաւունք համարեսցի ինքն ժառանգն տէրութեան պարսից՝ հրամայել, զի ամե-նեքին ոչք ունեցեալ են զարդարութիւնս դրամոց ընդ Ա-թոռոյն, թէ այնոքիկ ոչք սատարեալք են յառաջ քան զայս զօրեղութեամբ իւրեանց կամ խարդախութեամբ աւելի քան զպահանջմունսն ուղղութեան հաշուի իւրեանց, և թէ այ-նոքիկ որք պահանջեն այժմ առ ինքեանս ունեցեալ մուր-հակքն Ա.թոռայնոց. կամ եկեալ այդր 'ի թէվրեզ 'ի մեր-ձակայութեան ժառանգի տէրութեան պարսից, և կամ եկեալ ոստ 'ի թիֆլիզ տուիս՝ քննութեամբ երկու պարսիկ և երկու հայ վկայեալ արժանաւոր վաճառականաց ընտրեցելոց յին-քեանց և 'ի մէջն՝ ուղղեսցեն զհաշիւսն պահանջելեաց և ստա-ցելոց իւրեանց յԱ.թոռոյն, և այնպէս զկնի՝ որ ինչ յայտ-նեսցի մայր գումարն տրեցեալ յիւրաքանչիւրոց. կամ գումարն ստացելոց նոցին յաթոռայնոց. շահն այնորիկ՝ թէպէտ և ընդ ամենայն տեղիս 'ի մէջ ամենայն ազգաց օրինաւորու-թեամբ պարտք տուողաց և առնողաց՝ ոչ լինի հարիւրին ա-ւելի քան ութն կամ տասն 'ի տարին, այլ պարտապա-հանջք Ա.թոռոյն թող հաշուեսցեն հարիւրին տասն և

երկու 'ի տարին. և այնպէս յօրէ տալոյն իւրեանց մինչև ցվերջն՝ ստանալով իւրաքանչիւրքն զիւրեանց շահն և զմայր գումարն, որ ինչ դատնիցի պակասն այժմ ստացին 'ի մէնջ. և որ ինչ առեալ իցեն աւելի, դարձուցին Ս.Թորոյն, և այնպիսի Աստուածասիրութեամբ և բարի կամօք և գործովք իւրեանց՝ շահեսցին ինքեանք, և Ս.Թորոյ Յէջմիածնի ևս չլինիցին պատճառք աւերութեանց։

Յու կամ թէ ով որ ինչ գումար տուեալ իցէ Ս.Թորոյն այնպիսի աւերածու շահուք, դարձուսցէ յետս Ս.Թորոյն զստացեալն իւր մինչև ցայժմ՝ միայն հարիւրին ութն շահուք վասամենայն անցեալ ժամանակացն։ և ընկալեալ 'ի մէնջ այժմ զիւր տուեալ գումարն ամբողջապէս, և աւելի ևս նոյնչափ գումար հաւասար տրեցելոյն իւրոց հաւատարիմ գրաւականաւ կամ երաշխաւորութ.և այնպէս՝ որքան տարի տուեալ գումարն մնացեալ իցէ 'ի վերայ Ս.Թորոյն, մի տարի ևս աւելի քան զայն՝ պահապանեսցէ ինքն փոխանակ շահուն իւրոց զգումարն յինէն ստացեալ, և 'իլրանալ ժամանակին դարձուսցէ ապա ինձ կամ ում յանձնել ունիցիմ ես՝զայն գումարն իմ ամբողջապէս առանց շահուց։

Յու վասն այլոց յատիշտակութեանց և զրկանաց նշանակելոց յիմում խնդրագրի՝ որպէս և հաճոյ լեցի ժառանգի տէրութեան պարսից առնել, մեք պարտաւորիմք օրհնել մեայն զկամն իւրոյ բարձրութեանն։

Ս.յլև վասն նաղտ և վեճ կայից երկուց հանգուցեալ եպիսկոպոսացն՝ 'ի լինիլ հրամանաց իւրոյ բարձրութեանն, ներկայացուցանեմք զթէվթէր ամենայնի այնոցիկ որքան ինչ յայտնի է մեզ ապացուցութեամբ թէվթէրաց հանգուցելոցն՝ և իւր ինքեան ջաֆար խանի, և այլոց վկայից։

Յու ըստ որում վերանորոգութիւն Ս.Թորոյ Յէջմիածնի պահանջէ զբացում հոգացողութիւն բազմաց, այլև զմեծանջենական ողորմած հովանաւորութիւն ժառանգի տէրութեան պարսից՝ թէ նորին արեգակնափայլութեանն հաճոյ լինիցի, բարձրահրաման հրովարտակաւ իւրով հրամայել տացէ ինձ կարգադրել զհոգևորականն Ս.Թորոյ Յէջմիածնի ըստ արժանաւորութեան իւրքանչիւրոց։ այլև զկառավարութիւն Ս.Թորոյն ըստ վայելչութեան նորին առանց ներհակութեան այլոց իշխանաւորաց Յրևանու։

Ա.ՍԼԵ հրաման տայէ, զի 'ի տարին մի կամ երկու անգամ 'ի հարկաւոր լինելն վասն որպիսութեան կառավարութեանց Ա.թոռոյն՝ կարողացայց կատարեալ Հնմարտութեամբ յայտնել գրով իւրոյ արեգակնափայլութեանն ես ինքն. որովհետև ելզեալքն անդէն ոչ Կաթուղիկոսն և ոչ այլ ոք՝ որպէս մինչև ցայժմ չէն կարողացեալ վասն ամենայն անցեալ նեղութեանց իւրեանց և սրատհառայն աւերութեանց Ա.թոռոյն յայտնել ինչ իւրոյ արեգակնափայլութեանն, նոյնպէս և յայսմհետէ ևս վասն մշտնջենական երկիւղի իւրեանց ոչ երբէք չէն կարող յայտնել Հնմարտութեամբ վասն նեղութեանց իւրեանց կամ զրկանաց Ա.թոռոյն յամենայն ժամանակս լինելոյ նոցա Ա.թոռն Աստուծի, որպէս և ես ինքն թէ լինիմ այժմ Ա.թոռն՝ զայնս զորս յամենայն ժամանակս լինելոյ իմ անդէն չեմ յայտնեալ իւրոյ արեգակնափայլութեանն. այժմ ևս չեմ կարող բնաւ յայտնել, թէ և նեղութիւն մեր և վասն Ա.թոռոյն լինիր տասնապատիկ ևս առաւել քան զայս:

Հայր Կարապետ հայոց վերապետ
Ներսէս:

1823 նոյեմբերի 1.

Պատուհանագրութիւն Հայրապետական պարսից
առ Ներսէս Հայր Կարապետոն հայոց:

Բարձրագահ և գերապատիւն հաւատարիմ ընտանից բարեացակամ քրիստոնէից մեծահամբաւ Աղնուական յաղագս հայոց Ներսէս Ա.ըք Կաթուղիկոսաց:

'Ի հասանիլ առ ձեզ հրամանագրութեան մերում՝ ուղիղ ընթեռնուլ և տեղեկանալ. զի երկոքին խնդրագրութիւնք ձեր 'ի ձեռն գերապատիւ և հաւատարիմ Արտիրոս

Ս.ԸՆ Լուսավորչի հանդերձ մեծագույն ընծայութիւն ժամանեցին առ մեզ, և ամենայն գրեալքն ձեր 'ի կողմանէ Ս.Թորոսին և բարձրագոյն Կաթուղիկոսին յայտնի եղեն մեզ յաղագս այնպիսի նախանձելի բազմադիմի նեղութեանցն Ս.Թորոսոյց, և այնքան ցնծացաւ և զուարճացաւ սիրտ իմ 'ի վերայ այդպիսի բարեխորհուրդ մտաց և հոչակեալ հաւատարմութեանց ձերոց առ Ս.Թորոն և առ ամենայն ազգն Հայոց՝ արդարև աչ կարեմ ընդ գրով արկանել. միայն թէ մեք ևս բազումս ցաւեցաք և տրտմեցաք վասն Ս.Թորոյ Լուսիմաստնի ընդ այնպիսի վշտապատում ձերոց ցաւակցութեանց. Ս.Ա որ վերահասու եղեալ զգուշաւոր քննութեամբ ամենայն անցիցն անցելոց՝ յառաջադրեցաք ահա զայնպիսիս, որք միանգամ պատկանին բարութեանց՝ վայելչութեան և պայծառաղարդութեանց Ս.Թորոյն և Կաթուղիկոսին. Ս.յլև նոյն հնարհոգ և ազգասիրական ողորմութեամբ՝ զոր ունիմ առ Ս.Թորոն, և սիրեմ կատարելապէս զբարձրաստիճան Կաթուղիկոսն և զամենայն զմիաբանութիւնսն, հրամայեցաք գալ առ մեզ մի 'ի բանագէտ վարդապետաց Ս.Թորոյն 'ի տարին երկու անգամ 'ի դիմաց Կաթուղիկոսին, և պատմել զամենայն անցից և որպիսութեանց Ս.Թորոյն և Ս.Թորայնոց. և կամ միշտ գրել զանդիր և ծանուցանել մեզ զամենայնն, զի և մեք վերահասութիւն գործեսցուք վասն ամենայնին, և սանձեսցուք զբացարձակ կամս այնպիսեաց բռնաւորաց. 'Ի սմին միջոցի ըստ հրամանի մերոյ եկեալ վարդապետն Յ.Թորոյն այսր՝ ոչ ինչ բնաւ կամեցաւ պատմել մեզ զանցիցն Ս.Թորոյն, և ոչ ետ տեղի ամենևին ձերոց վշտապատում գրութեանց և բանից, այլ զոր ինչ հարցաք նմա՝ նա ինքն զանցառական բանիւք խրովք 'ի բաց ասաց վասն ամենայնին, ըստ որոյ ոչ ինչ ծանուցաւ ինձ յայտնապէս և չկարացայ գիտել հաւաստի զկնն յաղագս այնպիսի անհամաձայնութեանց եղելոց 'ի գրութիւնս ձեր և 'ի բանս վարդապետին, որք յոյժ զանազան զտանէին 'ի միմեանց. Իսկ մեք չներեմք երբէք վասն այնպիսեաց և ոչ Թողացուցանեմք առանց քննութեանց, մինչև ոչ վերջաւորեցոյք Յ.Թորոյն զանարժան գործողութիւնս զայնպիսիս. Լս 'ի վերայ այնր ամենայնի ահա մերով ողորմութեամբ տեսեալ զայդքան հաւատարմութիւն ձեր և ցաւակցութիւն վասն Ս.Թորոյ Լուսիմաստնի և Կաթուղիկոսին՝ հրամայեցաք արքայա-

վայելուչ անշրջելի բանիս, զի ոչքան և պարտապահանջք իցեն Յ.Թոռայն՝ գտանեցեալք 'ի տահման տէրութեան պարսից, ասացին միայն զմայր գումար դրամոց իւրեանց հանդերձ տասնին երկու շահուքն. և աւելի քան զայն՝ չունիցին պահանջել ինչ.

Որպէս զի և Կաթուղիկոսն զմիամտութիւն գտեալ վերադարձցի Յ.Թոռն և կառավարեսցէ զմիաբանութիւնն իւր. և շնորհաւքն Աստուծոյ 'ի վերադառնալ իւր Յ.Թոռն՝ տեսանելոց է զբարիս բազմապատիկս յողորմութեանց Թագաւորութեան մերոյ. Այլև քո իսկ սեպհական գրութեամբն առաւել յայտնի եղէ ինձ, զի դու քան զամենայնն մեծագոյն ես 'ի մէջ Յ.Թոռայն, և աւելի հաւատարիմ առաջնորդութեան քում և հաւատոց որպէս պատկանի իմաստութեան քում և գիտութեան, նա զի և անձն այնպիսի, որ լեցի հաւատարիմ Յ.Թոռայ իւրոյ և ամենայն գործոց իւրոց, ոչ լինի ճառել այնուհետև զգերազանցութենէ պատուակալութեան նորին. Եւ յաղագս ամենայն անկից Յ.Թոռայն Եպիսկոպոսին է յանցանքն, որ գոլով անդէն ընդ հաւնաւ գործակատար և կառավարիչ՝ ոչ է գրեալ մեզ զայնպիսեաց մինչև ցայսոր. որում պատուիրեցի այժմ՝ ծանուցանել խնդրագրով յետ այսորիկ զամենայն որպիսութեանց Յ.Թոռայն. Իսկ դիր ձեր 'ի մասին մլքից և սեպհական կալուածոց եղբօր քո որպէս էր՝ այնպէս եղև և պայմանագրութիւն և հրամանն իմ, որպէս պատմեալոց է ձեզ Պարսիկոս Եպիսկոպոսն. Յ.Յլ դու զայս ամենայն գրութիւն իմ առքեզ՝ համարեսջիր պատիւ վասն քո. Եւ զայլ եթէ ունիցիս գրելիք կամ խնդրելիք այսուհետև, գրեա միամտութեամբ սրտի և խնդրեա, զի ունիմ կատարել այնպէս՝ որպիսի հաճոյականք և սիրաժականք ձեզ գոցին.

1239. Յունուարի Կ վեցն 20
'ի Թէվրիզ.

Ա. Գերասիմեան Հիւսէյնի զբաղեալ խառն Բասիրբաղեան Սարտարն ու Հերեանն՝ 'ի դէմս Ներսէս Ա. Կաթողիկոսի։

Պատուելի զրութիւն ձեր առիս մինն յառաջ և մինն այժմ 'ի ձեռն բարձրազան Ջաֆար խանին ընկալեալ վերայարգութեամբ ծանուցայ զնշանակեալսն 'ի նոսին, և շնորհակալեմ յոյժ վասն Սարտարի ոչ մոռանալոյն զիս։ Ա.ԱԼ և վասն ամենայն բարերարութեանցն նշանակեցելոց յառաջին գրի Սարտարին՝ հաստատացուցանեմ յանուն Ա.տուծոյն զոր պաշտեմք, զի չեմք մոռացեալ և չունիմք մոռանալ։ Ա.ԱԼ յոյժ զարմանալի լինին ինձ և ամենայն լսողաց՝ զի 'ի վերայ այնպիսի բարեշնորհութեանց Սարտարին վերատին 'ի ներքոյ հովանաւորութեանց նորա՝ գտանի Ա.Թոռն Յէմիածնի 'ի ներքոյ այնքան ծանր պարտուց և Կաթուղիկոսն և ամենայն միաբանք նոցին 'ի մէջ այնպիսի տարաբախտութեանց՝ որպիսի չէ եղեալ երբեք 'ի միջոցի 1520. ամաց շինութեան իւրոյ։ Եւ առաւել ևս զարմանալի լինին՝ զի այնպէս է հաստատեալ Սարտարն որպէս և գրի, թէ պարտք Ա.Թոռոյն յառաջացեալ են վասն վերանորոգութեանց տանեաց տաճարին՝ քարեայ փարշին՝ զաղարտապատին՝ ուսումնարանին և տպարանին, և նոցա շահն մայեայ գառնալով գիզացեալ է այնչափ։ Եւ թէ պարտք տուօղն իւրեանց ունեցեալն տալոյն գինի՝ յայլոց ևս առեալ շահուք՝ տուեալ են գարձեալ Ա.Թոռոյն, որոց տունք աւերին այժմ 'ի պատճառս այնպիսի բարերարութեանց նոցին Ա.Թոռոյ Յէմիածնի. և թէ՝ ևս եկեալ եմ 'ի Թիֆլիզ և մատուցեալ զՅէմիածինն։ Բայց զի Հմարտութիւնն ոչ ծածկի. ևս հաստատմամբ ցուցանեմ այսուիմ գրութեամբն՝ որ այնոցիկ նշանակեալ վերանորոգեցելոց ծախսն ոչ լինի բոլորն աւելի քան 2000. թուման՝ այլ թող լինիցի 2. հազար 500. թուման, որոյ շահն ևս 'ի միջոցի անցեալ ժամանակացն ինքնայայտ է՝ թէ որչափ պարտ է լինիլ։

Բայց պարտք Ա.Թոռոյն մինչև ցելանելն Կաթուղիկոսն անտի՝ եղեալ են 33. հազար 600. ութսուն և չորս թուման հինգ հազարդեան տասն և մին շահի, որոց փոքր մասն յառաջացեալ է 'ի միջոցի հինգ ամաց՝ և մեծ մասն 'ի միջոցի եօթն և կէս ամաց։

Եւ 'ի միջոցի այնքան ժամանակաց ստացեալ են պարտուեալքն 35. հազար 536. թուական երեք հազարեան կէս շահի. և այժմ էս մեայ դարձեալ պարսկան Աթոռն միայն այդը յերեան աւելի քան 32. հազար թուական։ Այստ որոյ պարտ է նկատել՝ թէ այնքան գումարք որպիսի պատճառանօք իցեն յառաջացեալ, կամ թէ պարտք առուզքն են աւելեալքն, թէ Աթոռն Էջմիածնի։

Եւ վասն իմ մոռանալոյ զԷջմիածինն՝ ինքն Էջմիածինն լաւ գիտէ, որ ոչ մոռացեալ եմ զինքն՝ և ոչ ունիմ մոռանալ քանի կենդանի իցեմ. և սարտարն ինքն էս թէպէտ այնպէս է զրեալ միրզի մրմի, այլ լուսով իւր խմաստուն սրբոյն և սարտարապէտ գաստոյս թէեանն լաւ էս կարող է վկայել ինքն իսկ՝ որպէս և վկայեալ էս է. զի առաջինն եմ ամենայն հարազատից սրբոյ Էջմիածնի՝ Էփրեմ Կաթուղիկոսին և ամենայն միաբանութեանց նորին և բոլոր Հայոց ազգին, և ոչ երկրորդն կամ երրորդն։ Եւ որ զրեալ է Սարտարն թէ 'ի Հայոց ազգէն ոչ յուստեքէ չեղև օգնութիւն. ապա այնքան գումարքն՝ որք հասեալ են պարտատարցն, և կամ այնքան գումարք՝ որք եղեալ վասն արտաքին և ներքին ծախուց Աթոռոյն՝ ուստի՞ են եղեալք։ Այլ և որ գրեալ է Սարտարն թէ բարձրագահ Ջաֆար խանն եկն շահզատայի հրամանաւն վասն բերելոյ զԱթոռն զԿաթուղիկոսն, և թէ Կաթուղիկոսի յամենայն պակասութիւն է Աթոռոյն։ Մինչև Կաթուղիկոսն չկարողացայ զտանել զհնար ազատութեանց յայնպիսի մեծագումար ծանրատակոսի պարտուց՝ զիարդ կարողանայ նոս վերադառնալ Աթոռն, որոյ աղագաւ ահա առաքեմ առ ձեզ օրինակ բարձրագահ Ջաֆար խանի զրութեանն առիս, որով կարող էք նկատել լուսապէս թէ առանց բաւական պատրաստութեան գրամոց կարող է Կաթողիկոսն վերադառնալ Աթոռն գտարկ։ Թող զայն որ ինքն էս իմ ուղարկեալ 1225. թուականն՝ յիւր 2000. թուական պարտուց մասին միապարտաց ա՛ղ էս չէ համարեալ։ Այլ զի զրէ Սարտարն թէ Աթոռոյ պարքն և պակասութիւն ամենեքին ձեր աչքն առնանեն. Ես յուսով եմ որ խմաստուն անձինք իւրաքանչիւրքն իւրեանց աչքն լուսապէս կարողացին տեսանել՝ թէ ուստի՞ իցեն յառաջացեալ պարքն կամ պակասութիւնն Աթոռոյն. և այնպէս զիս անմեղագրելի ունիցին։ Ինչ ինչ առ

պատշաճ խօսելցու ասելն և հաւատարիմն ձեր բարձրագահ Ջամիաթ խանն, որպիսի ամենևին ոչ վայելէր, այլ 'ի հարկէ Սարտարի առաջս քաղցր հայեցողութեան պատկառութիւն և պատշաճաւոր։ բայց ինքն Սարտարն ողջ լիցի և մեք ամբ և մնամք միշտ օրհնարան և աղօթարար։

խոնարհ ծառայ Ս. Յ. Եպիսկոպոս հայոց
Զրաբատոնս Հիերոն։

1823 սեպտեմբերի 21։



Պատուական Գրաբաշիին Սրբազնագոյն Պետրոս Եպիսկոպոսի
առ Սարտարն Երևանու։

Բարձր Ս. Աստուծոյն Գերաշուք հզօր իշխան փառաւոր և պատուական Երևանայ Սարտարի Երևանու առաջնորդութիւն և կենդանի յաւելի ողորմութեամբն Ս. Աստուծոյ ամենակալի և մարդասիրի։

Գրութիւն ձեր առիս 'ի 26. ամսեան մարտի բաղում յարգութեամբ ընկալեալ ծանեայ զոր 'ի նմա, և գոհացայ զ Ս. Աստուծոյ. առ որ ահա գրեմ ձերում բարձրագահութեանն, զի եւ ինքն զամն 13 գոլով Յ. Ս. Թոռ Սուրբ Յովսաննէ՝ և տեսանելով աչօք իմովք թէ ոչինչ կերպիւ ջանք իմ և աշխատութիւնք ոչ կարողանան զդէմ ունել հզօրագոյնս տարաբախտութեանց անակնուանելի կերպիւ 'ի վերայ Ս. Թոռոյ Յովսիաննէ՝ և իմ և ամենայն իմոց հոգևորականաց, զորոց անարժան ես ինձ կամ խօսիլ բերանով և կամ գրելոյն՝ զի գոհանալով զ Ս. Աստուծոյ լաւ համարեցայ մնալ առանձն յաւերակսն հաղբատաց՝ որպէս և գրէ ձեր բարձրագահութիւնն, քան թէ՝ անհանգիստ հոգւով և մտաք և մարմնով իմով ցաւիլ միշտ վասն տարաբախտութեանց իմ և Ս. Թոռոյ Յովսիաննէ և Ս. Թոռայնոց, յորոց ոչ երբէք վասն իմոյ ջանցանաց չկարողացայ զատանիլ ազատ՝ կամ ունիլ զժա-

մանակ մատուցանելոյ զարտասուս իմ առաջի Աստուածոյ մեծ Հայրենասիրաց Աստուծոյ և փրկչի Հոգւոյ իմոյ և մարմնոյ։ Շնորհակալեմ յոյժ յաղագս մեծ ողորմութեանց արեղակնափայլ ժառանգի տէրութեան պարսից առեալ՝ թէ յառաջ և թէ այժմ, միայն թէ աշխարհն և բերմունք իւր այսպէս զմեզ արժանի արարին զամենայն անվայելչութիւն Աթոռոյ և փաղանութեանց իմոց և զարտմութիւն ամենայն Աղգին Հայոց տեսանել աչօք իմովք։ Բաւական ինձ համարեալ զանցեալսն մինչ ցայսօր, կրկին ևս չիամիմ պատճառս տալ վասուց կենաց իմոց և հոգւոյ՝ կամ ցաւոց և տրտմութեանց ընդհանուր Աղգի Հայոց։ Բանզի՝ որպէս և ձեր բարձրագահութիւնն էիք գրեալ յառաջ քան զայս 'ի գրի ձերում, մեզ ևս հաւաստի է. զի թէ ես եկից և թէ այլ ոք՝ պատիւն մի և նոյն է լինելոց։ Ապանորոյ պարտաւորութեամբ ակնկալութեանց փրկութեան հոգւոյ իմոյ՝ ունիմ համբերութեամբ բաղմաւ մնալ սատէն և չիամիմ վերադառնալ այժմ յԱթոռն Սուրբ Էջմիածնի. առ որ ամենայն ազգն Հայոց և հաստատութիւնք հոգևորականաց և մարմնաւորականաց նոցին ենբանք գիտասցեն, որպէս և անօրինել յօժարեսցին վասն արժանաւորութեանց ընդհանրական Աթոռոյ Էջմիածնի և Կաթուղիկոսութեան նորա։

Ուրեմն ելեր և ես եմ և մնամ վասն երկարութեան կենաց ձեր և ամենից ձերոյնոց միշտ աղօթարար։

Կաթուղիկոս ամենայն Հայոց վերոյալ
յամի 1824. ապրիլի 15. Էրիւանայ։
'ի վանս Հոգեւաւոյ։

Պատասխանագրութիւն Նէրսէս Աշ. Էրզրումի առ Սարգիս Էրզանցի։

Բարձրագահ զերազանցեալ Սարտարի արեգական բարձակից տէրութեան պարսից առաջութիւն և կեանք յաւելցի բարեբախտութեամբ միշտ։

Ընկալայ վերապատութեամբ 'ի գլուխ իմ զգիր ձե-

ըում մեծանձնութեանն առաքեցեալն 'ի ձեռն խաչատուրա-
զոյին, և լուայ զամենայն զոր պատուիրեաց նա բանիւ բերանոյ
ըստ ձերում հրամանի. առ որս յայտնեմ ամենախնամարհարար
ձերում բարձր դերագահութեանն, զի ամենայն զրեալքն 'ի
ձերում վերապատուական զրութեան վասն ձերոց բարեբարու-
թեանց Գ.Թոռոյ Յովհաննէի և Դանիէլ Կաթուղիկոսի բե-
բելոյն 'ի մարաղայու, յորժամ տեղապահ Խաչատուր աբեղ Ե-
պիսկոպոսն և ես կոչեալ եաք 'ի ներքոյ հովանաւորութեան
Ռուսոց. յետ նորա ես 'ի դալ հաւաքել մեր և այլ ամենայն
զրուական վարդապետաց առ նա Գ.Թոռն Յովհաննէի՝ թէ
'ի ժամանակս կենդանութեան Դանիէլ Կաթուղիկոսի և թէ
յետ վախճանի նորա 'ի միջոցի երկու ամաց մնալոյ Գ.Թոռոյն
առանց Կաթուղիկոսի և թէ վասն բերելոյ 'ի Ռուսաս-
տանու զգերեալսահ Յովհան Կաթուղիկոսն, քանի քանի բա-
բերարութիւնք ձեր վասն վերանորոգութեանց Գ.Թոռոյ Յով-
հաննէի և վասն բարւոք կառավարութեանց ամենայն միա-
բանութեանց նորին, յայտնի են մեզ և բաղմաց՝ զոր ես մեք
խոստովան լինելով մերով բերանով, ընդ ամենայն աշխարհ
ես տարածեալ եմք գրով, որպէս և գտանի վկայեալ իսկ 'ի
սոյն գրի ձերում բարձրագահութեան։ Այժմ ես ոչ մո-
ռանամք զայնս բարեբարութիւնսն ձեր և ոչ կարեմք ուրանալ
երբէք. այլ զի 'ի վերջոյ այսպէս ըստ բերմանց աշխարհի կամ
ըստ փոփոխութեան մարդկային կամաց՝ հետևեցան այն ա-
մենայն պատահմունք, որով Գ.Թոռն Յովհաննէի գտաւ պա-
կասեալ յամենայն արժանաւորութեանց իւրոց և 'ի հարս-
տութեանց, և տկարացաւ 'ի ներքոյ ծանրութեան մեծագումար
պարտուց՝ մինչև հարկադրեալ լինիլ ամենապատուական ձեր-
ունի Կաթուղիկոսին ամենայն հայոց հեռանալ Գ.Թոռոյ
իւրմէ վասն գտանելոյ զհնար աղատութեանց Գ.Թոռոյն 'ի
դիպչացեալ պարտաւորութեանց անտի. յայտնի է երախտա-
գիտութիւն մեր 'ի մտին ամենայն նախանձեալ բարեբար-
ութեանց Պարտարին, զի 'ի վերայ այնքան տարաբախտ պա-
տահմանց հետևելոյ՝ և 'ի մէջ այնպիսի ներդութեանց և ան-
պատուութեանց Կաթուղիկոսին և ամենայն միաբանութեանց
նորա, վերստին ես յօրէ մտանելոյ Կաթուղիկոսին յայս սահ-
ման՝ ոչ նորին բաձրագահութիւնն, ոչ ես, և ոչ այլք 'ի
նորայնոց, մի ուրեք ոչ ումեք վասն այն ամ անարժան ներդոր-

ութեանց և այնքան վնասուց և նեղութեանց Աթոռոյն և աթոռականաց չեմք ունեցեալ բնաւ զկամս յայտնելոյ՝ անարժան համարելով որպէս վասն անուան Պատարի, նոյնպէս և վասն անուան Աթոռոյ և մեր ամենեցուն։ Բայց զի 'ի վերայ այնքան տարաբախտութեանց Աթոռոյն և մեր ամենեցուն՝ չունելով զիոյթ դերասանական ՉԱՓԱՐ խան հրամանատարն ընդհանուր կառավարութեանց 'ի գրան բարձրագահ Պատարի, անողորմ բռնակալութեամբ յառաջացոյց զայն ամենայն անտանելի անարգութիւնսն նաև 'ի վերայ Նէնջեցելոց աբք եպիսկոպոսաց եղբարց միաբանութեան մերում, զի գնացեալ կնքեաց զդրունսն նոցին և յառաջադրեաց կամ խրատանալ 'ի մասին մեսրոպ կոյսից երկրորդ նոցա 15, հազար թուման, և ինքեանք բանալ զդրունսն, և կամ ոչ մեր ձեռնալ 'ի կնիքսն իւր։ և 'ի չլինիլ վարդապետաց միաբանութեան մերոյ յանձն առաւ վասն 15։ հազար թումանի, բայեալ ինքն զդրունսն նոցին փոխանակ 15։ հազար թումանին զոր պահանջէր ինքն 'ի միաբանից Աթոռոյն, տուեալ էր ինքն 'ի մասին պարտաւորութեանց Աթոռոյն յամենայն կայից երկուց հանգուցելոցն՝ միայն որպէս զպահանջսն յոչնարէ, և զայլսն ամենայն իւրացուցեալ ինքեան որպէս և բնի մինչև ցայսօր ժամանակի քանի հազար թումանի տակի զանազան սիկկի՝ արծաթ դրամ, ոսկեղէն, արծաթեղէն, գոհարեղէն և զանազան թանկագին նիւթեղէն, ընդ որս և զիմանն սեպհական՝ թանկագին էլմաս մասանի, ժամացոյց և այլ բազում ինչ, և ոչ բաւականացեալ այնու և՝ զվերդատեստ բշակերտ միուին 'ի ննջեցելոց կոպեալ քար 'ի մէջ ծնկացն և արկեալ զնա 'ի վերայ երեսաց ունելով այնպէս ցցեալ զոտս, թուեալ էր ծեծել չարաչար մինչև ընկալեալ էր զբաւական զումար։ այլև զաշխարհական պաշտօնեայ և ազգական միուին 'ի ննջեցելոց՝ այլ անլսելի սարսռելի տանջանաց տանջեալ էր 'ի մէջ բնակարանաց Պաթուղիկոսին, ոչ ի անտանելի զրկանք և նեղութիւնք և անարգութիւնք 'ի շինութեանց Աթոռոյ Նէնջիոնի մինչև ցայն ժամանակ բարեբաղ իշխանութեանց ձերոյդ բարձրագահութեան, յամենայն ժամանակս նախանցեալ իշխանաւորաց բարեբարաց կամ չարաբարաց Աթոռոյն՝ չէ երբէք յառաջացեալ կամ լսելի եղեալ բնաւ։ Ամենայն յայտնի պատահման և դատաք մեր ամենեքին լռեալ նոյնպէս, ոչ կար-

եղով բանալ զբերանս մեր ընդդէմ յառաջադոյն աշխարհա-
հռչակ դովութեանց և շնորհակալութեանց մերոց։ Այլ 'ի
վերայ այնմ անօրինակ զբկանաց և նեղութեանց ենջեցելոց և
կենդանեաց մերոց՝ իբրև անխնամակալութեամբ պատուոյ ընդ-
հանրական Աթոռոյ ամենայն հայոց և բրիստոսակոխ տա-
ճարի սրբոյ Յերուսաղեմի՝ և այնպիսի անդթութեամբ առ խղճալի
հոգևորականն նորին համարձակեցաւ մեծապատիւ մերոյս
ջապպարն ևս՝ սուր առնուլ 'ի մէջ Աթոռոյն և սրահար
առնել զբաղումս յեպիսկոպոսաց և 'ի վարդապետաց, որոց
լուրն տարածեցաւ յականջս ամենայն հեռաւորաց և մերձա-
ւորաց զանազան ազգաց. յետ այնորիկ՝ ըստ որում անուանոց
է յատուկ 'ի զենուլ և 'ի մերթել ընկերացն, արաբել դար-
ձեալ այլոցն նաև 'ի վայրկենին մահու բաղում անհոգու-
թեամբ իւրեանց վասն ինքեանց հետեւեալ զենմանցն և քեր-
թելոյն զկնի նոցա։ Հարկադրեալ եղէ ես պահպանել զպա-
տիւ ազգանոյ որդիութեան և մարդկային բանականութեանն,
թէպէտ և խղեմբ համարեալ յայլոց վարդապետ և տկարամիտ
անձինք. ուստի 'ի վերայ աւետարանական հրամանացն յոր
հաւատացեալն եմք. թէ՝ Այլ որ ասիցէ զչարն բարի և զբ-
բարին չար։ Եւ ես կարողացեալ լռել յետ այնչափ հռչա-
կեալ չարեաց բաղմացելոց 'ի վերայ Աթոռոյ միաբանու-
թեան մերում՝ առաւելապատիկ յաւսով իմով 'ի վերայ աղ-
քայամայելոյ հոմանաւորութեանց և բարերար հոգացողու-
թեանց արեղանմայալ ժառանգի տէրութեան պարսից, փու-
թացայ ամենախնամարհաբար խնդրագրով իմով դիմել 'ի
ներքոյ պաշտպանութեանց հզօր ձեռին նորա՝ ծանուցանելով
նորին արձրութեան վասն ծանր ծանր նեղութեանց և վշտաց և
վասն անտանելի անարգութեանց հասեալց մի զկնի միոյ 'ի
վերայ կենդանեաց և ենջեցելոց եղբարց իմոց միաբանու-
թեանց Աթոռոյ Յերուսաղեմի, ամենեին անխաւն 'ի ստու-
թեանց և 'ի զրպարտութեանց կատարեալ Հշմարտութեամբ.
ունելով վասն ամենայնին կատարեալ իմոց մտաց զաւետարա-
նական բանն Իրիստոսի Աստուծոյն իմոյ, թէ՝ Որ սուտ խօսի,
հայր նորա ստութեան է։ Եւ ընդ այնմ խնդրեցի 'ի նորին
արեղանմայալութենէ վասն ամենայն իմոց գանգատանաց՝
ոչ ինչ կամելով հարցանել յամենայն վարդապետաց որք
զատանին յԱթոռն Յերուսաղեմի, այլ հարցանել այնոցիկ որք

գտանին արտաքոյ 'ի տէրութեան ռուսաց և օսմանցւոց և կամ պահանջել յինէն ըստ օրինի ղհարկաւորսն վասն ապացուցութեանց Հնմարտութեան և ստութեան ամենայն գրելոցն յինէն. բայց ընդդէմ ամենայն յուսոյ խմոյ առնորին արեգակնափայլութիւն և ընդդէմ այնպիսի խնդրանաց խմոց, ընկալայ ես այժմ ղհրամարտակ իւրոյ բարձրութեան արեգակնափայլ ժառանգի տէրութեան պարսից. թէ կոչեցի ես Յ.Թառոյ Յէմիածնի ղԱրքեմ վարդապետն և նա եկեալ մի՞ եմ գրելոցն 'ի ձէնջ դտաւ անհամաձայն, և ոչ ես բնաւ զտեղն, և յոյժ անհամաձայն եղեն գրութիւնք ձեր և բանք վարդապետին։ Այս ևս ահա հրաժարեցայ յամենայն մանուակցութեանց խմոց ընդ վարդապետաց եղելոց Յ.Թառոն Յէմիածնի։ Ես յաղագս Ծերունի Կաթուղիկոսին զի հրամայեալ էիր դարձուցանել զնա Յ.Թառն սուրբ Յէմիածնի, ես գոլով ծառայ նորին՝ և նա գոլով տէր իմ, զինարդ եմ ես կարող կամ պահել զնա ընդդէմ կամաց իւրոց և կամ առաքել. բայց վասն ամենայն բանական մարդոյ վկայեալ և հաւաստի է, զի յորժամ տեղին նստելոյ գտանիցի աղտեղեալ՝ լաւ համարի կալ 'ի վերայ ոտից իւրոց կանգուն, և ոչ կարէ նստիլ առանց նախ մաքրելոյ զտեղին. այնպէս ևս նորին բարձրագահութիւնն յետ մեր բազմապատիկ նեղութեանցն և անարգութեանց իւր և Յ.Թառոյ Յէմիածնի և ամենայն միաբանութեանց իւրոց՝ իսկոյն ընդ լսելն վասն աղտեղելոյ զկաթուղիկոսարան Յ.Թառոյ Յէմիածնի, ընտրելն հանարեցաւ կալ յաւերակսն հազարատոյ վանից քան յանմաքուր պալատսն Կաթուղիկոսարանի իւրոյ՝ որպէս և ինքն իսկ քանիցս գրեալ ունի առ նորին արեգակնափայլութիւնն։ Յետ որոյ յաւաջ քան զկորուսանել ամենայն արժանաւորութեանց իւրոց, կարծեմ թէ ոչ կարողանայ նորին բարձրագահութիւնն վերադառնալ Յ.Թառն Յէմիածնի։

Ռարչրաֆոտ-Ղէոն ՀԷՐ

1824 ապրիլի 15.
'ի Թիֆլիզ։

Խոնարհ ծառայ Աբբ Գրիգորոս Հայոց
Վրաստանու-Ղէորգ։

Պատասխանագրություն Սբ. Աթոռոյ Կաթուղիկոսի առ Մեծանուն Պետրոս Յ. Ջիմիածնի։

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Գրիգոր և շնորհիւ նորին Կաթուղիկոս ամենայն Հայոց, և ծայրագոյն Պատրիարք Ա. առաքելական Գահոյ Քրիստոսի, նա և գերահրաշ Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Յ. Ջիմիածնի։

Սրբազնագունեալ միաբանութեան սրբոյ Յ. Ջիմիածնի առաքեալ զաղջոյն Յիսուսաւանդ խնդալ 'ի տէր այժմ և միշտ։ Բայց նեմ համանգամայն և գշնորհակալութիւն իմ յաղագս ջերմեռանդութեանց և հաւատոյստութեանց ձերոյ զորս զգամ բաւականապէս։ Ա. յլ զի յառաջադրելով մեզ զանցիցն զորոց գրեալ էիք 'ի 28. անցեալ ամենեանն ապրիլի՝ յորդոր լինիք գալ առ ձեզ. եթէ գիւրին էր այնպէս գալն իմ առ այժմ, իսկ ընդէր ուրեմն ելանէի ես 'ի սրբոյ գահոյն. ուր կանխաւ յառաջ անձնընծայ բոլորապէս՝ եկեալ էի 'ի ծագաց Աշխարհի։ Գիտէք և դուք, թէ ապահովութիւն կենաց իմոց բաւական էր լինել անդէն, ուստի 'ի ձէնջ դարձեալ հրաւիրեցայ դալ Կայսերական մեծաշուք ուղարկաւորութեամբ։ Այլ զի հղօրագոյն ընդ. յառաջ ելլն տարաբախտութիւնք, այն է՝ զի ոչ առանց մեծագոյն ցաւոց և իսոր տրտմութեանց և ոչ առանց բանաւոր ընտրութեան պարտաւորեցաք դիմել յայսկոյս 'ի համառօտել զլուանկն վերաժամանեալ որպէս յայտ է։ Իսկ ապա մեք որ միանգամ օգտակարագոյն նախադատութեամբ յանձն արարաք զանձինս մեր յուսալի հովանաւորութեանց իւրոյ Կայսերական մեծութեանն՝ ոչ ևս մարթանամք ըստ հաճոյս անձանց վերադառնալ կամ մերովս յաղթահարեալ փոխանամոութեամբ կամ ձերովդ հարկադրող ստիպմամբ։ Ա. յլ զի յառաջարկութիւնք նորին բարձրագահութեան գերաշուք Սարգարին ձեզ զգալի են այնպէս, իբրու զի կամի նա յառաջադրել զաղջին՝ զայլ ոք ընտրել 'ի նորոյ Կաթուղիկոս և պատրիարք փոխանակ մեր։ Եւ երանելի զանձն իմ հանարիմ, և դուք մի քնաւ առ այն ըզվերջս յանձինս ձեր բերջիք փոխանակ զի դատանիմք առ հասարակ երանական ի՞ բարեբախտութեամբ հարստացեալ յայնժամ, յորժամ աղջն հացոց աղգային ի՞ն հայրենա-

սիրութեամբ դարձիցէ՝ ի Ջատագովութիւն հարկաւորացն և կարևորազունիցն ինքեանց յաղագս պաշտպանութեան սրբոյ եկեղեցւոյ և բարեկարգութեանց, յորոց միայն որպէս՝ ի սեպհական աղբերաց՝ յուսալի է վայելել զամենայն զբարութիւնս, համանգամայն և զմեծ վայելչութիւնս հոգևորականաց և մարմնաւորականաց մերազանց, և առանց յատուկ փութոյ նոցին՝ վնասակք և ժառանգութիւնք ամենայն վանորէից և բնաւից հոգևորականաց այս են հանապազ, յորս անշքացեալ առհասարակ հեծեմք և երկնեմք՝ ի ժամանակաց յաւիտենից առաջինք, միջինք և վերջինք։ Այսուքին ես այժմ զայս ձեզ աւանդեմ, զի դուք ամենեքին ըստ ձերոց պարտաւորութեանց բարեպաշտ կամօք ամենայնիւ՝ հոգ կալջիք միաբան սիրով յանձանձել զնրեարս և գտանիլ պաշտպան կառավարութեանց Աթոռոյս, մինչև համաձայն յառաջարկութեանց բարձրագահ Սարտարին եղեալ տնօրէնութիւն ընդհանուր աղգին որպէս վասն մեր, նայնպէս և վասն ձեր և վասն զլեկեալ և նեղեալ գերագահ պատրիարգական Աթոռոյ ամենայն հայոց և մայր եկեղեցւոյ Կաթուղիկէ Էջմիածնի։ Ողջ լերուք և շնորհք Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ հոգւոյդ ձերում միշտ, ամէն։

բարեացակամ ձեզ Կաթուղիկոս
ամենայն հայոց
Էջմիածնի։

1824։ մայիսի 12։
՝ի տարբ նշանի վանս որ՝ ի Հաղբատ։

Պատուական Սեբաստիոյ Կոմերաղիոն գրիչն ։ ։
Սարտարն Էրեանու։ ։

Վերաշուք բարձրագահ Սարտարի հղօր տէրութեան պարսից առողջութիւն և կենաց եղեալ երկարութեամբ ամոյ բազմայ։

Պատուելագոյն գիր ձեր առիս ընկալայ՝ ի ձեռն մեծապատիւ աղայ քեազխին և աղայ խաչատուրին և ծանու-

եաւ զոր 'ի նմա, եւ և լուեալ 'ի բանից բերանոյ նոցին զոր միանգամ խօսեցան որպէս 'ի դիմաց ձեր բարձրագահութեանն յանձնեցեալ ինքեանց. շնորհակալ եմ մինչև յոյժ վասն ամենայնի բարեշնորհութեանց ձերոց առատացելոց առիս։ Ա.յլ վասն հրաւիրելոյդ զմեզ յաղագս վերադառնալոյ այդր յԱ.թոռն սուրբ Լ.Էմիածնի, զոր յառաջադոյն զրեալ առ արեղակնափայլ ժառանգն տերութեան պարսից Ա.պարս միրզայ շահզատայն որ առաքեցեալ է առ նա 'ի ձեռն նորին բարձր գերազանցութեան Կուսակալի վրաստանու Ա.լեքսէ պետրովիչ երմոլովի, և քանիցս եւ գրեալ առ ձեր բարձրագահութիւնն ընդ ժամանակս ժամանակս, թէ ազգն հայոց ինքեանք գիտացին հոգալ զարժանաւորն վասն Ա.թոռոյ Լ.Էմիածնի և վասն Կաթուղիկոսութեան նորա, այժմ եւ աւելի քան զայն չունիմք ինչ գրել 'ի նորոյ, զի մեք առանց արժանաւոր անօրէնութեանց ազգի հայոց տարածեցելոց ընդ ամենայն սահմանս հավանաւորութեան օսմանցւոց, ռուսաց և պարսից, բազմօք զիսրձ առաք՝ թէ անձամբ և անձնական կարողութեամբ մեր զոչ ինչ կարողացաք յառաջ բերել զքրիս և կամ զոգտակարս ոչ վասն Ա.թոռոյն և ոչ վասն միաբանութեան նորա կամ հաստատակութեան ազգի հայոց՝ զոր վասն և մեկուսացեալ այսպէս, ընտրելի համարեցաք մնասուցանել զարտասուս մեր առաջի ամենաողորմած մարդասիրութեան Ա.ստուծոյ և մաղթել զշնորհ մեծ ողորմութեան նորա վասն վերկութեան հոգւոյ իմոյ և վասն այցելութեանց սրբոյ տաճարի Իւրոյ քրիստոսահիմն Ա.թոռոյ Լ.Էմիածնի՝ և միաբանութեան նորա և բոլոր վշտացեալ ժողովրդեան նոցին ազգի հայոց որոց համարիմ զանձն իմ պարտաւոր միշտ։

Ողջ-լեր և ես եմ և եղէց վասն կենաց ձերոց միշտ աղօթարար։

Կաթուղիկոս ամենայն հայոց

1824. օգոստոսի 6։ Լ.փբէմ։

'ի սուրբ Նշանի վանան Հաղբատայ։

Պարարտանագրություն Արքեպիսկոպոսի առ սուրբ ժողովն որոշ Կաթողիկոսի Յաջիածնի

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհան և շնորհիւ նորին Կաթուղիկոս ամենայն Հայոց, և ծայրագոյն Պատրիարգ Արարատեան Յեկեղեցւոյ Քրիստոսի, նա և դերագոյն Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Յաջիածնի։

Լուիցեմ զողջոյն և զսէր շնորհաշարդ արք եպիսկոպոսաց պատուաւորժան անդամոց սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Աթոռոյ և լուսոյ Աստուծոյ։ Որոց և յայտ առնեմ, զի գրութիւն ձեր առիս յամսեանն յուլիսի առանց թուոյ աւուրց՝ ընկալայ 'ի ձեռն մեծապատիւ տպայ քեռազմին և տպայ խաչատուրին։ և ծանեայ, որոյ ոչ դուք և ոչ մեք չէաք երբէք անծանօթ։

Յետ գալ մեր յԱթոռն՝ էր արգիւնաւորութիւն իւիք ակնակալեալ բարեաց, իսկ ընդդէմ ուրեմն ընտրելի համարիւր մեզ այս վիճակ. այլ զի բազում տարաբախտութեամբ մարոյ արժանի դատաք տեսանել զամենայն անվայելչութիւն Աթոռոյ մերոյ և աթոռայնոց 'ի ցաւս սրտի մեր և ամենայն հաւատակուռ ազգի հայոց, արժանի դատիմք հեղուլ այսպէս առաջի տեառն զարտասուս ապաշխարանաց յանձնեալ նմա զանձինս մեր և զԱթոռ իւր սուրբ։ առ որս աւելի քան զգրեալսն մեր յառաջագոյն չունիմք երկրորդել նոր խմն։

Այլ և վասն մահսէրին ստորագրեցելոյ 'ի ձէնջ զոր տարեալ էր ընդ իւր բարձրագահ Արարատն 'ի դաւրէժ, և 'ի վերայ այնր ևս յաւելեալ անդէն ինչ ինչ՝ ստորագրեալ էր նորոգ զնայն զի առաբեսցեն առ ազգն հայոց 'ի կոստանդնուպոլիս. կանխաւ յառաջ և մեք իսկ զընտրութիւն մեր 'ի նմին կայացուցեալ վասն յուսացեալ բարեաց և վայելչութեանց, այն է՝ զի ձեզ և իւրոյ բարձրագահութեան հզօր իշխան Արարատի փութացաք գրել յամսեանն սալրիլի 15. թէ Ազգն հայոց ինքեանք դիտացեն, որպէս և անօրինել յօժարեսցին վասն արժանաւորութեանց ընդհանրական Աթոռոյ Յաջիածնի և Կաթուղիկոսութեան նորա։

Իսկ զի զրէք հոգ կալնուլ վասն վճարելոյ զպարտան այսրէն կամ այդր, և եղիցի յայնժամ դաղն մեր ըստ կամաց

մերոց. դուք ինքնին իսկ վկայ էք զի ես իսկոյն զնոյն իսկա-
կան հին բարեաց վասն անձին և Ս.Թոռոյ և ամենայն հո-
գևորականաց և մարմնաւորականաց մերոց ճանաչելով, անդէն
'ի Պ արաբոզ՝ յառաջ քան զամենայն պարտաւորեալ զՍերսէս
արք եպիսկոպոսն՝ զանձն նորա ենթադրեցաք այնմ ծանրա-
կրութեանց փոխանակ մեր ամենեցուն. որպէս և նա ինքն
գտեալ կարեկից իսկապէս և ստանձնեալ կամաւորութեամբ
ինքնին իսկ ինդրամատոյց եղև գրով առ տիրօղ ատրպատա-
կանի Ս.պպաս միրզայ ժառանգն հզօր տէրութեան պարսից,
հրաման տալ ինքեան կարգադրել զՀոգևորականն Ս.Թոռոյն
ըստ արժանաւորութեան իւրաքանչիւրոց այլ և զկառավարու-
թիւն Ս.Թոռոյն ըստ վայելչութեան նորին առանց ներհա-
կութեան այլոց. և առնել վասն պարտապահանջից զարժա-
նաւոր տնօրէնութիւն՝ զի կամ 'ի Թիֆլիզ կամ անդէն 'ի
Թէվրիզ 'ի ներքոյ վերահայեցողութեան իւրոյ բարձրու-
թեանն զհաշիւ սարաբեալ ընդ ամենեցուն 'ի ձեռն երկուց
պարսկաց ընտրեցելոց 'ի պարսիկ պարտապահանջից՝ և երկուց
հայոց ընտրեցելոց յինքենէ, որ ինչ և լինելոց իցէ մայր գու-
մարն՝ տրեցեալ յումեքէ հատուցցէ ինքն իւրաքանչիւրոց նոցին
զպահանջողութիւնսն նոցին հանդերձ յինքենէ յաբբայորդւոյն
կարգադրեալ շահուքն։ Ս.Թէ այդպէս էր կամք ձեր և ծանու-
ցեալ բարին վասն ձեր և վասն Ս.Թոռոյն, հարկ էր ձեզ
ամենեցուն լինել ջատագով այնմ և ոչ թողուլ զոգտա-
կարն վասն Ս.Թոռոյն և վասն հասարակութեան նորին։ Ս.յլ
զի յայնժամ չէրև հաճոյական ձեզ կամ այլոց այն տնօ-
րէնութիւն մեր և անձնամատոյց լինելն նորա, այժմ ես որ-
պիսի այլով իրաւամբ պարտաւորեցից զնա 'ի վճարումն պար-
տուց առանց ինչ գումարաց՝ միայն տուժելով զանձն իւր։
Ս.Ու եթէ գիտցէք, թէ կայցէ առ նա գումար հասարա-
կական՝ և նա ոչ յօժարել հատուցանել զայն՝ գոլով անկա-
րեկից որ, և ես ընդ ձեզ խոստանամ լինել նմա վերժինդիր,
և տալ նմա հատուցանել ընդ միոյ զբաղումս. այլ թէ ոչ,
վասն ամենայն իրաց հարկ է նախ խորհել և ապա առնել
զբարին և զոգտակարն։

Ո՛ղջ լերուք և շնորհք աւառն ընդ հոգւոյդ ձերում
այժմ և միշտ. ամէն։

1824. օգոստոսի 6.
'ի Սուրբ Նշանի վանան
որ 'ի Հաղբատ։

բարեացակամ ձեզ ամենեցուն
Կաթուղիկոս ամենայն Հայոց
Եփրեմ։

Պատուհասագրութիւն Լեռնոյ Սրբ Եղիշեայ առաքելոյ ժողովեալ սրբոց Կաթուղիկէ Էջմիածնի։

Գերապատիւ անդամոց սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի։

Օգբեալն ձեր առիս յամենանոն յուլիսի ընթերցայ. և պարտաւորս զանձն իմ համարեցայ գոհանալ զԱստուծոյ։ Եթէ արժան էր՝ գոհանային և զձէնջ, յաղագս գեղեցիկ յառաջադիմութեանց ներդործութեանցն Սարտարի ձերում դորձակցութեամբ՝ զորոց նկարագրեալ էիք. թէ՝ զմահէրական նամակագրութիւնն մեր 'ի մասին փոխարկութեան սրբազանագոյն Կաթուղիկոսի տարեալ բարձրաստիճան Սարտարն ընդ իւր 'ի դաւրէժ՝ ցուցեալ էր փոխասրբային, ընդ որ հաճեալ և նորս հրամայեալ էր պատրաստել զոմն 'ի ներքին ապաստարաց իւրոց՝ և զոմն 'ի մէնջ, և առաքել 'ի կոստանդնուպօլիս՝ զի խօսեսցին ոչ միայն ընդ ազգին կամ ընդ ազգապետաց Հայոց, այլ ընդ տերութեանն իսկ՝ յաղագս հզօր հրամանաւ կատարելոյ զկամն նորին արքեւափայլ տերութեանն, և ընտրել զոմն վասն Կաթուղիկոսութեան. այլ 'ի գալ Սարտարին Էջմիածին՝ 'ի վերայ բազում խնդրանաց մերոց խնդրեցաք տալ մեզ և զժամանակ տասն աւուրց, մինչև գրեսցուք առ Կաթուղիկոսն և յայս նուագ՝ կամ գալ ինքնին, և կամ առաքել զհատուցանելի դրամն. յայր սակս՝ և զմեզ յորդորէք կամ թողուլ զսրբազնագոյն Կաթուղիկոսն զի եկեսցէ այդր հանդերձ ժողովեալ դրամովքն և կացցէ 'ի հաստատութեան իւրական պատուոյն, կամ թէ առաքել զդրամն և եթ՝ և պահպանել ապտէն զԿաթուղիկոսն որչափ և կամք մեր հաճեսցին. միայն զի դուք զերծեալ 'ի պարտուց մեռելոցն

աղաստ։

Բայց զի ամենևին անսովոր էն այս ամենայն եղանակք բանից ձերոց և անտեղի մինչ խոսառ գրեալքն յիմումն մասին, ցանկամ լսել 'ի ձէնջ. նախ՝ թէ յումմէ՞ արդեօք հմտացայք թէ ես եմ որ չթողում զսրբազնագոյն Օծութիւնն նորին գալ առ ձեզ. երկրորդ՝ թէ ուստի՞ արդեօք համարիք ժողովեալ նորա զզրամս առ իւր. և երրորդ՝ թէ զլուսի եկեղեցւոյ սրբոյ և Կաթուղիկոս ընդհանուր ազգի՝ այդպիսի թիւրութեամբք դատանի վերապատուեալ կամ պաշտպանեալ յօրինաց և 'ի հաւատոց քրիստոնէութեան։ Կամ այդպէս պարտին լինել արքանեակք իշխանք եկեղեցւոյ և քարոզք հաւատոց եպիսկոպոսք և վարդապետք։ Գրեալ իսկ է. ամենայն որ ոչ 'ի հաւատոց է. մեղք են։

Դուք ինքնին իսկ ոչ կարէք զլանալ, թէ խնայեալ իցեմ երբեմն ես զանձն իմ կամ զանձնականս 'ի մասին Ա. Թոռոյն կամ աթոռայնոց. Այս որպէս յառաջ՝ նոյնպէս և այժմ հայեցեալ 'ի վտանէն հղօրացեալ 'ի ձեզ համանձայն հնումն հռչակեցելոյ սաղմոսարանաւն, ԺԹ. 78. ասելոյ կատարելագոյն յօժարմտութեամբ խնամ ստանձնել զամենայն զծանրութիւն պարտուց և այլոցն հարկաւոր համարեցելոց յաղագս ապահովութեանց աթոռայնոց, և վերանորոգութեանց սեպուհ եղելոցն Ա. Թոռոյն՝ արժանաւորութեանց և բարեկարգութեանց, ըստ որոյ և ներկայացուցի ժառանգի տերութեան պարսից զպատուական եղբայրն մեր սրբազան Պարտիրոս աբգ եպիսկոպոսն սիւնեաց՝ հանդերձ գրովք բողբանաց իմոց և խնդրանաց յաղագս աղքատացեալոց հովանաւորութեանց նորին առ այնս։

Ա. յլ զի դատան ձեզ անհաճայք կամք իմ այնոքիկ և ջանք 'ի մասին հասարակաց։ Թախանձեմ զմարդասիրութիւն ձեր ոչ անդոսնել և զպատկանեալսն իմոց պարտաւորութեանց յաղագս սպասաւորելոյ իւրոյ Աստուածարեալ Օծութեանն վշտանելոյ 'ի ձախողական առդիսկեալսն նմին յօտարաց և յիւրոց. և մի՛ համարիլ զիս բռնադատող կամաց սրբութեան նորին վասն ոչ գալոյ նորա այդր՝ ուստի մեկնեցեալն է յաղագս անբաբելի չարեացն հղօրանալոյ։ Ա. յլ եթէ իցեն առայն ձեզ հրապոյրք այլոց, ծանիջիք զայնպիսին թշնամի սրդարութեան՝ թէև գոյին ևս վերապատուեալ առաքելական

կոչմամբ եպիսկոպոսութեանց, կամ լուսաղբեաց ինն հրեշտակային մարդակերպութեամբը. զտեսալ ինձ հաւատարիմ առ սոյն վկայութիւն իմ 'ի վերայ Աւետարանութեանց տեառն մերոյ և Աստուծոյ. թէ՝ Սուտն 'ի հօրէ սատանայէ է։ Ա.յլ և վասն դրամոց ժողովելոց որպէս և գրէբքն, եթէ ունիցիք ցուցանել ինձ, ոչ ստեմ, զի յարգելով զքան ձերում սուրբ ժողովոյ, փութացայց հաճեցուցանել զմիտս իւրոց վերհսկուութեանն առաքել իսկոյն։ Ա.յլ թէ լցեն քանք ձեր վասն գումարաց ումանց հասելոց առ մեզ և ոչ առ տէրութիւն նորին, վաղուրեան հասեալ են այնոքիկ պարտապահանջից Ա. թոռոյն՝ այդը, 'ի Պարաբաղ և աստէն, որոց կարող էք ձեզէն իսկ կշռադատել զհաշիւսն։ և ըստ ժամանակի ընկալնուլ նաև 'ի մէնջ զտուման ամենայնի ստացելոցն և տրեցելոցն մեօք։

Ա.յլ վասն եղանակի դաշնակցաքար յառաջադրելոյն ձեր ամենասատուելի սրբութեան նորին կամ բերել ընդ ինքեան և կամ առաքել զդումարս դրամոց և կալ 'ի հաստատութեան իւրական պատուոյն այդը կամ աստէն, դուք ձեզէն ընտրեսջէք զարժանաւորսն ձերում հաւատոց և կոչմանց, եթէ կարելի՞ լցէ յուսալ երբեմն այգպիսի պաշտօնատարութեամբ ամբարիշտ կամաց և անհաւատ խորհրդոց պաշտպանել ըստ հաւատս, և արժանի գտանիլ սաղմոսել ըստ գրեցելումն։ Տէր սիրեցի զլայելութիւն տան քոյ և զտեղի յարկի փառաց քոց։

Ա.յլ զի գտանիք նեղեալ 'ի ետկի սոհիպմամբ ընկալնոյն 'ի ձէնջ զպահանջմունսն Ի՞ ափար խանի, ոյր վասն և յաղագս ազգու կացուցանելոյ զեղանակ պահանջմանն՝ գրեալ լինի. թէ 'ի գնալ գերասպտիւ եղբօր մերոյ առ սրբայորդին 'ի դաւրէժ, որպէս թէ լուեալ լցէ զհրամանն բարձրութեան նորին՝ հասուցանել զդրամն առեալս 'ի նմանէ կամ 'ի դիւանէն Ճիշտ հաշուառտեսութ։ Հարկադրեալ լինիմ յիշեցուցանել առատնօր առ սոյն. մի՛ թէ չէ՞ արժան յայտնել յայնժամ նորին բարձրութեանն, թէ յաիշտակուելք նորա 'ի կայից երկաց արք եպիսկոպասայն հանգուցելոց՝ ևս և 'ի կայից իմ ներսիսի՝ գտանին առ նա քանի հաղար թուման։ Ա.յլ զի վասն ցանկացեալ ապահովութեանց կամ յաջողուածոյ իրիք 'ի ժամանակին յայնմիկ՝ լուութեամբ եղբօրն, կամ որպէս գրէ առիս

նորին բարձրութիւնն՝ ոչ սակայն նորա զտեղի գրելոցն յինէն յիմում բողոքագրի՝ 'ի մասին այնպիսի յայտնութեանց նորա ծածկեցեալ են 'ի տեսութեանց արքայորդւոյն այնպիսի զրկանք և վիշտք Ա.Թոռոյն և աթոռայնոց, ահա առհաստատեալ ալիցն ասպագայիկ՝ նախընծայ դատանին այդ պտուղք անարժան խորհրդոց և գործոց. ըստ որոյ կորուսեալ այժմ զքանի հաղար թուման Ա.Թոռոյն զայրիշտակեցեալն յառաջագոյն, յաւելեալ էք նմա և զերաւունս նեղելոյ զձեզ զամենեսին այդպէս 'ի պահանջելն զլուսն՝ զբաղմացուցեալն բաղում խարդախութեամբ, որպէս յայտնի են ինձ՝ թէպէտ և ասել ունիցիք չլինիլ յայտնի ձեզ.

Ա.Յդպէս ուրեմն հաւատարիմ եղեալ վասն ամենայն հետևելեացն զինի, մի՝ անփոյթ լինիլ աղաչեմ վասն գրելոյն. թէ՝ Ա.տեցեր զայնոսիկ ոչ պահեն զերկիւղ 'ի մտիս. և ըստ այնմ բարւոք խորհրդածութեամբ կնաամ ունելոյ վասն անձանց ձերոց և վասն լրութեան հոգևորականաց հայոց, ոչ արժան համարիմ բերել յանարժանս այնպիսիս, որպէս այժմ յօժարեալ էիք ընդ այսոցիկ գրութեանց ձերոց առիւրոյ սրբազնութիւնն և առիս՝ ըստ հաճոյս նեղչաց ձերոց մատուցանել և առ կուսակալն զբողոք զնեն յաղագս ոչ թողացուցանելոյ իմ զ Կաթուղիկոսն վերադառնալ յԱ.Թոռն. և կամ ոչ առաքելոյ իմ զդումարս պատկանեալս Ա.Թոռոյն զստացեալսն յինէն 'ի սահմանաց տէրութեան ռուսաց և օսմանցւոց՝ 'ի վճարումն պարտաց։

Ցայնպէս և յառաջ քան զայս ստորագրեալ զմահսարն առաջին, և յետ նորա զոր զրեալն այնորիկ յօգուտ իւրեանց անդ 'ի դաւրկ՝ որոց շարք առեցին իւրաքանչիւրոց վասն Ա.ստուածընկալ զահոյի սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի և վասն ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց ընդհանուր ազգի հայոց, առաջահոս ազգիւրք են ամենապատիկ չարեաց այժմ և յաւիտեան՝ և վասն մարմնոյ ձեր և հոգւոյ արձան նախատանաց. որպէս և նշանակեցն վանահատակքն զ տանեցեալք անդէն առաւել վշտագին կրիւք իւրեանց։ Ա՞չ նոյն էր առարկայն՝ յորժամ առաջնորդ եղեալ դաւթի գերաստիճան հասան խան՝ ինքնին զնա կացուցեալ առաջի այնր արքայորդւոյն 'ի դաշտին խորվերասպ՝ բիւրաւորս 'ի վերայ իմ կոտրելն զբարուրանս ծանուցս և չարամոյնս՝ ոչ ինչ խնայեալ անձին իմոյ զարթու-

ցանել 'ի վերայ զսուր նորին. և եթէ շնորհն Աստուծոյ ըստ անսուտ բարբառոյ իւրումն Աւետարանի. թէ՝ Ողորմիջեր ըզ-Աշխարհութիւնն և Աշխարհութիւնն ազատեսցէ զձեզ. ազատեաց զնս յայնժամ փոխանակ սրոյ առ քերելով յանձն իմ զանպատում շնորհս արդարադատութեանց նորա և առաւելապատիկ խնամոց և հովանաւորութեանց, որովք և ընթացք հոգևորական կառավարութեանց Աթոռոյն ժամանեալ էհաս յիւր նպատակ վառաւոր՝ որպէս և դարձ ընկալնուլ զվկայութիւն դրուատեալ՝ գաղստեամբ սորին վասիագելի սրբազնութեան տեառն Դրիրեմայ 'ի գլուխս երկուց ամաց, և բանիւք բազմաց։ Մի թէ շնորհն այն որ զայնպիսիս անօրինեալ յայնժամ մեզ, չունիցի այժմ առաւել քան զնոյնս անօրինեալ ձեզ 'ի կամին ձեր համաձայն օրինաց քրիստոնէութեան մերոյ 'ի խնդիր լինիլ կարևորացն՝ օգտակարաց վասն Աթոռոյն և վասն ձեր ամենեցուն։

Դիտեմ ես՝ զի բանք իմ այսոքիկ և գիր՝ որպէսև անցեալքն ամենայն լինելոց են արհամարհալք 'ի ձէնջ, այլ ես պարտաւոր զանձն իմ համարելով գրեմ դարձեալ, և գրեցից ոչքան և զօրեցիս՝ մինչև ձեզէն իսկ առնուցուք զչարն որպէս վասն առաջնոցն նոյնպէս և վասն վերջնոց. առ որ և մաղթելով զնեռոլութիւնս ձեր յաղագս հարկին խնամս կոչման որ յայսպիսիս զնս սակայն, եմ և մնամ ձեզ ամենայնիւ հարազատութեամբ հոգւոյ և մարմնոյ և մաց իմոց միշտ 'ի սրտէ ջերմեռանդ՝ և սրբոյ մնջն իմ լուսոյ որդի անձնանուէր։

Խոնարհ ծառայ սրբ Աթանասիոս Հայոց
Վրսպանոս՝ Նէրսէս։

1824. օգոստոսի 6.
'ի Թիֆլիզ։

Յաւելուած.

Գրեր սա հրատարակեալ վերնագրոյ տպագրեալսն Հայոց 'ի հարքն, 'ի Լեր-ինէ վերնագրոյ տպագրեալսէ Հայոց 'ի Փիլիպ. Յաղագս Ծանօ-ղաւելեանց սմանց 'ի հատորումն։

Շնորհազարդ Կաթողիկոս տեր Գրիգորիսոս

առաքելագործ հովիւ.

Ընկալայ վերապատուութեամբ զդրեալդ առ իս յամսեանն յունիսի 20. յաւուր երկրորդի այսր ամսոյ. և լուեալ վասն սեւերակցի Պետրոս անուն վարդապետի հոգւով չարին լցեմբ սուտ եպիսկոպոս ձեւանալոյն, և անաստուածաբար յանդգնութեամբ ձեռնադրելոյն յեկեղեաց գաւառի՝ յեղնակայ քաղաքի զՀենդ անձինս 'ի քահանայ՝ և աւելի քան զ60. յայլ փոքր աստիճանս կղերիկոսութեան, ոչ ինչ զարմացայ. փոխանակ զի անհոգութիւն հովուաց և անխնամակալութիւն աղգի և ժողովրդեան վասն եկեղեցւոյ որոյ՝ վաղու ևս ընդարձակեալ են վասն ամենայն այնպիսեաց զանազանագիտ ամենայն ամպարշտութեանց.

Լոկ զի յանդգնագոյն իմն է լինձ բանս, աղաչեմ ներ-ող լինիլ հարազատ կարեկցութեամբ. հաւատացեալ թէ ըղձակիցս եմ յաւէտ ցնծալ 'ի վերայ ջատագովութեան հովուաց և հօտի հայրենի աղգի և եկեղեցւոյ, և ոչ բնաւ իսկ զգանս իմ յանդուգն առ նոսին՝ 'ի թշնամանս լինձ կարդելոյ։ Գիտեմք կարի քաջ, եկեղեցի Արիստոսի շինեալ 'ի վերայ հիմանն առաքելոց և մարգարէից. և նոսա հանդերձ՝ զեկեղեցի որոյն Գրիգորի մեծի սարթեւի մեր լուսաւորչի՝ ձանաչեմք եկեղեցի Արիստոսի. այլ ցանկամ ուսանիլ՝ մի՞ հոգելի հովիւ, թէ 'ի վերայ որմոյ հիմանց առաքելականաց կամ՝ մարգարէականաց գտանին կարգաւորեալ 'ի հարիւրաւոր ամաց հետէ՝ ընթացք եկեղեցական կառավարութեանց հայոց։

Գիտեմք, եկեղեցի Արիստոսի ըստ օրինակի անդամոց

մարմնոյ յօդեալ և պատշաՀեալ 'ի գլուխն իւր Քրիստոս։ Այլ թէ և զեկեղեցի հայաստանեայց 'ի նմին յօդութեան պատշաՀեալ ցուցցես, յերջանկական վիՀակի զանձն իմ ապահովացուսցես։

Գիտեմք, հովիւ քաջ եկեղեցւոյ սրբոյ զգլուխն նորին՝ զտէր մեր Յիսուս Քրիստոս։ Դու լսեմք զբանչելի զբարբառ նորա։ Դու եմ հովիւ քաջ. և թէ՝ Հովիւ քաջ զանձն իւր դնէ 'ի վերայ ոչխարաց։

Իսկ ապա՝ լեր ձեռնկալու խմոց մնաց 'ի սմին գոյ թակղութեան, թէ զնաՀդ մարթ ելցէ յայսմիկ զընթացս իւր ուղղել առ հովիւս հայկազանց՝ յորժամ տեսանի ակն յանդիմանն հօտ նոցին 'ի հզօրաց և 'ի տկարաց յափշտակեալ և ցրուեալ՝ եթբև զոչխարս որոց ոչ դուցէ հովիւ։

Յայսմիկ ահա լի ցաւօք յանձն իմ տարակուսիմ. որով և առ յանդգնագոյնսն ինձ բռնաբարիմ, յաղթահարեալ յահեղ բարբառոյ պատգամայն Աստուծոյ։ ՈՐՀ. հովիւք՝ որք զանձինս արածէք և ոչ զհոսչենս։

Օ մնաւ ածեմ զելուէջսն հովուաց ինքնաշարժ բերմամբ ըստ հաՀոյս անձանց տարապայման ցանկութեամբ իւրեանց՝ անխնամակալութեամբ եկեղեցւոյ և անխնայութեամբ հօտին. և զարմանամ ընդ յարատեւումն յաջողուածոց նոցին 'ի նմին, որոց փոխանակ նախանձախնդրութեանց՝ ջատագով են միշտ ընդ ամենայն տեղիս ժողովք ժողովրդոց՝ արգարացուցանելով զգրեալն վասն անձանց։ Որք լլկեն զձեզ՝ բարերարք ձեր կոչին։

Տկարանան մինչև յոյժ՝ միտք իմ 'ի խորհրդածելն։ Թէ զի Աստուածային և պաշտելի է բարբառն։ Դանաչեմ զիմն՝ և ճանաչիմ յիմոցն։ Իսկ ընդ էր ուրեմն 'ի հօտի քաջ հովուութեան նորին՝ ծանուցելոյ Աստուածաբանեալ սիրալի ծանօթութեամբ՝ գտանին դարձեալ անհոգացեալք վասն վարձկանաց՝ որդիք հարազատք սրբոյ լուսաւորչին և եկեղեցւոյ սրբոյ նորա. յորոց վասանգին յաւելոյ ոչ նուազ քան 'ի թշնամեաց իւրեանց 'ի դայլոց կամ 'ի գողոց։

Յափշտութիւն կրթին աղգեցութիւնք խմոց մնաց մինչ խսպառ, զի ամենայն սեռի կենդանեաց՝ բարին և օգտակարն միշտ՝ կայ ինչ յարարչէ իւրեանց կարգեալ նպատակ՝ առ որ դիմեալ գան 'ի սկզբանց յաւիտենից բանաւորք և շնչաւորք. այլ ընդ հակառակն՝ և ոչ իսկ նպատակ անգամ նշմարի երբ-

ընդ 'ի դարուց ժամանակաց՝ յառաջամատոյց երբեմն ընտրու-
թեանց մտաց հովուաց կամ հօտի հասարակութեան մեր
աղգի, և այն իսկ շշուրիկ յիմամբ խորհրդածութեան սկիզբն,
յորմէ ընդ յառաջ եկեալ բազմացան հետ զհետէ այնոքիկ առ-
հասարակ՝ որք հրեշտացուցեալ զառաջինն զդեղեցկութիւն պատ-
շաճեալ յօրուածոց եկեղեցւոյ Հայոց, կացուցին բազմագլուխ.
և հուսկ զնոսին երբեմն յօրուածս մեծին 'ի գլուխ՝ որոյ և շնո-
թեալ զամենայն զվայելչութիւն առանձնական կարգի ան-
դամոց իւրաքանչիւրոց, այլ իւրաքանչիւրք դիմեալ հանդէպ
իւրոց երեսաց՝ եթէ մին մուրթայ զպաշտօն հովուութեան փա-
ռաւոր կացուցանել՝ և ընդ շաւիղս ուղղոյ զհօտ իւր առաջ-
նորդել, վարձկանք բազումք ստուերակերպեալք հովուապէս՝
զօրեն հզօրեղապէս ըստ կամս ցանկութեան սրտից իւրեանց
զհովիւն նախ յաջողաձեռն հարկանել, և այնպէս ապա դնե-
լով զհօտն 'ի վերայ անձանց՝ զախորժակ իւրեանց պարարել,
որպէս և ձայնն մարդարէական դատանի կանխաւ յառաջ ա-
ռաւել բարձրացեալ։ Այք ուտեին զժողովուրդ իմ որպէս
զկերակուր հացի, և առ Աստուած ոչ կարդացին։

Այս է որ խրատատեալ զեկեղեցի Հայոց՝ և զբկեալ
զնա յերկնահանդոյն մեծ վայելչութեանց իւրոց, առ ցաւս
սրտի իմոյ տայ ինձ այժմ որպէս յանդգնագոյնս ոմանս զանձն
իմ 'ի վտանկի դատապարտութեան բազմաց կացուցանել.
իբրև զի լսեմ և տեսանեմ հանապազ՝ թէ այր իւրաքանչիւր
համարձակաբայլ ընդ դաւիթս սրբոյ եկեղեցւոյ, առնէ որպէս
և ախորժէ, և ոչ ոք է՝ որ հաճոյից նոցին ընդդէմ դառնայցէ,
թէպէտև յամենեցուն կարէ լինիլ զդալի վտանգն հղօրացեալ,
մինչև աղաւեանսն փոքունք որպէս և զբեզդ՝ յարձակեալ ան-
վեհեր վտահութեամբ 'ի վերայ հրատարակեալ անհոգու-
թեանց հովուաց և անխնամակալութեանց աղգի՝ դիշատեն
այնպէս, մինչև արկանել զժանիս նոսա յարմատս հաւատոց
ժողովրդականն՝ և 'ի հիմունս եկեղեցւոյ Քրիստոսի և հօրն
հաւատոյ սրբոյն Գրիգորի. և տալ յապահանութիւն զա-
մենայն զորբութիւն նոցին, իբրև զայդի լքեալ առանց ցանկոյ
և այցելութեանց. առ որ սոյսս հետև կայ մեայ ըստ հոգեբ-
դոլին առ տիրական դլխոն եկեղեցւոյ սրբոյ զձայն աղաղակի
մերոյ բարձրացուցանել։ Աստուած զօրութեանց դարձ
հայեաց յերկնից և տես, այց սրտի այդ-ոյս պտղոյ և դաբ-

ման տաը սամ. զոր տնկեաց աջ քո։

Ո՛ղջ լեր և ես եմ և եղէց իսկական վերապատուու-
թեամբ ողջամիտ հովուութեանց ձերում արժանանձնու-
թեանցն՝ միշտ ձեզ բարեացակամ։

խոնարհ ծառայ Աբէ Եպիսկոպոս հայոց
Ալբուպանու Նէրսէս։

1824. յուլիսի 10.
'ի Թէֆլիզ։

Վ Ե Ր Ջ

Պապասխանագրութիւն Գերէշ Աբ Եպիսկոպոսի
առ Յովհաննէս Աբ Եպիսկոպոս Կարբեցի։

Գերապատիւ Յովհաննէս շնորհազարդ Աբք Եպիսկոպոս

Վերահռչակեալ եղբայր ի Քրիստոս Յիսուս։

Յաղթահարեալ կրիւք մարդկութեան Հարտարաբանեալ՝ ոգալի հարուածովք մատոյ շարահիւսեալ դրութիւն ձեր առիս յաւուր երեանելորդի անցեալ ամենանն օգոստոսի, ընկալեալ ի 4. ստորագրեալ ամսոյս, վշտացայ սաստկապէս՝ զգացեալ նոքաւ զվտանգն նախապատրաստեալ ձեզ ձեօք՝ ոչ առանց թուլատրութեան շնորհաց երկնից, և ոչ առանց թելադրութեանց ոգւոյն չարութեան։

Զի որ բռնաբարիմ ի պարտաւորութենանց հաւատոյ և կաշմանց մերոյ մաքուր վշտակցութեամբ հետևեցուցանել և զոյն առ ձեզ. հայցմամբ պաղատանաց արժանաւորացն միջնորդութեանց առ ամենաբաւականն Տէր՝ որ միայն զօրէ լնուլ զամենայն զթերութիւն և զթիւրութիւն մատոյ և կամաց և հաճոյից ամենայն չարիս և հասակի։

Սրբութիւն ձեր գրէ առիս՝ թէ ընթերցեալ անդ ի Կարին զպատասխանագրութիւնսն ձեր ի 10. և ի 14. յուլիսի, այն զի զրեալ էիք թէ զտարակուսեալդ ի վերայ երկուց Հանապարհայ թողաք և մեք ի կամս Տեառն և ի ձեր հաճոյս ուղղել զձեր դնայս. եղբակցութիւն ձերոյ մատոյ յայտնի ծանուցեալ այնու, և զմտաւ ածեալ զերևելն և զաներևոյթ օգուտն և զնատն տարաբախտս, ուղղեցի զԱ. Թոռն զՀանապարհ իմ, և յետ քանի աւուրց ըստ նորին բարձր հրամանի, այն է Սարտարի, զնայեալ ի տեսութիւն նորա քանի եղբարքդ, ընկալաւ զմեզ ոչ սակաւ շնորհս ցուցանելով՝ Հասին յայն օր և հարիւրապետ Քեազիմ և Յայտատուր աղայքն բաբաքքդ, յորժամ և նորին բարձրութիւնն հրամայեաց պատրաստել զմիհէրատար և յղել ի մեծն Պօլիս ըստ առաջին մատոյ. առ որ անկեալ ի ծունկս նորին՝ թախանձեցաք

տալ և ժամանակ մինչև կրկին հասցի աղերս մեր առ ձեր սրբուն. ընդ որ օգնական եղեալ և յարգի տաճիկք և մերոցդնեայք, եղև ներող և կատարիչ մերոց խնդրուածոց։ Զոր որ խոնարհեալ՝ խնջեալ խորհրդական եղբարք Անոդականք, ոչ վատահացան կրկին աղերսակու լինիլ առ ձեր սուրբ եղբայրութիւն, այլ զհանգոյն Աստուածանմանիդ բարեխօսել մարթացան՝ ընդ որոց և ես համաձայնեալ՝ պաղատիմ սուրբ և անկեղծաւոր մտաք. մի՛ մեզ՝ մի մեղ սուրբ եղբայր, այլ անուան քում տուր զփառս. ընդակ զաղաչանս աղաչաւորաց. հատուցանելով զպարտս պարտաւորաց. ո՛ հոգի եղբայր՝ մեք կասկածոտ և երկիւղած անմիտ հովիւքս ըստ բերմանդ մեղաք. խնդրեմք, մի՛ ՝ծալ զպատճառս, այլ խնդրանաց մաղթողիս միայն լինիլ իրաւախոհ 'ի փառս Աստուծոյ և 'ի պարծանս բարձր անուան ձեր։ Եւ եթէ մաղթանք մեր լինիցին ընդունելի ձեզ, այն է որ հրամանաւ իշխողին տեղւոյս անտարակոյս դամ 'ի տեսութիւն և 'ի շնորհակալութիւն 'ի դիմաց նորին և մեր միաբանութեան, և յայնժամ լինին բաղում յառաջադութիւնք և բարի բանք Աստուծով. եթէ վասն իմ մեղաց լսելի չլինիցին ազերս մեր՝ զոր տէր մի՛ արասցէ, հարկ է առաքել զՅովսէփ վարդապետն առ մեզ ընդ առ 'ի մինչ տրեցեալ ձեռագրոյն վասն աւանդիցն՝ զի 'ի ներկայութեան որոց և հրամայեսջիք, տեսցին զհաշիւսն պրպէս աւանդիցին՝ նոյնպէս և նուիրակութեանս։ Սակայն երանի լինի և լաւ՝ ձեզ, եթէ տեսութեանդ արժանի լիցուք։ Այլև աւել պակաս բան թէպէտ շատ հասանիցի յականջս ձեր 'ի մերս դիմաց, բայց անվրդով կացջիք՝ մինչ 'ի պարզել պղտորութեանն. ըստ որում էլ աղբի չուտալ աղբի։ Ունիմք և այլ հարկաւոր գիտելի բանս պատուիրեալ բերանով սոյն գրարեր Ամէնեին յորմէ ունիք լսել և գիտել։

Տարաձայնութիւնք նախատեղծիցն 'ի միաբանութեան իւրեանց, և միաբանութիւնք նոցա 'ի տարաձայնութեան իւրեանց՝ մերկեալ զնոսա յանպատում շնորհաց իւրեանց և 'ի բնութիւն վայելչութեանց, արարին անուղղակի զԱստուծատունին եղեմ։

Զոր երանելի լիցուք եթէ տարաձայնութիւն ոչս 'ի մերում միաբանութեան, կամ միաբանութիւն 'ի տարաձայնութեան՝ ոչ նոյնպէս կապեալ և զմեզ, գգալել ունիցին նաև զնի-

մունս Աստուածեղէն հաստատութեանց որոյ Տաճարին Աստուծոյ և մայր Աթոռոյ ամենայն Հայոց։ Զոր յոյժ մեակ մնայ ինձ այժմ պաշտելի բարբառն Բրիստոսական։ Դրունքը դժոխոց մի՛ յաղթահարեսցեն զեկեղեցի իմ։ Զոր առնս հանապազորդեալ աղաչանք որոյ եկեղեցւոյ։ Միշտ անշարժ պահեսցի զԱթոռս հայկազնեայ։

Յամենայն առաձս իմասանոց վկայեալ լինի թէ՝ խորհրդով և միաբանութեամբ շինի քաղաք և տուն։ Զոր բան Տեառն զանի բարձրացեալ։ Ամենայն տուն բաժանեալ յանձն իւր՝ աւերի և թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ կործանի։

Զպարկն տագաւեմ զորրութիւն ձեր յայտնել նախ ինձ վասն խորհրդոյ ձեր և ամենայն եղբարց խորհրդականաց, և վասն միաբանութեանց յօդելոյ 'ի խորհուրդս նախադասեցեալս յաղագս բարութեանց որոյ Աթոռոյն և աթոռական նորին Աստուածարեալ Օծութեան վերատնելոյ յիւրումն ծագեալ ծերութեան և հասարակութեան հոգեւորականաց և մարմնաւորականաց նոցին. և այնպէս ասա հրաւիրել զիս 'ի պաշտօնատարութիւն այնմիկ ձերոյ խորհրդոյ և միաբանութեանց. և կամ հրատարակել զինէն զինչ կամք իցեն ձեզ կամ այլոց։

Զի զի ձեռն Տեառն երևի միաբան 'ի միաբանութիւն մեր, արդ ահաւասիկ մատուցանեմ ձեզ զնկարագիրս հարազատութեան խորհրդոյ իմոյ և կամաց։ Բազոյր իմ առ ընդակնոսիալ ժառանգն տէրութեան Պարսից և առ զերբատիճան բարձրագահ Սարասարն վասն ամենայն զրկանաց և յաւիշատութեանց և նեղութեանց վերաժամանելոյ Աթոռոյն և Տեառն մերում և եղբարց միաբանութեան կենդանեաց և ննջեցելոց տպեալ և արձանացուցեալ՝ յորս տեսանիք և զոկարութիւն իմոյ թիկանց ինձէն իսկ կամակար յօժարութեամբ իմով խոնարհեցուցեալ 'ի ներքոյ ծանրութեանց բազմազումար պարտուցն հատուցմանց, յոր այժմս զուրգ տարժէք ենթադրել ձերով թախանձանաց։

Տեսանիք նայնպէս և վասն տարաձայնութեանց ձերում միաբանութեան 'ի նմին՝ վկայեալ 'ի նորին բարձրութենէ Աբքայրդուսն։

Աստուցանեմ ընդ այնմ և զօրինակ գրութեան իմոյ առ ձեզ յամի 1818. յունվարի 22. որով խնդրեցի յայն-

ժամ ծանուցանել ինձ, թէ յետ վախճանի իւրոյ՝ զոր մասն հոգւոյ իւրոյ ուժ յանձնեալ բարեբիշատակ Դաւթի Հայրն, որոյ մինչև ցայժմ ոչ արժանացայ ընկալնուլ զդարձն։ Կցորդեմ ընդ նմին և զօրինակ գրութեանն իմոյ յետ նորա առ 'ի հաւատարիմ կացուցանել զայն նախազգեցութիւն իմ ձեզ. համանպաւծայն և նորոգել զարձեալ այժմ զնոյն գուշակ իմ ձեզ, թէ ոչ ես 'ի հիացումն և 'ի սքանչացումն այլոց, այլ բոլորապէս իսկ 'ի կորուստ և 'ի կրծանումն անձանց և Աթոռոյ ամենայն Հայոց ունիք կարդել զերիւնս ձեր յայսմ հետէ 'ի ձերում տարաձայնութեան և միաբանութեան։

Զաքեմ առ ձեզ և զօրինակ գրութեանն ձեր առ ինձ ձերով իսկական մատամբ յամի 1820. յունիսի 19. որով 'ի Հանապարհորդելն ձեր հրատարակաւ յաղագս աղատութեանց Աթոռոյն 'ի պարտուց, առանձնապէս ես գրիչ առեալ։ Ներելին դիտաւորութիւնս իմոյ, եթէ յաջող մտցուք 'ի Պոլիս, և զացուք շնորհս 'ի նոցանց, այն է որ սորա վերսարկութիւն լինի Աստուծով. թողցուք եղանակ բանին, միայն առանց այլևայլ կարծեաց սուրբ և մաքուր մաքս տուր ինձ ընդ խորհուրդ Հոգի սուրբ, թէ յոյր վերայ արկցուք զվիճակն։ Սուրբ խորհուրդ է՝ զոր տամ ձեզ խորհրդարար. ուրեմն հաւատա բանիցս և տուր ինձ խորհուրդ սուրբ, յուսակ և ամբիծ, զի արասցուք ըստ այնմ։ Եթէ վերսարկութիւն չլինիցի սա, անհնարին է այլ իմն եղանակաւ զարել զսա և կամ զերծ կացուցանել զԱթոռն յանտանելի պարտուց. Եայլն։ Եւ թէ՝ զԵրբեմ Պարդապետն թողուլ կամիմ, զի ոչ առաւել ընդարձակ լիցի աւերիչ Տէրս մեր. և զերկրորդ աւերիչ Յոհաննէս տանել անօրինեցաք։

Կերկայացուցանեմ ընդ նմին և զօրինակ գրութեանն առ նորին Վերհաստատութիւնն 'ի Պրուսայ քաղաքէ 'ի 25, Նոյեմբերի այնր ամի, սանրապրութեամբ ձեր և զարձակցաց ձերոց երկուց Ստեփաննոս Աբբ Եպիսկոպոսացն՝ որում ես յառաջագրելով զայս նեբբին խորհրդածութիւնս ձեր, խնդրեալ կամ պատառել զայն և կամ պահել 'ի նեբբոյ վանականաց իւրոյ՝ զի մի ձայնն հասեալ այսր 'ի Թիֆլիզ, խափան լիցուք մեք այնմ բարեխորհութեանց ձերոց՝ որպէս և եղեալ եմք յառաջագոյն։

Եւ 'ի վերայ տյսոցիկ ունիք առ ձեզ զմահուերագրութիւնն՝ որոյ յառաջ քան զաւուրս ընկալայ ես 'ի Կարնոյ վաճառականաց զօրինակն հասեալ առ նոսա 'ի Թէվերիոյ. յորում գրեալ լինի՝ թէ քանի ամաւք յառաջ զօրքն Ռուսաց ընդ զօրապետութեամբ Ղենեբալ Նեսվեսայովին եկեալ Յ.Թոռա՝ կողոպտեալ տարան զամենայն ոսկեղէն և արծաթեղէն անօթսն Յ.Թոռոյն. ընդ որոց գնացին և բնակիչք Երևանու՝ 'ի պատճառս որոյ պակասութիւն պատահեցաւ մանկց Յ.Թոռոյն, և վասն ինչ ինչ շինուածոց հարկաւորաց՝ յառաջացան պարտք. որոյ աղագաւ գնացեալ Կաթուղիկոսն 'ի Ղարաբաղ՝ կալեալ էին անդր և զ Գերեսէս Արդապետ Յ.Ռաչնոցդ Տէրէսոյ՝ որում յետ համայն խորհրդածութեան յանձնեալ Աբբայն Կաթուղիկոսն զամենայն զկառավարութիւնսն ձեռագրովք զի բաց յանուանէ Կաթուղիկոսութեան այլ ամենայն գործագրութիւնք և կառավարութիւնք եղեցին կախեալք 'ի կամաց նորին. և յորմէ յայտնմանէ Գերսէս Յ.Ռաչնոցդ սկսաւ հաւաքել զամենայն արդիւնսն Յ.Թոռոյն յամենայն քաղաքաց և յամենայն կողմանց՝ որպէս թէ ունիցի հատուցանել զպարտսն. իսկ այժմ երկու տարի և կէս եղև՝ այլ ոչ պարտքն հատուցան և ոչ Կաթուղիկոսն վերադարձաւ. զի խորհրդականք Աբբայն Կաթուղիկոսին ոչ օգուտ համարեալ զվերադարձումն, խնդրեցին քանի ամիս ժամանակ. այլ ամիսն տարի եղև և ոչ հատուցան զումարքն պարտուցն և ոչ վերադարձաւ Կաթուղիկոսն. այլ յայտնի է մեզ և ամենեցուն՝ զի պատճառ այսմ ամենայնի է Գերսէս Յ.ռաչնորդն, որով և երևի լինել ոչ կամեցող բարեաց Յ.Թոռոյն. և զոր կարէն, ոչ ունի խնայել յայսմ մասին. և այլն։ Ունիք նայնպէս այդր առ ձեզ և զօրինակ զրոյ Թեանն եղբարց խորհրդականաց որոյ Յ.Թոռոյն առ Կոստակալ կողմանցս յանցեալ ամսեանն յուլիսի կամ օգոստոսի՝ որով գանգատեն զմինչ համաձայն գրեցելումն 'ի մահտեսի Իւրեանց՝ թէ 'Գերսէս Եպիսկոպոսն ժողովեալ յամենայն քաղաքաց Իւրաքանչիւր սահմանաց զարդիւնսն Յ.Թոռոյն, ոչ զպարտս Յ.Թոռոյն հատուցանէ և ոչ զԿաթուղիկոսն թողու գալ Յ.Թոռոն։

Ընկալայ ես այժմ նաև զայլ գիր անգամս 'ի Կարնոյ. որով գրին առ մեզ՝ թէ բարձրացաւ ձայն տրանդմանն թէ յաթոռոյնոց և թէ ոչ յոչոց՝ երբև թէ դուք տրդել և

խափան եղեալ մեծի տենչանաց Սրբազան Տեառն մերոյ 'ի սուրբ Աթոռն վերադարձման, ընկալեալ իսկեր 'ի նմանէ յետակար հրաժարման 'ի Կաթուղիկոսական գործառնութենէ. և որպէս թէ նորին Մեծութիւնն թախանձանօք և արտասուօք անգամ խնդրեալ է և խնդրէ 'ի ձէնջ՝ թոյլ տալ ինքեան դնալ 'ի սուրբ Գահն. այլ դուք ոչ թողացուցանէք, ասելով թէ չունիս դու միւսանգամ տեսանել զնոյն տեղն, այլ այդրէն հիւծելոյ են ոսկերք քո, և այլն։ Տեսի և զամանս մի օրինակ յերկոտասան գրութեանց ձերոյ խորհրդական եղբարց Մինօթակնաց առ երկոտասան անձինս ընդ այսմիկ ձերոյ առիս ներկայ գրութեանց. յորս յամենեսին կամելով արդարացուցանել զանձինս և պարտաւոր կացուցանել զնորին Սրբազնագոյն Մեծ Հայրապետութիւնն՝ համարձակաբարբառ լինին գրել. թէ հարցանիցէք ուստի կայսու սիրելն պարտուցս բարդութիւն, ոչ դանդաղիմք ասել ձեզ։ զի նախ առաջին 'ի դալ այսր Սրբազնագոյն Հայրապետին մեր՝ եբեր նա պարտս 'ի Ռուսաստան, զոր ապարեալ էր վասն դարձոյ Սրբոյ Աթոռոյս. գնացին և յոլովութիւնք դրամոց 'ի վերայ վերանորոգութեանց տանեաց սրբոյ Տաճարին. բարդեցան 'ի վերայ այսոցիկ և զանազան ծախք ընծայիցս՝ զոր տայր Հոգևոր Տէրն մեր ըստ հարկի պահանջմանն. այլ դուք մի՛ զարմանայք 'ի վերայ պարտուցն, այն զի Սուրբ Աթոռն Երուսաղէմի գտանի 'ի ներքոյ եօթն հազար քսակ պարտուց։ Ահա երեք տարի են դալոյ Կաթուղիկոսին այդր, յորմէ կարգեցաւ Հոգևորական նախապատիւ եղբայրն մեր Գերասիմ Աբբ Անպիսկոպոսն վասն ամենայն գործառնութեանց Աթոռոյն՝ ընդ որ հաճեցաք և մեք, ճանաչելով զնա այր մեծագործ և կատարելագործ ինքեան յանձն եղելոյ՝ որոյ և բարեկարգ կառավարութեանցն դատք հպատակ մինչև ցայսօր. առ որ քանիցս անգամ զթութեաղերսանաց գրեցաք աղաչել զմեզ 'ի պարտուց հանձարեղ զգաստութեամբ և կարող զօրութեամբ որպէս և իսկ. սակայն նա բացատութեամբ էարկ զմեզ 'ի նեղութիւն տրտմութեան. առ որ խնդրեմք այժմ զմիջնորդութիւն ձեր առ նա. ըստ որում հեռաւորութիւն իշխանացն Պոլսոյ և այլ տեղեաց ոչ ինչ կարէ օգնել մեզ առ այժմ։ թերևս դուք յորդոր լինիցիք նորին Սրբազնութեան աղաչել զմեզ 'ի նեղութենէ պարտուց Աթոռոյս։

Ա. իսկ են և գրութիւնք ձեր ինձ 'ի Կարնոյ յելսն մայիսի. 'ի 16. յունիսի և 'ի 11. յուլիսի՝ որոց առաջնումքն զրեալ առ մեզ առանց իրիք վերադարձութեանց զմինչ, թէ ոչ կամիմ գնալ Յ.Թոռն և ոչ գալ այդր առ Սրբազնագոյն Կաթուղիկոսն, և զիս զմինչ կամիք առնել զն եղեցի և ինձ հաճոյական. Ա.ռանձնական նամակաւ ևս խորհուրդ տայք ինձ զգուշանալ Յ.նոքեանէն՝ որ երկնէ 'ի խորհուրդս իւր գնալ 'ի Բեսարապիայ և 'ի Ռուսաստան և անդուստ մարանչել ընդ իս։ Իսկ երրորդսն որպէս տեսեալ զԵպիսկոպոս ըստ զրեցելումն, աղաչեալ հոգւով և լի դառնութեամբ անխնամ գտեալ ամենայն պարտաւորութեանց՝ որոտաձայնս բարբառելով գրեալ։ Ա՛զբայր՝ լուաք 'ի նորին Մեծութենէ հրաժարական գիր էք առեալ օրինաւոր կերպիւ. բարւոք է. ահա կուտին և բարձրանան ալիք հողմակոծեալ. լսեմք ժամանակ մի հաւոյն՝ ունին յղեալ 'ի Պոլիս, այժմ ևս պատրաստեն յատուկ վարդապետաւ յղել կրկին 'ի Պոլիս։ Հրաժարականն դուք ստանալոյն, ձեզ հարկաւոր է ուր հարկն է ձեռն ածել և անօրինել. գիտեմ ասես ես իսկ եմ։ այն և ես առեմ արժան իսկ ես. ապա հրաժարականն առնուլ և 'ի յանկողնի թաւալել. յայտ է՝ թէ գիտութեամբ խաւար ածես 'ի վերայ լուսատու ծնողաց և 'ի վերայ որբացեալ միաբանութեան նորին. և այլն։

Ա. ձեզ են և գրութիւնք իմ 'ի 10. և 'ի 14. յուլիսի 'ի պատասխանի երկուց առաջին գրութեանցն ձերոց, թէ լուեալ զձայն սուրբ եղբայրութեան ձեր. զիս զմինչ կամիք առնել, եթէ չէր իսկոյն հեռանեալ այնմ թէ վայ մարդոյն՝ որ տարակուսեալ կայցէ 'ի վերայ երկուց Հանապարհաց. այո՛ կարող դատանիլ անդէն առ նմին զեղբայրականն իմոց կամաց առաջի առնել անարատ կրիւք ձերում սրբութեան. իսկ զի երկիսքին ևս խոտելիք 'ի ձենջ՝ գնալն Յ.Թոռն և գալն առ նորին Ա.ՀԱՀԱՊԱՌՈՒԹԻՒՆՆ, մեք ևս տկարացեալ այժմ 'ի Հանուցել զՀաճոյականն ձեզ, ընդ ձեզ համաձայն թողաք շնորհաց Տեառն և ձերոց բնտրութեանց։ Բայց զի սեպհական պարտաւորութիւն իմ և ձեր յայսմիկ դատանի կայացեալ խաղաղս, պարտաւորիմ զբան Տեառն յիշեցուցանել ձեզ առանձնօք. նախ՝ թէ Ա.ՀԱ կրեալ երկուց տերանց ծառայել. զի եթէ զմին ատիցէք և զմիւսն սիրիցէք. և թէ յառաջ ասացի

և ծաղը եղէ երամոյ համակամ եղբայրութեան մերում զամ
ուրթն, թէ Աստուած Սուրբ Էջմիածնի հաւասարել ունին վա-
նից սրբոյ Կարապետի որ 'ի Մուշ. այժմ ևս գերազանցեալ
քան զնոյն տեսանեն աչք բազմոց 'ի նոցունց և լսեն առ-
հասարակ ականջք հեռաւորաց կամ մերձաւորաց ըստ ամե-
նայն պարագայից, թէ մեռելոց և կենդանեաց Գերագահ
Մայր Աթոռոյ ամենայն Հայոց՝ իշխեն տիրապետել իշխանք
հեթանոսք. որոց ապացոյց ունիք արդէն առընթեր զհրաւի-
րակն Աբք Եպիսկոպոս առաքեալ յիշողաց անտի հեթա-
նոսաց. և տեսեալ ևս քան զնոյնս՝ այդրէն իսկ արժանի գտա-
նիք տեսանել զնան՝ վերակացու կամ լծակից հրաւիրակի
ազգաց և ժողովրդոց Հայոց՝ յանուն կամարարաց իշխանաց
թեանց բարբարոսաց հարազատից Սրբոյ Կաթուղիկէ Էջ-
միածնի և լուսեղեցւոյ Հայաստանեայց՝ յրնտրու-
թիւն նորոգ Կաթուղիկոսի առ կենդանութեամբ Ծերունի
մեկուսացելոյ յերեսաց անտանելի չարակրութեանց 'ի նո-
ցունց։ Գրեալ է. ամենայն ինչ փորձեցէք, զլաւսն ընկա-
լարուք. և վկայեալ է՝ թէ փորձեալն կրկին փորձելն յի-
մարութիւն է. առ որովք այլք առ 'ի մինչ 'ի զուր տարա-
պարտուց վարկուցեալ, համառօտեմ զբանս։

Արդ ուրեմն ցանկամ լսել 'ի սուրբ եղբայրութենէ ձեր
վասն ամենայն գրելոցն նշանակեցելոց մի առ մի՝ ըստ կարգի
ժամանակացն իւրաքանչիւրոց։ Այս նախ վասն գրելոցն յինէն
առ ձեզ յամի 1818. յունվարի 22. թէ զի՞նչ ազդեցին
բանքն իմ ոչնոքիկ. հարցմունք ձեզ վասն ոմն կոտակեալ
լինելոյն զմասունս հոգւոյ իւրոց բարեյիշատակ Դաւիթ հօրն.
և կամ զնաիրդ զվախճան ընկալան գրեալքն իմ յետ նորա
յամենայնն մարտի 24. թէ ունիք երկնել մերձ ընդ մերձ
զմեծագոյնս ևս 'ի տիրապէս հիացումն և սքանչացումն ա-
մենեցուն, քան բազմոց։

Այլ վասն գրելոցն 'ի ձէնջ առիս յամի 1820. յու-
նիսի 19. թէ ճշմարտութեամբ էին առիս այն գրութիւնք
ձեր, թէ ստութեամբ։ Այնպէս և վասն գրելոյն ձերոց առ-
նորին Սնծ Բահանայապետութեն 'ի Պրուսայէ՝ ընդ երկրորդ
աւելիս 'ի ձէնջ նախագրեալ Աստուածնոս Աբք Եպիսկոպոսին
Անօքեան և միւս Աստուածնոս Աբք Եպիսկոպոսին 'ի 25 նո-
յեմբերի այնր ամի. թէ՝ հաւասարութեամբ էին այդպիսի

խորհրդատրութիւնք ձեր, եթէ զբօսանք իմն։ Կամ թէ՝ յառաջագրելն ձեր նորին Մեծութեան ծածկել յինէն զայն խորհրդատրութիւն ձեր, վասն առ նա հարազատութեանց ձեր էր, թէ վասն առիս անհարազատութեանց։

Եւ կամ թէ՝ առ ո՞ երկոցուն 'ի մէնջ առանձնոգրութիւնն ձեր պարտ էր ընկալնուլ հաւատարիմ։ Եւ կամ զի՞նչ հարկ ասիպէր զձեզ սաել միւսն կամ միւսումն՝ երբ մին Հայրապետ էր քո և Տէր հոգևոր, և մին եղբայր քո և միաբանակից և պաշտօնակից՝ թէպէտև կոծելի ամենայնիւ վասն բաղմապատիկ յանցանաց իւրոց առ անձն իւր և առ Աստուած իւր։ Իսկ թէ երկոքին ևս էին հաւատարիմք որպէս և են, արդ՝ ահաւասիկ առանց ձերոց աշխատութեանց՝ Սրբութիւն նորին մեկուսացեալ իւրովք, և տուեալ հողոյ զբերան իւր ըստ Արդարէին՝ կայ առանձնացեալ 'ի տարակացութեան այսմիկ, և զսպեալ մինչ խլատառ յամենայն վնասակարութեանց 'ի ձէնջ կանխադատելոյ։ Երկրորդ ապերիչն ևս գտանի այնպէս յիւրումն բացակայութեան։ Եւ մեք ևս գոլով հատու առանձնականացն ձերոյ 'ի ձէնջ, ոչ ինչ ընդդէմ գտանիմք ձեզ։ Իսկ զի՞նչ ապա կայցէ ձեզ այլ ևս արգելք, զի փոխանակ յանդիման կացուցանելոյ աշխարհի գեղեցիկ առաքինասիրութեամբ զնստագովութիւն ձեր կոչմանց ձերոյ և սքանչ Աստուծոյ ձեր լուսոյ Գերագահ Աթոռոյ ամենայն Հայոց և հաւատացանելոյ զպարտսն միաբան գործակցութեամբ, այդպէս յարուցեալ էք գարձեալ միաբնութեամբ 'ի վերայ իւրոյ պատկաւելի Տերութեանն և 'ի վերայ իմումն նուաստութեան։ և ամենայն զօրութեամբ և կարողութեամբ ձերով ջանայք զերկոսին զմեզ հրատարակել յառաջ և այժմ միասապարտս և թշնամիս ձեզ և Սայր Աթոռոյ մերում։

Յանկամ նոյնպէս լսել և յեղբարց խորհրդականաց և յամենայն միաբանութեանց ստորագրողաց զմահսէրական գրութիւնն առ ամենասատուելի ազգն Հայոց 'ի Կոստանդնուպօլիս։ և զգանդատանաց գրութիւնն առ Կուսակալն կողմանաց յամենայն յուլիսի կամ օգոստոսի և անմիջաբար զնի 'ի նոյն օգոստոսի 30։ զերկոտասան խնդրագրութիւնսն առ երկոտասան նախապատիւ անձինս յայսմ քաղաքի վասն միջնորդելոյ առ մեզ 'ի սակի հատուցման պարտուցն։ ընդ

նոսին և 'ի Սրբութենէ ձեր, թէ զի գալուստ զօրաց Ռուսաց յԱ.Թոռն եղեալ է յամի 1803. և աւելի քան զամս տասն յառաջ քան զպարտաւոր լինելն Ա.Թոռոյն՝ առ ի՞նչ վախճան օգտակար գրէին և ստորագրէին այժմ ըստ կարգի պատճառացն պարտաւորութեան իւրեանց։ Կամ զի պատճառք պարտուցն՝ յերկոտասան գլուխեան իւրեանց ցուցանեն նախ զնորին Սրբազնագոյն Տէրութիւնն՝ թէ նա 'ի գալն իւր երբեր զպարտս 'ի Ռուսաստանու, եթէ գիտեն այնպէս ստուգիւ որպէս և գրեն. ընդէր ոչ նշանակեն պարզապէս՝ թէ զո՞ր քան գումար պարտուց երեր նա ընդ իւր. կամ 'ի գումարաց Ծանրատոկոսի պարտաւորութեանց եղելոց յօրէ սկզբնաւորութեան պարտուցն՝ յորոց ընկալեալ գումարքն լցեն հատուցեալ վասն 'ի նորին Սրբութենէ ընդ իւր երերեալ պարտուցն։ Կամ զի պատճառք աղքատանալոյ Ա.Թոռոյն և բաղմանալոյ պարտուցն զնորին Սրբութիւնն ցուցանեն և զոմանս վերանորոգութիւնս. վասն այն ամենայն պատճառանացն որոշակի կարգաւորելոց յիմում բողբոջքի առ ժառանգն Տէրութեան Պարսից՝ զեալրդ կամին վկայել. ահա են այնորիկ առ հասարակ, թէ գոյ Հշմարտութիւն 'ի նոսին. և թէ գուցէ՝ ընդէր թաքուցանեն մինչ խոպառ զՀշմարտութիւնն այնոցիկ։ Եւ կամ զնա՞ր անզգոյշ լինին գրել, թէ Ներսէս Մարգարպետ 'ի Մարաքաղ ընկալաւ զդէր, զի բաց յանուանէ Կա.Թուղիկոսութեան այլ ամենայն գործադրութիւնք և կառավարութիւնք եղեցին կախեալք 'ի կամաց իւրոց. և թէ պատճառ ոչ հատուցմանն պարտուց կամ ոչ վերադաւանալոյ Կա.Թուղիկոսին և ոչ կամեցող բարեաց Ա.Թոռոյն՝ է Ներսէս Բ.աջնորդն։ Ոչ ապաքէն աչակերտք են աւետարանութեան Տեառն ամենեքին՝ և պարտական են առ հասարակ հնազանդել հրամանացն, թէ ծանիջիք զՀշմարտութիւնն և Հշմարտութիւնն ազատեսցէ զձեզ. Բասցին ուրեմն ինքեանք իսկ. ի՞նչ իւիք ըստ կարգի ամենայն միաբանական իրաւանց Ա.Թոռայնոց նուաստ քան զենքեանս կարողանան ասացուցանել զիս, զի այնպէս անդր քան զպայմանս միաբանական իրաւանց իւրեանց չարախօսել զինեն։ Եթէ գիտեն զի հատաքեաց Ներսէս Բ.աջնորդ զամենայն արդիւնսն Ա.Թոռոյն՝ և նոսին իրաւամբ իւրեանց դրեն այնպէս, գիտեն և՝ թէ առաւել քան զոչ հատաքեաց, հատոյց պարտատերոց վե-

ցից կամ եօթանց՝ որոց մուրհակքն ազատեալք՝ գտանին առ-
իս աւասիկ աւելի քան եօթն հազար հինգ հարիւր թու-
մանի. իսկ ընդհէր և զնոցն ոչ ախորժեն գրել, համանդա-
մայն և խոստովան լինել թէ աւելի ևս քան զնոցնս՝ ստան-
ձնեալ կամաւ իւրով զհատուցումն ամենայն պարտուց Ա-
թոռոյն, առաքեաց առ այն և առ Ա.ըբայրոդին Պարսից ըզ-
Մարտիրոս Ա.ըբ Եպիսկոպոս Սիւնեաց յատուկ խնդրագրով
իւրով։ Եւ այն զի զրեն թէ խնդրեցին քանի ամիս ժամա-
նակ, ոչ խնդրեաց,ոչ խնդրեաց, թող հրատարակեսցեն դայն
գրոյն. այն զի և ես զամենայն զգրուեն վերաբերեալս առ դար-
ձուն Սրբազնագոյն Կաթուղիկոսին յԱ.թոռն, և կամ առ
փոյթն իմ յաղագս ազատութեանց Ա.թոռոյն և աթոռոյնոց
յամենայն տարապարտ նեղուեց և 'ի զրկանաց և 'ի ծանրուեց
պարտուց՝ կանխաւ յառաջ ոչ անդէպ համարեցայ հրատա-
րակել տպագրութեամբ. որպէս և տեսանէքդ ահա զտետրակն
առաքեալ ձեզ ընդ այսմ։

Զաւել ևս ցանկամ լսել յատկապէս 'ի ձէնջ՝ թէ
երբ 'ի մտանելն ձեր 'ի Կարին հանդարտ էր հոգի ձեր 'ի
մասին իմ, և չգոյը լինչ տարաձայնութիւն անդէն ամենայն
հասարակութեան քաղաքին որպէս և յայտ առնեն 'ի 16. յու-
նիսի և 'ի 11. յուլիսի գրութիւնքն ձեր. ոչ խառնեաց զնա-
զաղութիւն հոգւոյ ձերոյ այնպէս, զի ընդոստուցեալ իսկոյն՝
վճռադատէք այնպէս, թէ յայտ է զի դիտութեամբ խաւար
ածես 'ի վերայ լուսածին ծնողին. զո և 'ի վերայ որբացեալ
միաբանութեանն նորին. և այլն։ Ոչ առաց քեզ՝ թէ ես
իցեմ առեալ 'ի նորին Սրբազնութենէ զգիր հրաժարական։
Ոչ հաւատարմացոյց ձեզ այնպէս, թէ ես իցեմ եղեալ
արգել և խափան մեծի տենչանաց Սրբազնագոյն Տեառն մե-
ծում յաղագս վերադարձի նորա յԱ.թոռն. և որ արժա-
նաւոր հոգի վկայեաց ձեզ, թէ նորին Ցնծութիւնն թախան-
ձանքն և արտասուք անդամ խնդրէ 'ի մէնջ թայլ տալ
ինքեան գնալ 'ի սուրբ Գահն. և մեք բռնացեալ այնպէս
ընդդէմ կամաց Սրբութեան նորա՝ անհաճելի լին ինքն-
իշխանութեամբ մերով, համարձակիմք ասել Օծելոյն Ա-
տուծոյ և ամենապատիւ Տեառն մերում՝ թէ չունիս դու տե-
սանել միսանդամ զնոցն տեղի. այլ այդրէն հիւծելոց են
տակերք քո։ Դիցուք թէ խնայումն ինձ չէր լինչ ձեզ փոյթ.

խոկ ընդհանր և ձերում անձին եղէք անխնամ, զի զանցեալ հանճարեղացն զօրինօք՝ այնչափ դիւրահաւան դասայք ոգւոցն չարութեան՝ մինչև յետ գրելոյն ձեր առիս զայնպիսին, տեղի ետուք և 'ի բազմութեան ժողովրդեանն տարածանել զինեն զայն շշունչ։ Ա՛յլ ապաքէն քարող դայր Աբաբելական Մի՝ բելիք մի՝ ամենայն հոգւոյ հաւատայք, այլ ընտրեցէք զԽոդիսն եթէ յԱստուծոյ իցեն։ Եւ կանխաձայնեալ էր յիմաստնոյն. Որ վաղվաղկոտ է 'ի հաւատալ՝ թեթեւասիրտ է և փոքրկացի. Մի՞թէ անծանօթ էիր դու քարուց բանաբերին քեզ բարեփոյթ հրաւիրակի քում բազմափորձ Յովհաննէս Աքսկոսոսի քուրտ առաստաղելոյ։ Մի՞թէ անճաշակ էիր բնաձիր կրից կամ ներգործութեանց նորին, զի բանք նորա ըստ այնմ օրինակի մարթացան դերել զմիտս ձեր և ձգել զՀետ կամաց նորա այնքան ապշութեամբ մինչև ոչ ևս զօրել զարժանաւորն բանաւորութեան և գերապանծ իմաստութեան ձեր 'ի դորձ դնել՝ թէ արդեօք դուցէ՞ կարելի 'ի ներքոյ Կայսերական ահեղ հովանաւորութեան, յերկրի՝ հարատացելոյ բարեկարգութեամբ, ազգարարատութեամբ և ապահովութեամբ, 'ի մէջ խուռն բազմութեան ազգաց և ազանց, յանդիման ժողովրդեան եկեղեցւոյ Հայաստանեայց և հօտի սուրբ Լուսաւորչին ամենաբարեպաշտ ազգի Հայոց՝ որոց թիւք դանցանեն աւելի քան երկու հարիւր հազար անձանց՝ 'ի նեղ ընկիճանել այնքան Աբք Կպիսկոպոսի մեոյ՝ զընդհանրական Կաթուղիկոսն ամենայն Հայոց զգերազանցեալն յիւրումն կարողութեանն ըստ առանձնական հնարհայ պարգևեցելոցնմա յԱստուծոյ և 'ի Տերութեանց և յիշխանութեանց աշխարհակալաց։

Ա՛յլ զի քաղցրացան ձեզ մինչ իսպառ բանք նորին կակուղ քան զձեզ՝ և ազդեցին 'ի ձեզ այնքան, մինչև որացեալ ձեր բոլորագէս 'ի նորա կամն՝ կամ 'ի կամն հրաւիրողացն զձեզ նոսա, ընկեցիկ եղեն 'ի ձենջ կամք իւրոյ Աստուածադրոյն Օրութեանն, և հրաւիրանք նորա զձեզ առինքն դրաւոր օրհնաբանութեամբ իւրով։ Ընկեցիկ եղեն և կամք ձեր նախընտիրք ձեզ՝ թէ ոչ կամիմ գնալ յԱթառն և ոչ դալ այդր, ընդ նոսին և հետևեալն կամք ձեր երբորդ՝ բևեռեալ 'ի միտս ձեր վերադառնալ անտի 'ի Կարնոյ ուր հարազատ եղբայրութեանդ էր հաճելի։ Խոկ և ընկեցիկ զոն անդստին մերոց կամաց և բանից և ջանից վաղուրեամն զալով

մեզ քաջածանօթ, այն է զի 'ի պատասխանի ձերոց հարցմանց՝ թէ զիս զի՞նչ կամիք առնել, մեք միայն յիշեցուցանելով ձեզ զՏէրունականն. Ո՛չ կարէք երկուց տերանց ծառայել. և զառաքելականն՝ թէ ամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք. և զառածն՝ թէ փորձեալն կրկին փորձելն յիմարութիւն է. անդէն առ նոսին մեզէն իսկ անպատրուակ հրապարակաբարբառ վկայեցաք՝ թէ առ որովք այլք առ 'ի մէնջ 'ի զուր տարապարտուց վարկուցեալ, համառօտեմ զբանս։

Իսկ ապա՝ դուք ինձ որոշեցէք զՀշմարիտն այժմեան զրութեանց ձերոց առ իս, թէ վասն առանձնական օգտի սեղհական անձին ձերոյ գրէք, որպէս և նշանակէք 'ի գլուխ բանիցն՝ թէ մոռանելով զերեւելն և զաներեւոյթ օգուտն և վնասն տարաբաղխս՝ եկի յԱ.թոռն, զի զՀնօրհնորին Բարձրագահութեանն. անկայ 'ի ծունկս նորին վասն ոչ յղելոյ զմահսերն և զմահսերաստարն 'ի մեծն Պօլիս. և այլն։ Եթէ վասն օգտի Ա.թոռայն և հաւատարակաց միաբանութեան, որպէս և գրէք՝ թէ նորին ոչ վստահացեալ, զիս զՀաճոյս ձեր բարեխօս առ ձեզ կալնուլ մարթացան վասն հատուցանելոյ զպարտն պարտաւորս։ Եւ թէ վասն օգտի իմ կամ խրոյ Վերհասութեանն, որպէս և յուսացուցանեն գրեալքն. Եթէ ողորմութեամբն Աստուծոյ մաղթանք մեր լինիցին ընդունելի ձեզ. այն է որ հրամանաւ իշխողին անտարակոյս գամ 'ի տեսութիւն և 'ի շնորհակալութիւն, և յոյնժամ լինին բաղում յառաջադութիւնք և բարի բանք Աստուծով։

Ա.յլ զի ակնդէք իմ մերձաւոր են բնբանոյ իմոյ առաւելքան ձերում տուրբ Աղբայրութեան, առ այն ուրեմն զի մի զյիմարութիւն իմ խարտառակեցից ենձէն, ապաշեմ առանց անզոսնելոյ զշանս իմ՝ զոհ մարդասիրաբար։ Եթէ գալըստեամբ ձեր 'ի տեսութիւն մեր կամ Աբրամնագոյն Տեառն մերում լինելոյց էին բաղում յառաջադութիւնք և բարի բանք կամ վասն ձեր. Իրամ վասն Ա.թոռայն և Փարանութեանն. կամ Տեառն մերում և կամ վասն մեր, իսկ ընդէ՞ր ապա առանց իրիք ծանրակրութեանց և առանց ինչ տաժանաց ձերոց ոչ յոժարեցայք ձերով ազատիվանն կամիք գալ առ մեզ և յառաջադութեամբ բարեացն այնոցիկ վերադառնալ անդրէն յԱ.թոռն. քան թէ դնացեալ այդր՝ այժմ փութայք

սակ արկանել ընդ խս, զի թէ հատուցից զբաղմութիւնն պար-
տուց՝ եկեսջիք 'ի ցանկալի տեսութիւն մեր հրամանաւ Նորին
Բարձրագահութեանն, իսկ թէ ոչ՝ զտայց ես զսիեալ այսպէս
'ի ձերոց վատթարելի տեսութեանց։

Հրամանս յիս կարդիք. թէ բարիք իմ ոչ վասն Ա-
թոռոյ ամենայն Հայոց և ոչ վասն անձանց ձերոց կամ եղբարց
միաբանութեան, և ոչ վասն Սրբազնագոյն Տեառն չէն ինչ
ձեզ պիտոյ. այլ միայն զի պաշարեսցին լաւագոյն՝ ջատագովք բա-
ղեաց Ա.թոռոյն և բաղմավիշտ Կաթուղիկոսին, և գայթակ-
զութեամբ նոցին առ իս՝ պարարեսցին յաջողաձեռն անան-
հանջելի յառաջադիմութեամբ 'ի բարութեան Ա.թոռոյն՝
ծառայիք այնմիկ։

Բայց եթէ գոյր ձեզ պիտանաւորութիւն, համրկ էր զո-
ւիսն նեղելոց 'ի ցաւոց՝ նախ զպատճառսն յայտնել ուղղու-
թեամբ և բանալ և դնել յառաջոյ տեսութեան աչաց ա-
մենեցուն զվէրսն զայրացեալ, և այնպէս ապա խնդրել զկարեկ-
ցութիւն գործադրութեամբ կարեւորացն՝ դեղոց և ճարտարու-
թեանց. այլ որպէս տեսանի 'ի գրութեան ձեր յայտիկ և
յամենայն գրութիւնս եղբարց խորհրդականաց կամ միաբանից՝
նշանակեցեալս 'ի վերոյ, սեռն գաշնակցութեամբ միաբանեալ
էք առ հատարակ խաւարաւ անդնդոյ ծածկել և թաղուցանել
'ի տեսութենց ընտրից զպատճառսն վերոյ և ցաւոց. և
յարուցեալ 'ի վերայ իմ և 'ի վերայ անձանց ձերոց անդթութիւն
բաղմաւ, թշնամի ձեր և կողոպտիչ Ա.թոռոյն զիս և զզօրս
Ռուսաց ցուցանիք. չարաչար ատեցօղ բարեաց Սրբոյ Աթոռն
իմ Լուսոյ՝ և ոսոխ ոսերիմ Օծութեան և կենաց Ա-
տուաածարեալ Հայրապետին իմոյ՝ անաբժան բանաւոր դատո-
ղութեանց՝ զանձն իմ ենթադրէք, ոչ ինչ բնաւ զգացեալ՝
թէ նոքիմիք և գՀասարակսնամ Տէրութիւնն քամահէք,
ընդ որով ոչ ոք բռնակալ զօրաւոր այնպէս։

Ա.յլ ես այժմ թողեալ զայսցանէ, յիշեցուցանեմ մի-
այն ձերում սուրբ եղբայրութեանն. զի զոր արդ դուք ա-
զաղակէք առ արտաքինսն՝ արտանջելով զմինչ, ես յօրէ մտիցն
իմ այսր՝ անգուլ ձայնարկութեամբ աղաղակելով առ ձեզ, ոչ
գադարեցայ աղաչել զձեզ զամենեսին խնամ ունել կոչմանց
ձերոց և Ա.թոռոյն. և ոչ լինել անհոգ վասն բարոյ կա-
ռավարութեանց։

Մինչ էիք դուք գործովք նուիրակութեան 'ի կողմանս Ղարաբաղու՝ խնդրեցի ձեզ 'ի վերադառնալն ձեր դալ առ-ախ խոստանալով ձեզ նաև ջնախան հանապարհորդութեան ձերոյ՝ զմտաւ ածելով թէ զոր ոչ կարողանամ գրով, գուցէ կարողացայց հաւանեցուցանել բանիւ բերանոյ իմոյ։ Ա.յլ զի ես ինքն իսկ՝ էի անհաւան 'ի ձէնջ մինչև յայժ, զանց արարեալ զնենա՝ յաւելեր քեզ պարծանս անդէն յԱ.թոռն, թէ նա գրէր առ 'ի խարել զիս, և ես գրէի առ 'ի խարել զնա։ և վերջապէս մեք խարեցաք զնա և անցեալ եկաք այսր։ Ա.յժմ ես թէպետ 'ի մասին մեր զգուշացաք մեք չտալ միւս անգամ պատճառս խարէութեան կարծեաց զմէնջ, այլ դուք նոյնպէս վարեցեալ ընդ մեզ՝ հրապուրեալ 'ի բարի խորհրդականաց, վասն ձեր անօգուտ համարեցայք լսել ինչ առ 'ի մէնջ առանց գնոյ, և վասն մեր յայժ օգտակար համարիք լսել 'ի ձէնջ թանկագնոյ հստուցմամբ մեծագումար պարտաւորութեանցն։

Ա.յլ զի մի՛ անիրաւ իմն դատապարտեսցին բանք իմ այսոքիկ, ցձեզ հարցանեմ . երբ դու և Գնօքեանն կանխաւ յառաջ 'ի միասին էիք ստորագրողք խորհրդական գրութեանն առ յուսացեալն 'ի խորհուրդս և 'ի բանս և 'ի գործս ձեր հեղեսամբոյր Տէրն մեր մեծ Գրահանայապետն ամենայն Հայոց վասն գնալոյ ձեր 'ի Թեսարապիայ և վասն վերդարձելոյ զնաղաղութիւն երկուց Սրբազան Ա.ին Եպիսկոպոսացն վերնակաւորաց, զի՞նչ էիք այժմ նոր ես 'ի Կարնոյ գրելդ առ-ախ։ Ծաներ՛ուք և զայս խորհրդարար՝ զի թէպետ յառաջմէ ես գրեալ եմք, բայց արդ ես գրեցից , զի կամին Սրբազան Պատուածատուր Ա.ին և Գնօքեանի գործոցն վերանորոգութիւն առնել. այլ ոչ է օգուտ սրբոյ Ա.թոռոյն. և ծռութիւն խորհրդոց Գնօքեանին որպէս հայելի առաջի աչաց մերոց յայտնի է. զի զէնի առնելոյ այս և այն, կամի դիմել 'ի Թեսարապիայ և յԱ.ժարխան առ Վէտան նոցին՝ որոց շնորհիւն մաքառիլ ընդ ձեզ. և այլն, և չմտանել իսկ 'ի սուրբ Ա.թոռն. և մեք ոչ եմք նախանձու, այլ վասն օգտի սրբոյ Ա.թոռոյն գրեմք։

Սուրբ եղբայր՝ տուր ինձ առ սոյն զսուրբ պատասխանի, թէ զերանդ արժան իցէ ինձ զսոյն խորհուրդ ձեր կշռադատել վասն իմ կամ վասն Ա.թոռոյն. խորհուրդ և յառաջ-

գրութիւն սուրբ եղբայրութեան՝ օգտակար վասն Ս.Թոռոյն և վասն իմ, թէ մերկեալ ամենևին 'ի սրբութեանց, վնասակար ամենայնիւ։ Պէտք թէ ծառութիւն խորհրդոց Անոքեանին յայտնի էր առաջի աչաց ձերոց յորժամ ընդ ձեզ 'ի միասին ատորագրէր զայն գիր ձեր խորհրդական։ Իսկ ծառութիւն խորհրդոց երկուց յիշեալ վիճակաց Ս.ոչ Եպիսկոպոսացն կամ պակասութիւն շնորհաց նոցին առ իս ուստի եղև ձեզ յայտնի, զի կարող եղէք որպէս հաւաստի նշանակել և զնոցանէ՝ թէ լինելոց են նոքա ջատագովք ծառութեան խորհրդոց Անոքեանին ընդ իս, և դորձակիցք նմա 'ի զօրացուցանել զմաքառումն նորա ընդ մեզ։

Ս.ոչ ուրեմն ըստ զրեցելումն 'ի սրբութենէ ձեր առ իս՝ թէ լեր իրաւախոհ, և ես զնոյն 'ի ձէնջ խնդրեմ. լեր իրաւախոհ առ սոյն և առ այլս սոյնպիսիս։

Յառաջագոյն հռչակաւ և աղաղակաւ խոստանալով զհարազատութիւնդ վասն Ս.Թոռոյն և վասն Սրբազնագոյն Պատուղիկոսին, դիմիցք տարուցեալ 'ի Պատանդնուալոյնս լինել ջանացիք 'ի գտանել զօգնականութիւն պարտուցն հատուցմանն. այլ ներքին կամօք զանխուլ խորհուրդ 'ի սրտի ունիցիք ընկենուլ յՍ.Թոռոյ զՕծեալն Ս.ատուծոյ։ Ս.յժմ, ևս զի նոյնպիսի աղաղակաւ յօգնականութիւն ձեզ կոչելով զբազումս՝ դրէք առիս թէ հատո զպարտսն Ս.Թոռոյն և վերագարձո յՍ.Թոռն զ Սրբազնագոյն Պատուղիկոսն, ներքին կամք ձեր առ իս կամ առ նորին Սրբութիւնն արդեօք զի՞նչ իցեն։

Սուրբ եղբայրդ իմ 'ի գոն ձեր կարդեալ 'ի միջի աշխարհախումբ բազմութեան ազգի Հայոց յատկապէս առ 'ի հաստուցանել զպարտս, չյաժարեցար զանձն քո պարտաւորելումբք վասն թեթևացուցանելոյ զծանրութիւնն պարտուց. և յամենուի բանոց դ լեաւորագոյն վիճակին նուիրակեցելոյ 'ի ձէնջ հատուցեալ միայն քսան և վեց հազար մէկ հարիւր զուարուչ անարժան համարեիր գրել. մի՛ ևս յղեսջիք յանուն իմ զգիր հատուցման դրամոց ումբք. զի հազիւ ուրեմն բաւականանան ծախուց իմոց. և թէ համարեցէք զիս որպէս մոռեալ և սիրաշահ օգտութեամբ թողէք 'ի կամս իմ. ևս և մի՛ համարիք զիս միսբան, այլ ստոյգ ոք օգտակամ Ս.Թոռոյն. իսկ զիարդ այժմ այդպէս ջերմեռանդագոյն բերմամբ առ Ս.Թոռն և աթոռայնոն, հրաւիրէք զիս 'ի փոքր վիճակի ի-

մուտ յայտմիկ առատանալ 'ի հատուցանել զպարտսն կամ վիճակային արդեամբք և կամ ընկալնելով զպարտս յայլոց։ Աստուածային և պաշտելի է վճիռն. որով չափով չափիք, չափեսցի ձեզ. ըստ որոյ և ձեզ արժան է ունել յամենայն բանս և 'ի գործս ձեր զչափ արժանաւոր՝ զի կարող լցէք տալ զհամար քանքարացն պարգևելոց ձեզ 'ի շնորհաբաշխողէն զձեզ աստուածամանութեամբ և Աբք Եպիսկոպոսութեամբ։

Ոկայէք ինձ ինքնին իսկ՝ թէ քանի՞ քանիցս խնդրեցի ես ձեզ՝ յամի 1813 'ի բաց կալ 'ի ցանկութենից անտի գնալոյ 'ի Կոստանդնուպօլիս. այլ զի ոչ գտին զտեղի 'ի միտս և 'ի կամս ձեր խնդիրքս իմ յայնժամ, զի՞նչ դուք շահեցայք ձեզ գնալովն ձեր անդ ըստ կամաց սրտից ձերոց։

Ոչ ախորժէք լսել ինձ՝ և ես չունիմ զնրաւունս պարտաւորելոյ զձեզ առ այն. այլ զի առաքելական դահակալութեամբ վերապատուեալ էք 'ի գլուխս պարու ժողովրդեան հաւատացելոց, լուարուք Առաքելական քարոզութենանցն. Իմաստութամբ գնասջիք առ արտաքինսն։

Ձիք դուք նախապատրաստեալ 'ի լինիլ արձադանք առանդրահնչելոյ զձայնս 'ի խրախճանս ձայնարկուաց. չէք դուք պարկատիղ կամ պարկապուտ՝ զի սեղմեալ յանութի՝ յայտնեսջիք զանձինս գործարան խաղարկուացն ձեռք՝ հնչելով 'ի հրապարակս զշունչ օտարաց։ Այս ևս համարեսցի վասն ձեր ոչ կորուսանել զշնորհ բանաւոր ընտրութեանց ըստ արժանի կոչմանց ձերոց։ Ձիք ոք բարեկամ ումեք առաւել քան զինքն. և հակադարձեալ Ձիք ոք թշնամի ինքեան առաւել քան զինքն. առ որ և վճիռք իմաստնոց հաւատարիմք են առամենեսեան. Ոչ ոք վնասի, եթէ ոչ յիւրմէ։ Դուք ուրեմն զգուշացէք ձեզ նախ 'ի ձերոց վնասուց. և վկայեսցեն ինձ խոկոյն հոգիք ձեր ամենեցուն՝ թէ չէ՞մ ես ձեզ թշնամի և ոչ դժկամակ և ատեցող բարեաց Աթոռոյն և Աթոռակալն նորին՝ որոց միշտ ճանաչեմ զանձն իմ պարտաւոր ամենայնիւ. և ակնկալ եմ՝ թէ և նոքին ճանաչեն նոյնպէս զնշանմարտութիւն բանից և խորհրդոց իմոց։ Ընթեռնուք զգրեալն. Ոչուք ոչ ինչ օգտեցան որք այնպէսն գնացին. և քաջալերեմ էք՝ թէ չէք օգտեալ ցայս վայր յանընտիր խորհրդոց կամ բանից և գործոց նախանցելոյ։ 'Ի փորձոյ անցելոցն արժան է առնուլ զչափ և հաւատալ բանիցս ճշմարտութեան. զի

հետևեալն այսուհետև ոչ միայն լենիցի ձեզ և սրբոյ Մայր Ս.Թոռոյ մերոյ անօգուտ, այլ չարաղոյն յոյժ յոյժ. զի ամենայն ազգի մերոյ Թափանցեալ եղեն մինչև ցոսկերսն ցայս վայր ժամանակի ցաւք սրտի ընկալեալ առ 'ի մէջն։ Ա'է գրեմ ես զայսոսիկ յաղագս օտար կարծեաց 'ի մասին Կաթուղիկոսութեան, այլ միայն վասն գործոյ գործեցելոց մինչև ցայսօր՝ յորս ոչ ինչ գովանի և զուարթաբար նշմարի երբէք 'ի ներքս Ս.Թոռն կամ արտաքոյ. շատ է մեզ չարի անարգութեանց հոգւոյ մերոյ, և շատ է հասարակութեան ազգի մերում երկայնմտութիւն նոցա առ մեզ այսչափ։

Իսկ ապա խնայեցէք սրբոյ Մայր Ս.Թոռոյ մերում և մի՛ լենիք կամարարք անձանց ձերոց կամ այլոց. այլ խոկացէ՛ք բարեպաշտ կամօք և ուղղեցէք իմաստութեամբ զկանխաւ՝ յորժամ և օգնականութիւն երկնից ոչ երկբայիմք թէ օժանդակեսցէ ամենայն բանից և գործոց մեր ամենեցուն։ Սուրբ և երկնային է պատգամն. Դարձարուք առ իս, և ես դառնամ առ ձեզ։

Զունիմ ես բնաւ զծածուկ իմն յիս վասն անձին իմոյ. այլ որպէս գիտէ ծածկագէտն՝ վասն բարեաց Ս.Թոռոյն և հասարակութեան եղբարց միաբանութեան և ամենայն ժողովրդեան ազգի Հայոց՝ միայն գասանիմ շատախօս այսչափ առ ձեզ 'ի բազում ամաց հետ։ Ա՛ւ 'ի վերոյ այսր ամենայնի թէ հնարն Աստուծոյ յաջողեսցէ մեզ զգալ իւրաքանչիւրոց զարժանաւորն իւրոց պարտաւորութեանց՝ և գումարիլ անդրէն 'ի մի միաբանութիւն բանից և խորհրդոց և գործոց, վերոյ զ Աստուած կացուցանեմ անձին իմոյ՝ զի անոնախանձաբար ամենեքին արիւնքնծայ եղբայր եմ ձեր և ամենեցուն որպէս յերեկին և յեռանդն. և յառաջընթաց յամենայն ձախողակս վասն բարեաց Ս.Թոռոյ մերոյ և Կաթուղիկոսի և ամենայն եղբարց միաբանութեան։ Ա՛յլ թէ զոցի վերապատուեալ մինչ խսպաս տարաձայնութիւնն 'ի սիրոս և 'ի կամս իւրաքանչիւրոց, յայնմ հետէ անակնկալ շնորհն Ս.մենաբաւականին միայն մնայ մեզ յայս վերկութեան յամենայն նեղութեանց մերոց կամ մահն հասարակաց։

Դրեալ եմ ես բաղմիցս՝ և 'ի վերջոյ ես յամի 1821. յուլիսի 9. առ սուրբ Ժողովն՝ թէ յամենայն ժամանակս այդպիսի կառավարութեանց Ս.Թոռոյն և սուրբ Ժողովոյ ձեր՝

գումարը պարտուց են սեպհական գանձք. ապա եթէ կառա-
վարութիւն Աթոռոյն սեպհականեսցէ երբեմն ինքեան զերբն
արժանաւորութիւն, և առանց իմ իսկ՝ դիւրահնար է ա-
զատ լինիլն նորա յամենայն պարտաւորութեանց իւրոց։ Գոբ-
բեալ եմ ընդ այսմ նոսա յիմաստն մասին՝ եթէ ցուցէք ինձ
միայն զպատկեր կառավարութեանց Աթոռոյ Էջմիածնի, և
այնպէս ապա հրամայեցէք ինձ բառնալ զամենայն զծանրու-
թիւն և զտօթ՝ վասն վայելչական կառավարութեանց Ա-
թոռոյն և ձեր։ Ցուցէք ինձ զպատկեր ձերոյ օգտակոհ կա-
ռավարութեանց, և հրաւիրեցէք զիս զանձն իմ իսկ դնել՝ ի
վերայ ձեր։ Օնոյն և այժմ գրեմ առ սուրբ Աղբայրու-
թիւն ձեր. և կամ մնամ ձեզ՝ ի վերայ ամենայն անցելոց
յիշատակելոց սուրբ Աղբայրութեան ձեր ամենախղճ՝ ի պատ։

Գերապատուութեան ձեր

Խոնարհ ծառայ Աբ. Եպիսկոպոս
Հայոց Վրացական Ներսէս։

1824. սեպտեմբերի 13.
՝ի Թիֆլիզ։

Պատասխանագրութիւն Ներսէս Աբ. Եպիսկոպոսի
առ Յովհաննէս Աբ. Եպիսկոպոսն Կարբեցի։

Ընծարու եղբօր իմում Տեառն Յովհաննու Սրբազան Աբ.
Եպիսկոպոսի և Ուսուցչաց Լուսաբարի՝ ի Տէր խնդալ։

Դ. 21. ամսոյս ընկալայ յարդմամբ զգրեալդ՝ ի 6 սորին.
և ուրախ եմ՝ ի վերոյ սիրելի առողջութեան ձեր տեղեկու-
թեան։

Լուծիչ իմոց տարակուսութեանց՝ ի մասին կտակի Գա-
ւիթ հօրն վասն հոգւոյ իւրոյ ոչ ինչ գտի բնաւ այսու այժմ։

այլ ոչ մեամ առանց յուսոյ ստանալոյ զկնի։

Պատանդն ընկալեալ յառաջագոյն առանց գրոյ մեայլ 'ի սարակուսի վասն աւանդողին, այլ այժմ 'ի Շատենանց պարսն Աւետիքի բերեալ գրութեանցն ծանեալք առաքեալ զայնս նուիրանք սիրոյ իւրոյ՝ բարեբաւութեամբ վերջհուշակեալ հարազատի Սրբազան Պօղոս Պատրիարգին Պօլսոյ սիրելի Կարապետ Աբեղ Եպիսկոպոսի. և շնորհակալ եմ յաղագս աշխատակրութեանց ձերոց առ հասուցանելոյ զայնս մեզ։

'Ի վերոյ անցիցն զորոց գրեալ թէ դատանքք հիացեալ և ապշեալ, ես ոչ բնաւ հիանամ և ոչ սքանչանամ։ զի հիանալի և սքանչելի են իրք կամ իրակութիւնք անակնկալք և և կամ գէթ անծանօթք զգայութեանց։ Իսկ ընդէ՞ր ուրեմն դուցէ հիանալի և սքանչելի թէ գալոցն եկեսցէ, ապառնին ներկայասցի և լինելոցն եղեսցի. այլ զինչ ապա թէ կանխաձայնեալքն Աստուծոյ և յաստուածայնոց կատարեսցին. կամ մանաւանդ յորժամ լոյս բանականութեանն ինքնին իսկ գոլով անդատին նախանկատ՝ վերստին ունիցի հիանալ և ապշել 'ի հասանիլ ժամանակի վերաժամանելոյ նկատելեացն։

Իսկ առ այն՝ թէ դուք և զայլսն կարէք մակաբերել զամենայն 'ի փորձ առեալ գոլով, ստուգութեամբ ասեմ զի ոչ զինչ բնաւ կարեմ մակաբերել աւելի քան զաւետարանեալն։ . . . միայն յիմանալն ազիտութեան խարիսիեալոմ ոչ տգիտանամ ասել՝ թէ այդ ամենայն սկիզբն է երկանց՝ և մեծագոյնս քան զդոյնս ոչ երկբայիմ թէ երկնեսցիք մերձ ընդ մերձ 'ի տիրապէս հիացումն և սքանչացումն ամենեցուն՝ քան զաղմաց։

Գերապատուութեան ձեր

խոնարհ ծառայ Աբրահամ Եպիսկոպոս Հայոց
Կ. Սոսոպոլոյ Նէրսէս։

1818. մարտի 24.
'ի Թիֆլիզ։

Թուղթ Ներսէս Ամբ. Արքեպիսկոպոսէ առ Բարձր Գերապատիւ Կոստանդն Ամենայնոյ։

Զեր Բարձր Գերազանցութիւն

Ողորմած Տէր

Աստուծոյ Պետրոսիչ։

Բարձրագահ գերաստիճան Ռեկլարբեկի Փաթալի խան եկեալ առիս յայտնեաց ինձ՝ թէ ունի ինքն զպարտաւորութիւն լսելոյ յինէն զկատարեալն վասն Թողլոյ զՊատրիարքական Աթոռն ամենայն Հայոց և հեռանալոյն աստ 'ի սահման Տերութեան Ռուսաց և հրաժարելոյն 'ի Պատրիարքական պարտաւորութենէն Տեառն Գրիգորիսոյ, և վասն վախճանական հնարից թէ զի՞նչ առնել արժան իցէ՝ զի կարելի լեցի վերադառնալ նմա յԱթոռ սուրբ Էջմիածնի և վարել դարձեալ զպաշտօն Պատրիարքութեան իւրոյ։

Այս նախ յուցանելով նորին Բարձրագահութեան զօրինակ հրովարտակաց նորին մեծութեան Փաթալի Շահին առ որդին իւր և ժառանգն վասն առատացուցանելոյ զնամակալութիւն իւր յաղագս ապահովացուցանելոյ զպատրիարքական Աթոռն և զՊատրիարքն և զամենայն զհոգևորականն նորին, 'ի նեղութենէն վերաժամանելոյ նոցին, ևս և զօրինակս հրովարտակաց ամենից իւրոց Աբբայական Բարձրութեան ժառանգի Տերութեան Պարսից վասն Գանձաւ յառաջ մնանելնաւորեալ զոլոյն նորա 'ի նոյնոսիսի կամս յատկացեալ խնամակալութենէն իւրոյ, յայտնեցի ապա նորին Բարձրագահութենէն՝ թէ վասն ծանրանալոյ 'ի վերայ Աթոռոյ Էջմիածնի և ամենայն հոգևորականաց նորա 'ի ներքոյ այնքան բարերար հովանաւորութենէն տերութենէն այն ամենայն բռնաւորութենէն իշխողաց Երևանայ զորոց յամին անցելոյ յայտնեալ եմ իւրոյ Աբբայական Բարձրութեան ժառանգի Տերութեան Պարսից Աստուած մերոյ Շահզատային, ևս և ձերում Բարձր Գերազանցութեանն ամենախոնարհաբար խնդրագրով խմբով հասար 130. 'ի 13. ամենեանն սեպտեմբերի, և վասն

գիշանալոյ մեծագուսար ծանրատոկոսի պարտուց 'ի պատ-
ճառս բռնաւորութեանցն և յատիշտակութեանցն նշանակելոյ,
իբրև այնպիսի զարհուրելի սպառնալիք ևս լուեալ է 'ի Պար-
տարէն՝ թէ լենթիւ ամենատառաւոր Կալաղերի կարող և
հզօր Ա.Հնողորմած Կայսերութեան Ռուսաց ունի խեղդել
զինքն, հնարեալ է հեռանալ 'ի Պատրիարգական Ա.Թոռոյն՝
զի թերևս կարողասցի դատանել զհնար ապահովացուցանելոյ
զանձն իւր և զԱ.Թոռն յանտանելի բռնաւորութեանց անտի
և պարտուց. այլ վասն տկարանալոյ առ այնս յաղագս բաղ-
մադիմի պատահմանց անձնականաց և արտաքնոց 'ի հասակի
ծերութեան իւրոյ, պարտաւորեցաւ հրաժարեցուցանել զանձն
և մնալ աստէն։ Իսկ վասնհանական միջոց վերադարձի նորա
անդրէն յԱ.Թոռ Պատրիարգութեան ամենայն Հայոց, ըստ
որում նա դատանի Պատրիարգացեալ ըստ կանոնաց Հայոց
օծութեամբ և ոչ սոսկ կոչմամբ, և չունի զիրաւունս առանձ-
նակաց, և ոչ բնաւ զկնոնս աղգայինս վասն հրաժարե-
ցուցանելոյ զանձն իւր յառաջ քան զվախճան կենաց իւրոց
առանց երևելի ինաստուց Պատրիարգական Ա.Թոռոյն և մեծա-
գոյն գայթակղութեանց և շփոթութեանց ամենայն աղգին
Հայոց որք ընդ ամենայն տեղիս, եթէ հաճեսցի նորին Բարձր
Գերազանցութիւնն Ա.Լեքսէյ Պետրովիչ Երմոլովն յանձն
առնուլ զաշխատանս վասն կարճելոյ զամենայն տարաձայնու-
թիւն՝ 'ի գործ դնել զպատուելի միջնորդութիւն իւր առ Ն.Ո-
րին Կայսերական Մեծութիւնն և առ Ժառանգն Տէրու-
թեան Պարսից Հովանաւորոյն Պատրիարգական Ա.Թոռոյ վասն
ապահովացուցանելոյ զնա և զԱ.Թոռն Էջմիածնի յաղագս
այն ամենայն բռնաւորութեանց և յատիշտակութեանց և
տպառնալեաց իշխողաց Երևանայ անցելոց և ապագայից՝ և
ամրացուցանելոյ զնոսա 'ի ներքոյ յաստուն խնամակալութեանց
իւրոյ Ա.Բարձրական Բարձրութեանն Ժառանգի Տէրութեան
Պարսից, ունի նա վերադառնալ յԱ.Թոռ իւր ըստ ամենայն
պարտաւորութեանց իւրոց առանց այլ ամենայն անձնական
պատճառանաց։

Ողորմած Տէր՝ յայտնելով զայս ամենայն Զերում Բարձր
Գերազանցութեանն, ըստ խնամի յատկացեալ պարտաւորու-
թեանց՝ համարձակիմ յայտնել և զսոյն, զի Պատրիարգական
Ա.Թոռն ամենայն Հայոց որ յԱ.ղարատ՝ դոլով յամենայն

ազգի Հայոց որպէս կեդրոն մի՝ առ որ համահաւասարեալ ա-
մենայն միաբանութիւն ազգին որը ընդ բոլոր շրջանակս տի-
եզերաց գտանին տարածեալք, մաթեայեալ են յետ վերջա-
նալոյ Թագաւորութեան իւրեանց նովաս միայն պահպանել
և ունիլ մինչև ցայսօր ժամանակի զարժանաւորութիւն ազգա-
կան ըստ ամենայն հարկաւորացն այնպիսի յատկութեամբ
իւրեանց՝ որպէս և ծանուցեալ գտանին յամենայն ազգաց ի
ամենայն տեղիս 'ի ներքոյ հովանաւորութեանց բազում տէ-
րութեանց՝ ազգ մի և հասարակութիւն՝ ոչ անօգուտ և ոչ
անարժան մարդասիրութեանց և բարերար հովանաւորութեանց
տէրութեանցն որոց գտանիցին հպատակք. ոչ անարժան գը-
տանի, թէ և Բարձր Գերազանցութիւն Ձեր չունիցիք խնա-
յել 'ի սմին պատահման զբարերարութիւն ձեր վասն միլի-
ոնաւոր հասարակութեանց ազգի Հայոց և այնչափ հնագոյն
Տաճարի Աստուծոյ և մեծահռչակ Պատրիարգական Աթոռոյ
նոցին, և յարգելի միջնորդութեամբ ձեր առ Նորին Կայ-
սերական Մեծութիւնն և առ ժառանգն Տէրութեան Պարս-
ից, շնորհ ունիցիք պաշտպանել զազգն և զԱթոռն Հայոց
յամենայն հետևեալ վտանգից կարծեցելոց կարելի հոգա-
ցողութեամբ և արժանաւոր անօրէնութեամբ իւիք ձերով ամ-
բացուցանել 'ի ներքոյ առանձնական յատուկ հովանաւորու-
թեանց հովանաւորողն նոցին ժառանգի տէրութեան Պարսից
Աստպաս միրզայ Շահզատայի զՊատրիարգական Աթոռն Էջ-
միածնի և զՀրաժարեալն յԱթոռոյ Պատրիարգութեան
միայն վասն անտանելի նեղութեանցն յայտնեցելոց ծերունին
Եփրեմ. հաւատալ է թէ բազում յօժարութեամբ իւրով
յատուկ պարտաւորութիւն ինքեան համարելով, կամի նա բա-
հաձոյս ամենայն հասարակութեան ազգի Հայոց վերադառնալ
զԱթոռ սուրբ Էջմիածնի։

Եւ ես եմ և մնամ իսկական պատուատրութեամբ

Ձերում Բարձր Գերազանցութեանն

յամի 1824. Խոնարհ Ծառայ Ա.ր
Սեպտեմբերի 13.
'ի Թիֆլիզ. Եպիսկոպոս Հայոց Վրաստանու Գրիգոր։

Պատասխանի Ալեքսէ Ամրիոյեանի առ Բարձր Գերազանց Կաթողիկոսն Ամենայն Հայոց։

Զեր Բարձր Գերազանցութիւն

Ողորմած Տէր

Ալեքսէյ Պետրովիչ։

Ընկալայ վերապատուութեամբ զգիր Բարձր Գերազանցութեան ձեր առ իս 'ի 29. անցեալ ամսեանն հոկտեմբերի 3405. համարաւ, հանդերձ ջրինակօքն գրութեանց անդամոց Միւնհոդոսին Աբրատեան Թոռոյ ամենայն Հայոց և Սարտարին Երևանայ, որովք հրաւիրեն զ Բարձր Գերազանցութիւն ձեր ստիպել զմեզ առաքել առ ինքեանս զպատմութիւն դրամոց ժողովեցեալս առ մեզ 'ի նուիրանոց ժողովրդոց Հայոց բնակելոց 'ի տերութեան Ռուսաց և Օսմանցւոց առհատուցումն պարտուց Թոռոյն։

Յաւիտ յոյժ՝ զի այսպիսի անվայելչութիւնք յանուն անդամոց Միւնհոդոսին Աբրատեան Թոռոյ տարածանին 'ի լսելիս Բարձր Գերազանցութեան ձեր կամ մանաւանդ հեռաւորաց անծանօթից այժմեան կառավարութեանց այնմ Թոռոյ ընդդէմ վերահաչակեալ արժանաւորութեանց նորին և վայելչութեանց հոգևորականութեանց ամենայն միաբանութեանց նորա ոչ միայն եղելոցն անդէն, այլև ամենեցուն որք գտանին արտաքոյ յամենայն վիճակս 'ի սահմանս իւրաքանչիւր տերութեանց։

Պանորոյ պարտաւորիմ յայտնել ամենայն Հնմարտութեամբ՝ ձերում բարձր Գերազանցութեանն Ողորմած Տէր, զի սուտ են այն ամենայն գրութիւնք յանուն միաբանութեան Թոռոյ Ենջմիածնի։ այլ որինչ ըստ հաճոյս իւր շարադրէ ինքն Սարտարն, զայնս տայ ստորագրել նոցա և տարածանէ առ ամենեսին՝ միայն 'ի վերայ իւրոց ցանկացեալ նպատակաց, վասն ազատ կացուցանելոյ զինքն և զիւրն յամենայն յինէն առ ձեզ և առ Սպասա միրզայ Շահզատայն բողոքեցեալ վնասուցն Թոռոյն. որպէս և յայտնի են յամենայն

յինքնին առխ և 'ի հոգևորականաց
Ն. Թիֆլիզ առ բաղումս, և առ հասարա-
կութիւս Հայոց եղելոց 'ի տերութեան Օսմանցւոց՝ յորս,
միաստապարտս Ս.Թոռոյն Ջանայ ապացուցանել զոչս Ռուսաց
և զբազմամիջտ ծերունին Երիցեմ։ Եւ առ սոյն կարող էք
հաւաստի լինել յինքնէնէ 'ի Բարձրագահ Բեկլար բեկի Ֆա-
թալի խանէն, զի զ.Օ աքարիա վարդապետ Թիֆլիզեցի քե-
ռորդի հանգուցեալ Կնեազ Միրիշքեաբ պաշն Յովսեփին
Բեհրուդեանց գոլով բանտարկեալ միայն վասն զբերելոյ նորա
առխ զծանօթութիւնս վասն հոգևորականաց ոմանց առանց
իւրոց հրամանաց, աղատեալ է գնա 'ի գնալն իւր Այ.Ջմիածնի
ինքն Բեկլարբեկին։ Եւ աւելի ևս քան զսոյն՝ կարող էք
լսել 'ի նորոց եկելոց Այրևանայ յառաքեցելոց 'ի Կնեազ
Սավարասմիդզէ. զի վասն այնմ զրութեան յիշեալ վարդա-
պետին որ գտանի ամենևին առանց իրիք պատկանաւորու-
թեանց կառավարութեան տէրութեանն կամ Սարտարին կա-
մեցեալ է Սարտարն արկանել 'ի Փալախայ և զ Երիցեմ Ս.Քր
Եպիսկոպոսն, համարելով թէ իցէ և նա կամակից այնմ
գրութեան որ գտանի արտաքոյ իւրոց հրամանաց։ Սոյին հա-
մաձայն կարող էք նկատել վասն սոյնպիսի նպատակաց Սար-
տարին և յայնմանէ՝ զի 'ի հրովարտակի Շահզուտային առ-
յիշեալ Բեկլարբեկին այժմ վասն պարտապահանջից Այ.Ջ-
միածնայ առաքելոյն առ նա այսր՝ գրեալ լինի թէ առաքե-
ցաւ ընդ նոսա և Պարդապետ մի, այլ բերօղն այնր հրովար-
տակի Ջ.ոփարխանբէկ հաւատարիմն Սարտարի՝ պատասխանէ
թէ Պարդապետն եղեալ ընդ մեզ 'ի միաբանից Այ.Ջմիածնի
հիւանդացեալ 'ի Ճանապարհի վերադարձաւ, որ է սուտա-
մենևին։ զի յառաջ քան զկատարումն ցանկութեան իւրոյ՝
Սարտարն Երևանայ բաց յերկուց կամ յերից իւրոց կամա-
բարաց, զայլ ոք 'ի միաբանութեանց Այ.Ջմիածնի ոչ բնաւ
թոյլատրէ գալ ասա՝ զի մի՝ և նորա ընդ իս գտանիցին բո-
ղոքաւորք և հրապարակօրք բռնաւորութեանց և զանազան վը-
նասապարտութեանց նորա, 'ի պատճառս որոց գտանի Պատ-
րիարգական Ս.Թոռն ամենայն Հայոց Ծանրապէս պարտաւո-
րեալ, և Պատրիարգն ևս տարագրեալ և հրաժարեալ։ Եւ
ոչ միայն այսչափ՝ այլև անդէն իսկ որսացեալ յիւր կամ
զամանս Ս.Քր Եպիսկոպոսաց խոստանալով պատրիարգացու-

ցանել զնոսին, և զոմանս 'ի Պարդապե-
ոադրութեամբ՝ արկեալ է յամենայն միաբանութիւն Աժ-
ռոյն զմեծ տարաձայնութիւնն, մինչև թշնամի միմեանց զա-
մենեսին զնոսա կացուցանել։

Ընդրմած Տէրն՝ ամենայն միաբանութիւնք հոգևորական-
նաց Աւարատեան Աթոռոյն ըստ ամենայն կանոնաց միաբա-
նութեան մի և նոյն իրաւամբք գտանին պարտաւորեալ վասն
ամենայն պատկանելոցն միաբանութեան իւրեանց և Աթո-
ռոյն. նոյնպէս և ամենայն հոգևորականք և մարմնաւորականք
Հայոց որք ընդ ամենայն տեղս, մի և նոյն իրաւամբք գտա-
նին պարտաւորեալ վասն ամենայն պատկանելոցն հաւատոյ
և եկեղեցւոյ իւրեանց կամ Պատրիարգական Աթոռոյն և
Պատրիարգին և կանոնաց նոցին։ Դու տէրութիւնք իւրաքան-
չիւրոց՝ որպէս Ռուսաց, նոյնպէս և Պարսից և Օսմանցւոց
վասն ամենայն պատկանելոցն հաւատոյ և կանոնաց քրիստո-
նէութեան կամ այլոց հաւատոց չունին զբռնադատութիւն
'ի դարուս ժամանակաց, որով և ամենայն հասարակութիւնք
իւրաքանչիւր ազգաց ընդ ամենայն տեղս գտանին տարա-
վայելալք 'ի ներքոյ հովանաւորութեանց իւրաքանչիւր տէրու-
թեանց որոց զտանին հպատակք։

Այլաբէն ես ինքն զալով միաբան որքոյ Էջմիածնի և
նախաձայն անդամ Այնհոգոյնն այնմ Պատրիարգական
Աթոռոյ՝ համանգամայն և վիճակաւոր Աբ Լուսաւորչի
տիեզերատարած հովանաւորութեան Ռուսաց, նոյնպէս և նա-
խապատիւ Աբ Լուսաւորչունք այնմ միաբանութեան գո-
լով Յասրեան, 'ի Ռեստարասլիայ, 'ի Պարաբաղ և յայլ
տեղիս վիճակաւորք. և բազումք ևս Յաբ Լուսաւորչունք և
'ի Արդասլանայ այնմ միաբանութեան գոլով վիճակաւորք
'ի տէրութեան Օսմանցւոց կամ 'ի յատուկ պաշտօնատա-
րութեան այնմ Պատրիարգական Աթոռոյ. և բազումք ևս
Լուսաւորչունք և 'ի Արդասլանայ գոլով արտաքոյ այնմ
Աթոռոյ առ մեզ առանձն և առ այլս վիճակաւորս ընդ ա-
մենայն տեղիս, զկնաչդ է կալելն թէ եղեալքն անպէն Յա-
թոռն Աւարատեան կարգաւորացին կամ յոժարակամութեամբ
իւրեանց և կամ բռնադատական յարաձգութեամբ Սար-
տարին Երևանայ յինքն կամ յայլսն ամենեսն խլել զե-

[illegible]ան պարտաւորութեանց մերոց։ Կամ զի-
[illegible] նոցա 'ի մէնջ յամենայն բազմութեանց հո-
գևորականաց և մարմնաւորականաց Հայոց խլել զերաւունս
ազգային պարտաւորութեանց առ հաւատն և առ եկեղեցին
կամ առ օրէնս քրիստոնէութեանց մերոց։

Ա. ՅԼ զի Պատրիարգական Աթոռն Արարատեան դատ-
նի 'ի նեբբոյ կառավարութեան Արտաբին Յրևանայ՝ վասն
ամենայն պատկանելոցն Արտաբական կառավարութեան իւ-
բոյ նա ինքն Արտաբն գիտասցէ որպէս և հաճոյ եղեալ ին-
քեան։ Իսկ վասն պատկանելոցն հաւատոյ կամ եկեղեցական
և Պատրիարգական կառավարութեանց և կանոնաց նոցին, և
կամ վասն ամենայն իրաց և հաշուոց Պատրիարգական Աթո-
ռոյն՝ որք դատանին ենթադրեալ իշխանութեան բնական կա-
նոնաց Պատրիարգական Աթոռոյն, աւելորդ է նորին Բարձ-
բագահութեան ձանձրացուցանելն զԲարձր Գերազանցու-
թիւն ձեր կամ զժառանգն տէրութեան Պարսից և կամ
զայլս՝ զանազան յօրինուածովք ստութեանց։

Օրէնք 'ի սկզբանէ վասն կառավարութեանց Պատրի-
արգական Աթոռոյն այս են. զի 'ի վաղճանել Պատրիարգի
կամ Կաթուղիկոսի՝ կնքեն զամենայն դղրունս Կաթուղիկո-
սարանին և գանձարանի նորա կամ եկեղեցւոյն, և զամենայն
դհաշիւս յատկացեալս Պատրիարգական կառավարութեանց։
Եւ միաբանք դասանցեալք անդէն յԱթոռն կամ արտա-
քոյ 'ի զանազան Տերութիւնս՝ իւրաքանչիւրքն 'ի վերայ իւ-
բեանց յատկացեալ պաշտօնատարութեանց որպէս և դատ-
նինն կարգեալք 'ի Պատրիարգէ յառաջագոյն, մնան նոյն-
պէս մինչև ց յաջորդել նորոգ Պատրիարգի համաձայնութեամբ
ամենայն հոգևորականաց և մարմնաւորականաց ընդհանուր
ազգի Հայոց։ Իսկ այժմ մինչ Օծեալ Պատրիարգն ամե-
նայն Հայոց ոչ գտանի վախճանեալ, այլ միայն հրաժարեալ
վասն անտանելի նեղութեանցն իւրոց և անարդութեանց և
ծանր պարտաւորութեանց Աթոռոյն՝ որ է ամենեին արտա-
քոյ օրինաց Պատրիարգաց Հայոց, նոր և առաջին օրինակ ան-
ծանօթ ամ հոգևորականաց և մարմնաւորականաց ազգի Հայոց։
Եւ՝ զպարտ կարգեալ 'ի նմանէ յառաջ քան զհրաժարումն նորա
Գլուխ և նախաձայն անդամ կառավարիչ ժողովոյն Աթոռ-
ոյ, յառաջ քան զտնօրէնութիւն ընդհանուր

Հասարակութեան աղքի Հայոց վասն Պատրիարքութեան
ոչոյն Աբրահամեան՝ հոգևորականք, կամ մանաւանդ գերիք
Սարտարին Երևանայ գտանեցեալքն անդէն Յ.Թոռն՝ չու-
նին զերբաւունս պահանջելոյ յենէն կամ յայլոց զինչս կամ
զհաշիւս պատկանեալս Պատրիարգական կառավարութեանց,
զի արտաքոյ է այն օրինաց մերոց։ Այս եթէ Սարտարն Ե-
րևանայ որպէս 'ի վերոյ ամենայն իրաց և հաշուոց պատկա-
նելոց Յ.Թոռոյ Յէջմիածնի կամ հոգևորականաց նորին կեն-
դանեաց և ննջեցելոց եղելոց անդէն 'ի ներքոյ իշխանութեան
իւրոյ. նոյնպէս և 'ի վերոյ ամենայն իրաց և հաշուոց կամ
հոգևորականաց եղելոց ատենն 'ի ներքոյ ամենաբարի հովա-
նաւորութեանց իւրոյ Կայսերական Սենատութեան ամենայն
Ռուսաց կարողացել տարածանել զբռնութիւն իւր, ձեր Խարճը
Գերազանցութիւնն կարէ զգացուցանել զայնմանէ ինձ և նմա։

Ա.յլ ես վասն ամենայն պատկանելոցն ինձ 'ի վերոյ
միաբանական կամ աղգային իրաւանց խնդ և կանոնաց նը-
շանակեցելոց 'ի վերոյ, ծանուցանեմ լիալիր հանգամանաք 'ի
պատասխանի այնմ գրութեանց Սարտարին և ցաւելի անդա-
մոց Միւնհոդասին Աբրահամեան Յ.Թոռոյ առ Խարճը Գե-
րազանցութիւն Ձեր, զի վասն հարկաւորացն յաղագս Պատ-
րիարգութեան՝ թող զայնս գրութիւնն զորս ընկալեալ է
ինքն ժառանգն Տէրութեան Պարսից 'ի ձեռն ձեր, քա-
նիցս ևս գրեալ եմ ես առ ինքն Սարտարն և առ հասա-
բակութիւն միաբանութեանց Յ.Թոռոյ Յէջմիածնի։ Գրեալ
եմ և առ Պատրիարգն Պոլսոյ և առ Ա.ռն Եպիսկոպոսունսն
Յ.Թոռոյ Յէջմիածնի որք 'ի Կոստանդնուպոլիս. և 'ի Ռու-
սաստան, և առ այլս բազումս. այլ զի յայտնի է ինքեան
Սարտարին՝ թէ հեռանալն Յ.Թոռոյ Յէջմիածնի և հրա-
ժարելն անդէն Օծեալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց դը-
տաւ պատճառեալ միայն յանողոր բռնակալութեանց իւր
և իւրոցն մերձաւորաց. որպէս գտանի բացատրեալ մի առ մի
յիմում բաղդաքրքի մատուցելոյ առ ձեզ և առ Հայանա-
ւորն այնմ Յ.Թոռոյ ժառանգն Տէրութեան Պարսից յամին
անցելոյ։ Ջանք նորա կայանան միայն՝ զի զամենայն անվա-
յելչութիւնն յաղագս ամի այնոցիկ կարողացի շրջել 'ի վր-
իմ կամ այլոց, իբրու զի մեք եմք բռնադատող և հրաժարեցու ցա-
նող և արգելող ատենն զ վերագնեալ ծերունին. զոր որպէս յա-

զս բարեբախտութեանց նորա 'ի լինելն Ս.Բ
Էպիսկոպոս 'ի Ռուսաստան՝ և 'ի լինելն յԱ.Թոռ Պատ-
րիարգութեան իւրոյ, նոյնպէս և այժմ 'ի տարաբախտ դրու-
թեան իւրում ունիմ ես յատուկ վերապատուութեամբ խոնարհ.
մինչև միաբանութիւնք Հայոց հասարակութեան ունկնդրին տը-
նօրինել զարժանաւորն վասն նորա և վասն Պատրիարգու-
թեան ամենայն Հայոց և Պատրիարգական Ս.Թոռոյն որ
յԱ.բարատ։

Ս.յԼ և յայտնեալ եմ կանխաւ յառաջ Ընդամենց
Միւնհոդոսին Պատրիարգական Ս.Թոռոյ և ամենայն միաբա-
նութեանց՝ թէ ըստ որում Ս.Թոռն Ի-ջմիածնի գտանի 'ի
ներքոյ իշխանութեանց Սարտարին, ես չունիմ խառնիլ բնաւ
'ի կառավարութիւնս այնպիսիս՝ որք վերաբերին առ կառա-
վարութիւնն Սարտարի. այլ վասն ամենայն պատկանելոցն
հաւատոյ, եկեղեցւոյ և Պատրիարգութեան ամենայն Հայոց
կամ Պատրիարգական Ս.Թոռոյն՝ որք չունին զվերաբերումն
առ մարմնաւոր կառավարութիւնն, յայնս ամենեսին ոչ որ
յամենայն միաբանութեանց իւրեանց չունի զերաւունս առա-
ւել քան զես։ Ծանուցեալ եմ ընդ այնմ և՝ թէ յամե-
նայն ժամանակս այնպիսի բռնաւորական յափշտակութեանց
և անտահման կառավարութեանց, Ս.Խաչն Ս.բարատեան յա-
մենայն Հայոց եղելոց 'ի Տէրութեան Ռուսաց բաց 'ի մանց
վասն լուսաւորութեանց Տաճարին՝ զայլ որպիսի և իցէ նուի-
րանս չունի ստանալ բնաւ։ Եւ վասն ստացելոցն ինչ 'ի Հնդ-
կաստանս կամ 'ի Տէրութենէ Օսմանցւոց՝ յայտնեալ եմ,
թէ առելի քան որքան ստացեալ եմ, հաստատեալ եմ պար-
տատարց՝ որոց զմուրհակսն ազատեալ ունիմ առելի
քան եօթանասուն և հինգ հազար Պարսից ռուպլի զոմանցս։
Ծանուցեալ եմ և զայն՝ թէ առանց համաձայնութեան ա-
մենայն հոգևորականաց և մարմնաւորականաց Հայոց եղելոց
յամենայն սահմանս Տէրութեան Ռուսաց և Օսմանցւոց օրի-
նակ առնելով զեղեալն յառաջագոյն համաձայնութեամբ նա-
խանցեալ իշխողին Երևանայ Մահմետ Խանի և ինքնակոչ
Դաւթի, չունի որ զվերաւունս ըստ հաճոյս անձին ի ս ոյ կամ
Սարտարին՝ անօրինել ինչ յաղագս Պատրիարգութեան։
Հայոց 'ի վերայ այսր ամենայնի գրութիւն նոցա առ Խարձր
Գ.Երազանցութիւն Զեր՝ զտանի որպէս զոչ ինչ լուեալ յի-

նէն բնաւ 'ի մասին ամենայնի այնոցիկ
ոնելով զնոցի վասն օգտի Աթոռոյն կամ
հոգևորականաց առ ամենայն անվայելչութիւն։

Աւելի քան զայն ոչ կարողանամ ես բուսականացու-
ցանել զնոսա ըստ ըղձի իւրեանց այլով ընդդէմ կանոնաց
Հայոց և մերումն սեպհական պարտաւորութեանց նշանակե-
լոց 'ի վերոյ։ Խարձր Գերազանցութիւն Ձեր տեղեկանա-
լով վասն ամենայն պատասխանատուութեանց իմոց նոցա մին-
չև ցայսօր ժամանակի, կարող էք որպէս կամիք կարձել յայսմ-
հետէ զայս ճանձրալի գրութիւն նոցա, և թէ կամք իցեն
տոյն այս գրութեան իմոյ օրինակն ևս յղել առ Սարտարն
չունի զնս ամաչեցուցանել առաջի նորա. այն զի և ես ու-
նիմ յղել առ անդամանն Պետրոսին և տարածանել առ
ամենայն ազգն Հայոց ընդ ամենայն տեղիս վասն կատարե-
լագոյն ծանօթութեանց ամենեցուն յաղագս ամենայն հար-
կաւորացն 'ի մասին իմ և 'ի զուր ամբաստանողացն զինէն։

Ողջ լեր և ես եմ և մնամ իսկական վերապատութեամբ

Խարձր Գերազանցութեան Ձեր

1824. նոյեմբերի 13. Խոնարհ ծառայ
'ի Թիֆլիզ։

Աբբ Եպիսկոպոս Հայոց Աջապանաց Ներսես։

ՀԱՅԿ ԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՌ ... ԳՈՒԱՐԱՆՏԱՍ ... ՄԱՍ

Էպիսկոպոսի Ղ.

ԼՐԻՊԱԿՎՐ.

Սխալ. 188 Ուղիղ.

Էջ.	տող		
5.	16.	Լչմիածնի,	ԷՋՄԻԱԾՆԻՆ.
6.	15.	Հանգամանից,	Հանգամանաց։
11.	15.	պահապանեցեալ,	պահպանեցեալ։
17.	22.	Հագուցելոցն,	Հանգուցելոցն։
18.	9.	գողելոյ,	գաղելոյ։
,, | 31. | աղատէ, | ազատէ։ |
21. | 37. | Հրգևորականք, | Հոգևորականք։ |
34. | 2. | դովութեանց, | գովութեանց։ |
,, | 26. | արձրութեան, | բարձրութեան։ |
38. | 1. | եալ, | ցեալ։ |
42. | 1. | աղատ, | ազատ։ |
45. | 2. | անսուա, | անսուտ։ |
58. | 24. | միաբնութ՝, | միաբանութեամբ։ |
75. | 7. | իրաւմբք, | իրաւամբք։ |
,, | 17. | 'ի գարուց, | 'ի դարուց։ |
76. | 23. | գտանեցեալք, | գտանեցեալք։ |
78. | 32. | համաձայնոսք՝, | համաձայնութ՝։ |

Проз.

ՀԱՅԳ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0022443